



ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ



Իրականացնող գործընկերներ՝

Համագործակցությամբ՝



Empowered lives.
Resilient nations.



**Զարգացման խանգարումներ և
հոգեբանական խնդիրներ ունեցող
երեխաներին տրամադրվող
հոգեբանական աջակցությունը**



Զարգացման խանգարումներ և հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաներին տրամադրվող հոգեբանական աջակցությունը: Ձեռնարկ: Երևան, 114 էջ:

«Մարդու Իրավունքների Իսթանբուլ և Պաշտպանություն» ծրագիր

Սույն ձեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Ձեռնարկի բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն ՊՈԱԿ-ը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Սույն ձեռնարկում արտահայտված տեսակետները պատկանում է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն ՊՈԱԿ-ին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵֆ-ի տեսակետների հետ:

**Հեղինակներ՝ Սիրանուշ Անտոնյան
Լիլիթ Թովմասյան**

Իրականացնող գործընկերներ՝

Համագործակցությամբ՝



Բովանդակություն

Նախաբան.....	7
Առաջին հանդիպման էությունը, փոխվստահության մթնոլորտի ստեղծում.....	9
Հոգեբանական հետազոտության ոլորտները և հետազոտման քարտի լրացման ձևաթուղթ.....	14
Հոգեբանական աջակցությունը հոգեխոսքային զարգացման խնդիրների դեպքում.....	21
Համակարգչային կախվածությամբ ուղեկցվող հոգեկան զարգացման խնդիրները և աջակցության առանձնահատկությունները.....	42
Աուտիստիկ սպեկտորի խանգարումներ, հոգեբանական աշխատանքը բնորոշ դրսևորումների դեպքում.....	56
Հուզականային ոլորտի խնդիրները և տրամադրվող հոգեբանական աջակցության սկզբունքները.....	81
Վարքային ոլորտում դրսևորվող խնդիրները, աշխատանքային մոտեցումներն ու հնարները.....	95
Վերջաբան.....	111
Գրականություն.....	112

Կարծիքներ ձեռնարկի մասին

Սիրանուշ Անտոնյանի և Լիլիթ Թովմասյանի կողմից համահեղինակած «Ձարգացման խանգարումներ եվ հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաներին տրամադրվող հոգեբանական աջակցությունը» ձեռնարկը հայ իրականության մեջ եզակիներից է, որն անդրադառնում է այսօր զարգացման խանգարումներ և հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատող պրակտիկ մասնագետների ուշադրության կենտրոնում գտնվող, առավել քննարկվող սկզբունքների և մոտեցումների շրջանակներին: Ձեռնարկում քննարկվող բոլոր մոտեցումները հիմնված են մասնագիտական բազմամյա պրակտիկայի վրա՝ միաժամանակ ունենալով գիտական-տեսական հիմնավորում:

Առավել նշանակալի է ձեռնարկում վեր հանված մասնագետների կողմից թույլ տրվող այնքան կարևոր մասնագիտական բացթողումներ, ինչպես օրինակ՝ ծնողի հետ աշխատանքում առաջ եկող վրիպումների և մասնագիտական էթիկական առանձնահատկությունների դիտարկումն է կամ մասնագիտական աշխատանքի նախնական փուլում զարգացման և հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաների հետ փոխվստահության ձևավորումը:

Յուրաքանչյուր անգամ հստակ ներկայացնելով խանգարումը կամ խնդիրը՝ հեղինակները ցուցաբերում են պատճառահետևանքային, վերլուծական մոտեցում՝ բացահայտելով դրանց առանձնակատկությունները և առաջադրում են մասնագիտական գործնական մոտեցումներ, լուծումներ, մեթոդական վարժություններ և խաղեր, որոնք գործնականում առավել հաճախ են եղել արդյունավետ համանման մարտահրավերների հանդիպելիս:

Ձեռնարկի մեկ այլ շատ էական առավելությունն է առաջին հանդիպման և այլ դեպքերում ի հայտ եկող խնդրահարույց վարքային դրսևորումների անդրադարձը, դրանց մասնագիտական, սակայն միևնույն ժամանակ պարզ և հանրամատչելի վերլուծությունը և մասնագիտական լուծումների մոտեցումները: Այսօր, ցավոք, շատ հազվադեպ կարելի է հանդիպել մասնագիտական հրապարակումների և ձեռնարկների, որտեղ կարելի է գտնել խնդրահարույց վարքերին վերաբերվող

մասնագիտական մոտեցումներ և դրանք հաղթահարելու գործնական առաջարկներ: Հատկանշական են նաև ձեռնարկում առկա մասնագիտական գործիքները՝ հետազոտման քարտի լրացման ձևաթուղթը, «CARS» ախտորոշման սանդղակի հայերեն թարգմանված տարբերակը, որն անգնահատելի աջակցություն է տվյալ ոլորտում աշխատող ցանկացած մասնագետի համար:

Հեղինակները նախ տալիս են հոգեբանական զարգացման խանգարումների առանձնահատկությունների բնութագիրը, այնուհետև մասնագետի ուշադրությունն են հրավիրում կարևորագույն կողմերին և վերջում քայլ առ քայլ առաջադրում հոգեբանական աջակցության ուղղություններ: Ս.Անտոնյանը առանձնացրել և դիտարկել է ամենաարդիական խնդիրներից մեկը՝ համակարգչային կախվածության հետևանքով առաջ եկող հոգեկան զարգացման խնդիրները, որոնք համեմատական վերլուծության է ենթարկվել հարակից խանգարումների հետ, ինչպես օրինակ՝ աուտիզմի սպեկտրի խանգարումն է, զարգացման ընդհանուր հապաղումն է, խոսքի զարգացման հապաղումն է, և ըստ այդմ, հավատարիմ մնալով ձեռնարկի տրամաբանությանը՝ կրկին առաջադրված է մասնագիտական աշխատանքի գործնական մոտեցումներ:

Ձեռնարկը հրաշալի գործնական ուղեցույց կհանդիսանա յուրաքանչյուր զարգացման և հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետի համար:

*«Իմ ուղին» ուսումնավերականգնողական կենտրոնի
վարքերի աջակցման ծրագրի համակարգող,
ԿՎՎ մասնագետ, մեթոդիստ Հ. Դիլանյան*

Կարծիք Ս.Հարությունյանի

Есть книги, читая которые начинаешь верить, что реальная наука всё ещё жива и создает свои «произведения» не для галочки, с огромным количеством заумных слов и терминов, а для блага, на доступном любому заинтересованному человеку языком. Пишутся такие книги во имя. Во имя детей, имеющих проблемы с миром и во имя их родителей, во имя специалистов, день и ночь работающих с этими детьми и их родителями, во имя того, чтобы мир стал просто более доступным и близким.

В современном мире, всё более и более развивающихся технологий, «Номо Confusus», «человек в растерянности», как точно называет современного человека Татьяна Черниговская, всё более и более теряет себя между реальностью и виртуальностью.

В этих условиях понятия нормы и патологии в психологии, и до этого не совсем понятные, по моему скромному мнению, становятся практически неразличимыми. Поэтому, данная книга, тем более ценна, что авторы подходят к анализу не с позиции системной методологии, а с точки зрения сетевой, предполагающей решение задачи, исходя из предмета анализа с опорой на различные теории и подходы.

Очень тонко подмечены все недочёты, которые может допустить психолог при первой встрече с родителями и детьми, а также даны подробные рекомендации, что на мой взгляд, есть залог дальнейшего успешного консультирования.

Работа усиливается тем, что каждое практическое заключение или рекомендация подкрепляются сильной методологической базой. Особенность данного методического пособия заключается ещё и в том, что равноценно представлены как описание, симптоматика, проявления «болезни» (как внешние, так и внутренние), так и по каждому конкретному направлению даны возможные варианты её решения с целым спектром практических упражнений.

Уверена, что данная работа и все усилия и любовь, вложенные авторами книги - Сирануш Антонян и Лилит Товмасян, получат достойный ответ и отклик в сердцах её читателей.

**Доктор психологических наук,
Профессор С. Ф. Арутюнян**

Նախաբան

Ներկայումս հոգեբանական տարբեր ուղղությունների շարքում լայնածավալ տարածում և նշանակալիություն է ձեռք բերել զարգացման հոգեբանությունը՝ պայմանավորված մի շարք գործոններով, այդ թվում՝ Հայաստանում ավելի քան 10 տարի ներդրված ներառական կրթության գաղափարախոսությամբ, զարգացման տարբեր խանգարումներ ունեցող երեխաների նկատմամբ հասարակության մարդասիրական և հանդուժողական վերաբերմունքի խթանմամբ, ծնողների կողմից իրենց երեխաներին տրվող հոգեբանական աջակցության կարևորմամբ և այլն: Այս ամենին զուգահեռ պետական և մասնավոր օղակներում ավելացել է աջակցության և զարգացման կենտրոնների թիվը, որոնք բազմամասնագիտական ծառայություններ են մատուցում զարգացման տարբեր առանձնահատկություններ ունեցող երեխաներին: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում կյանքի կոչել երեխաների հետ իրականացվող աշխատանքների տարբեր արդյունավետ հնարներ, նորարարական մոտեցումներ և սկզբունքներ: Կարևորվում է նաև աջակցող մասնագետների համար նախատեսված ձեռնարկների և մեթոդական ուղեցույցների մշակումը:

Հիմնվելով այս ոլորտում առկա տարբեր գիտական ուղղությունների և տեսությունների վրա /Ֆ. Ագաշ, Ն Անիկեևա, Լ. Վիգոտսկի, Մ. Մոնտեսսորի, Ս. Ռուբինշտեյն և այլոք/՝ անհրաժեշտություն առաջացավ ստեղծել ձեռնարկ, որում համապարփակ արտացոլված կլինեն զարգացնող և խորհրդատվական աշխատանքների առանձնահատկությունները՝ միտված հոգեբանական տարբեր ոլորտներում առկա խնդիրների հաղթահարմանը: Սույն ձեռնարկը կրում է տեսագործական բնույթ և ուղղված է մասնագիտական ծառայությունների արդյունավետության բարելավմանը: Այն ընդգրկում է տարբեր տեսական դրույթների վրա հիմնված և մասնագիտական փորձի ընթացքում մշակված հոգեբանական աջակցության սկզբունքներ, կիրառվող գործնական հնարներ, խաղ-վարժություններ և այլն: Ձեռնարկի մյուս առանձնահատկությունը զարգացնող և խորհրդատվական աշխատանքների միավորումն ու համատեղ ներկայացվածությունն է, ինչպես նաև՝ այն

մոտեցումը, որ զարգացման առանձնահատկություններով երեխաների հետ աշխատելիս առավել մեծ արդյունավետություն գրանցելու համար ցանկալի է փոխլրացնել, փոխկապակցել ու համատեղել զարգացնող և հուզականային, վարքային և հաղորդակցման խնդիրներին ուղղված աշխատանքների իրականացումը:

Այն նախատեսված է հոգեբանական խնդիրներ և զարգացման տարբեր առանձնահատկություններ ունեցող երեխաներին աջակցություն տրամադրող հոգեբանների, ինչպես նաև՝ ծնողների և հոգեբանական կրթություն ստացող ուսանողների համար:

Առաջին հանդիպման էությունը, փոխվստահության մթնոլորտի ստեղծումը

Հոգեբանական աշխատանքների արդյունավետ կազմակերպումը պայմանավորված է ծնողի և երեխայի հետ առաջին հանդիպման ընթացքով: Ներկայացնենք իրավիճակ, երբ հոգեբանը նստած է սենյակում, և ներս է մտնում այցելուն՝ իր մայրիկի կամ հայրիկի հետ: Ինչպիսի՞ն պետք է լինի մասնագետի մոտեցումը: Որպես հարգանքի նշան՝ ցանկալի է, որ հոգեբանը կանգնի նստած դիրքից և դիմավորի այցելուներին, ապա ծնողին մի փոքր ներկայացնի իրեն և, թե ինչպես են աշխատելու, օրինակ՝ «Ես Լուսինեն եմ, հոգեբան, սա մեր սենյակն է, որտեղ մենք աշխատելու ենք, սրանք մեր խաղերն են, որոնցով մենք խաղալու ենք...», իսկ հիմա ես կցանկանայի երեխայի հետ ծանոթանալ, ավելի մտերմանալ, մենք մի փոքր կխաղանք, հետաքրքիր թեմաների մասին կգրուցենք, իսկ Ձեզ՝ դիմում է ծնողին, կխնդրեի սպասարահում սպասել, քիչ հետո միասին ավելի մանրամասն կգրուցենք»: Իհարկե, սա ամենափդեալական տարբերակն է, երբ ոչ մի դժվարության չես հանդիպում:

Ինչպիսի՞ վրիպակներ կարող է թույլ տալ հոգեբանը զարգացման տարբեր խանգարումներ կամ հոգեբանական խնդիրներ ունեցող երեխայի ծնողի հետ զրուցելիս:

Ցանկալի չէ երեխայի ներկայությամբ ծնողին հարցնել՝ ինչ խնդիր ունի երեխան, ինչու է այսպես «նյարդային», զգացվում է, որ «պրոբլեմային երեխա է» և նման արտահայտություններ և առհասարակ՝ քննարկել երեխայի անձնային և վարքային առանձնահատկությունները նրա ներկայությամբ:

Երեխային տարբեր ածականներով պիտակավորելը նույնպես հարկի չէ, օրինակ՝ «Ձեր երեխան ծույլ է, բարդությամբ լորված, ագրեսիվ» և այլն: Ծնողը, այցելելով հոգեբանին, արդեն որոշ չափով ընդունում է, որ իր երեխան ունի խնդիրներ և անհրաժեշտություն չկա անդադար շեշտել նրան այդ մասին, նա դիմել է օգնության և ակնկալում է, որ հոգեբանը կհասկանա իրեն:

Իհարկե, լինում են դեպքեր, երբ ծնողը հերքում է իր երեխայի մոտ

տարբեր խնդիրների առկայությունը և իր դաստիարակության ոչ արդյունավետ մոտեցումը այդ հարցում՝ իր թերացումը: Տվյալ դեպքում հոգեբանը հարցերի միջոցով պետք է օգնի, որ ծնողը ընդունի իր դերակատարումը երեխայի խնդրի առաջացման և լուծման հարցում, ինչպես նաև՝ իր փոխվելու անհրաժեշտությունը: Հոգեբանը պետք է նշի, որ երեխայի հոգեբանական դժվարությունների հաղթահարման համար ծնող-մասնագետ համագործակցությունը անհրաժեշտություն է, իսկ վերջինիս գիտակցման համար ցանկալի է ծնողի հետ միասին վերլուծել երեխայի հուզավարքային դրսևորումները, քննարկել երեխայի հակազդումները ծնողի այս կամ այն մոտեցման դեպքում՝ որ դեպքում է ավելի դրական արձագանքում, ում հետ է ավելի հանգիստ, ում հետ կոնֆլիկտային, ինչու և այլն:

Եթե երեխան նստունակ է և չունի ակնհայտ վարքային խնդիրներ, ցանկալի է հրավիրել նրան սեղանի շուրջ և, եթե սեղանը շատ մեծ չէ, առաջարկել նստել դեմառդեմ: Մեկ այլ դեպքում՝ հոգեբանը կարող է նստել սեղանի վերին մասում, իսկ երեխան սեղանի աջ կամ ձախ անկյունում. նա պետք է զգա հոգեբանի հեղինակությունը (չշփոթել գերակայության հետ):

Եթե երեխան ակտիվ է և շատ փոքր, ցանկալի է, որպեսզի հոգեբանը նրա հետ միասին շրջի սենյակում և ծանոթացնի իրերին ու խաղալիքներին՝ նրա մոտ վստահության մթնոլորտ ձևավորելու նպատակով: Ակտիվ երեխաներին գրավելու և վարքը կարգավորելու լավագույն միջոցը չափազանց հետաքրքիր խաղն է կամ իրը: Եթե երեխան կամակորություններ է անում և չի ցանկանում խաղալ հոգեբանի նախընտրած խաղը, հարկ չկա ստիպել նրան անել այդ. այդպիսով մասնագետը ավելի կամրապնդի նրա կամակոր վարքագիծը: Առաջնային վստահություն ձեռք բերելու համար ցանկալի է երեխայի հետ միասին խաղալ իրեն հետաքրքրող առարկաներով:

Առհասարակ՝ սկսնակ հոգեբանների համար ցանկալի է, որ առաջին հանդիպման ընթացքում խաղալիքները դրված լինեն փակ պահարաններում, որպեսզի երեխայի կամակորությունները չակտիվանան, հատկապես, երբ երեխաները ունեն ուշադրության կենտրոնացման խնդիր, շուտ շեղվում են և այլն:

Ինչպե՞ս վարվել, եթե երեխան լաց է լինում և մայրիկին է ուզում:

Նման դեպքում հարկ չկա անմիջապես առանձնացնել երեխային մորից ու ստիպել, որ մնա մենակ, այդպես նրա անապահովության զգացումն ավելի կարտահայտվի: Կարելի է երեխային ծնողի հետ մենակ թողնել սենյակում, որպեսզի երեխան օտար մարդու ներկայությունից չկաշկանդվի և մայրիկի հետ միասին ծանոթանա տարածքին: Այնուհետև՝ աննկատ, առանց արտառոց մուտքի՝ օրինակ՝ «ես եկա» բացականչելով, մասնագետը կարող է մտնել ներս՝ երեխային հատուկ ուշադրություն չդարձնելով և, վերցնելով գնդակը կամ այլ իր, խաղալ մայրիկի հետ, հետո փոխանցել իրը երեխային և այդպես, միասին համագործակցելով, խաղալ այնքան, մինչև երեխան ընտելանա հոգեբանին, և մայրիկը աննկատ հեռանա սենյակից: Այս պարագայում մասնագետի համար առաջնայինը ճկունությունն է և չշփոթվելը, եթե չի ստացվում որևէ տարբերակ, պետք է փորձել մյուսը, դժվար թե միևնույն մոտեցումը արդյունավետ լինի բոլոր երեխաների դեպքում:

Իրավիճակներից մեկում, երբ երեխան առաջին հանդիպմանը անդադար լաց էր լինում և չէր ցանկանում ներս մտնել կենտրոնի տարածք, մասնագետը վերցրեց գնդակը, դուրս եկավ բակ, որտեղ նրա պապիկի հետ սկսեց խաղալ, հետո՝ գնդակը փոխանցեց երեխային՝ շարժելով երեխայի հետաքրքրությունը, ապա՝ գնդակը գցեց դռան մուտքի մոտ՝ նրան աստիճանաբար մոտեցնելով մուտքին, այնուհետև՝ գնդակը գցեց ներս ու երեխան մտավ կենտրոն:

Մեկ այլ իրավիճակում, երբ երեխան չափազանց կամակոր էր և կախվածություն ուներ մեքենաներից, մասնագետը սկսեց այդ մեքենաներով դերասյուժետային խաղեր կազմակերպել՝ ճանապարհ կառուցել, մեքենայով գնալ կրպակ, մրգեր և բանջարեղեններ գնել և տեղադրել մեքենայի մեջ: Երբ երեխան արդեն համագործակցում էր մասնագետի հետ, հոգեբանը նրան առաջարկեց նստել սեղանի շուրջ, մեքենան դնել սեղանի վրա. երեխան պետք է զգա, որ սիրելի խաղալիքը իր մոտ է: Այնուհետև՝ մասնագետը փոխարինեց մեքենաներով խաղը իր նախատեսած խաղով:

Ուստի, առաջին հանդիպման ընթացքում դժվարություն ներկայացնող իրավիճակներում մասնագետը ցանկալի է առաջնորդվի երեխայի

հետաքրքրությամբ, այնուհետև՝ առաջարկի այդ հետաքրքրության հետ կապ ունեցող այլ իրական գործողություն, ապա, ավելացնելով իրական հետաքրքրությունը, մեկուսացնի երեխայի նախնական հետաքրքրությունը, տվյալ դեպքում՝ մեքենաները:

Աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող երեխայի հետ առաջին հանդիպումը կազմակերպելիս, երբ նա անդադար շարժվում է, լաց լինում, պետք է հասկանալ, թե ինչն է նախորդել այդ լացին, ինչն է պատճառը և ինչպիսի վարք է դրսևորում մասնագետը, որ չի դադարում նրա լացը: Մեծամասամբ դա լինում է կամ՝ անապահովության զգացումը, կամ՝ մեծահասակի ուշադրությունը գրավելու միտումը: Վերջին դեպքում՝ ուշադրություն չդարձնելու պարագայում այդ վարքը կարող է դադարել, իսկ եթե պատճառը անապահովության զգացումն է, սենյակի, խաղերի ծանոթացումը օգնում է, որ վարքը դադարի: Ցանկալի է առաջին հանդիպման ընթացքում հարցնել ծնողին՝ ինչ է սիրում երեխան. դա կարող է լինել նույնիսկ համակարգիչը, կամ հեռախոսը: Նախնական կոնտակտի ստեղծման համար կարելի է կիրառել յուրաքանչյուր անվտանգ իր, նույնիսկ՝ հեռախոսը, ապա՝ աստիճանաբար փոխարինել այդ իրը մեկ այլ իրով: Բացի այդ, այս երեխաների հետ փոխվստահություն առաջացնելու համար շատ արդյունավետ է կիրառել զգայական խաղերը՝ ոսպը, բրինձը, կինետիկ ավազը, խմորը և այլն:

Եթե երեխան սիրում է համացանցային հոլովակներ, կարելի է սկզբնական շրջանում համատեղ դիտումներ կազմակերպել, ապա հոլովակներում առկա պարագաները տեղադրել սեղանի վրա, օրինակ՝ խմորը՝ առաջարկելով միաժամակ նայել և պատրաստել այն, ինչ տեսնում է հոլովակում, ինչից հետո էլ առանց հոլովակը դիտելու նոր պարագաներ պատրաստել:

Տարիքով ավելի մեծ երեխաների հետ՝ 12 տ. և բարձր, առաջին հանդիպումն ու հոգեբանական հետազոտությունը ցանկալի է իրականացնել սեղանի շուրջ, իսկ հաջորդ հանդիպումները դեմ դիմաց տեղադրված բազկաթոռներին: Վերջինս կախված է երեխայի զարգացման աստիճանից, նրա խնդրի բնույթից, հետաքրքրություններից և ընդունակություններից:

Եթե երեխան ունի նկարչական ընդունակություններ, հոգեբանը ցանկալի է նկատի այդ և խորհրդատվական աշխատանքները կազմակերպի նկարչական աշխատանքների օգնությամբ, եթե երեխան ակտիվ է և սիրում է տիկնիկներ, տարբեր խամաճիկներ, նպատակահարմար է աշխատանքները իրականացնել դերային խաղերի օգնությամբ:

Այն դեպքում, երբ զարգացած է երեխայի տրամաբանական, վերլուծական մտածողությունը, ցանկալի է աշխատանքները իրականացնել ոչ թե խաղի, այլ՝ զրույցի միջոցով:

Այսպիսով՝ հոգեբանական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հիմնաքարը այցելուի հետաքրքրությունների և ընդունակությունների բացահայտումն ու նրա հետ փոխվստահության մթնոլորտի ստեղծումն է, որին հաջորդում է հոգեբանական հետազոտության պլանավորումն ու իրականացումը:

Հոգեբանական հետազոտության ոլորտները և հետազոտման քարտի լրացման ձևաթուղթը

Հոգեբանական հետազոտությունը հոգեկան երևույթների գիտական ուսումնասիրությունն է, այն ընթանում է հետևյալ փուլերով.

1. հետազոտության նպատակի, խնդիրների ձևակերպում,
2. հետազոտության իրականացում՝ հետազոտության տվյալների հավաքագրում և մշակում,
3. հետազոտության տվյալների վերլուծություն,
4. հետազոտվողի հոգեբանական բնութագրի կազմում:

Հոգեբանական հետազոտությունն ընթանում է մի քանի ոլորտներով.

1. Իմացական ոլորտ
2. Հուզականային ոլորտ
3. Շփման և հաղորդակցման ոլորտ
4. Վարքային ոլորտ:

Իմացական ոլորտի հետազոտումն իր մեջ ներառում է երեխայի հետևյալ իմացական գործընթացների ուսումնասիրումը.

1. **Զգայություն և ընկալում:** Դիտարկվում և ուսումնասիրվում է երեխաների զգայական ակտիվությունը, մասնակցությունը, ընկալման իմաստավորվածությունը, ամբողջականությունը, պարզ և բարդ հրահանգների ընկալումը, առարկաների ընկալումը ըստ նշանակության և այլն:
2. **Ուշադրություն:** Ուսումնասիրվում են ուշադրության որակները՝ կենտրոնացվածությունը, կայունությունը, տեղափոխելիությունը, բաշխվածությունը, ծավալը: Ինչպես նաև՝ հետազոտվում են ուշադրության տեսակների՝ կամաձին, ոչ կամաձին ուշադրության զարգացվածության մակարդակը:
3. **Հիշողություն:** Հոգեբանական հետազոտության ընթացքում ուսումնասիրվում է հիշողությունը ըստ տեսակների՝ պատկերավոր, հուզական, զգայական, բառատրամաբանական և այլն, ըստ ժամանակի՝ կարճատև, երկարատև, միջանկյալ: Կարճատև հիշողության ծավալը: Ինչպես նաև հիշողությունը ըստ միջոցի՝ միջնորդա-

վորված, ոչ միջնորդավորված: Ուսումնասիրվում են նաև երեխայի մտապահման և վերարտադրման գործընթացները:

4. Մտածողություն: Ուսումնասիրվում են մտածողության տեսակները՝ ակնառու-գործնական, ակնառու-պատկերավոր, վերացական-տրամաբանական: Ինչպես նաև՝ մտածողության որակները՝ մտքի արագությունը, մտքի ճկունությունը, մտքի հետևողականությունը, մտքի ինքնորոշվածությունը, մտքի քննադատականությունը և այլն: Դիտարկվում են նաև մտածողության ձևերը՝ հասկացություն, դատողություն, մտահանգում, ինչպես նաև՝ մտածողության բովանդակությունը:

5. Երևակայություն: Հետազոտվում է երևակայության մեխանիզմները, վերացարկման ունակությունները, ստեղծարարությունը, ֆանտազիաները և այլն:

Հոգեբանական հետազոտության ընթացքում ուսումնասիրվող **հաջորդ ոլորտը հուզականային ոլորտն է:**

Հետազոտվում են երեխայի հետևյալ հուզականային դրսևորումները.

1. տագնապայնության աստիճանը,
2. տրամադրության ընդհանուր ֆոնը,
3. հուզական վերաբերմունքը խրախուսանքին և նկատողություններին, հաջողություններին և անհաջողություններին,
4. հուզական հակազդումների համապատասխանությունը իրավիճակին,
5. վախերի արտահայտվածությունը, համապատասխանությունը տարիքային նորմերին, առաջացման պատճառները, հետևանքները,
6. ինքնագնահատականն ու ինքնաընկալումը,
7. ընտանեկան փոխհարաբերությունների հուզական կողմը:

Հաջորդը հետազոտվում է **շփման և հաղորդակցման ոլորտը:**

Հետազոտվում են երեխայի հաղորդակցման հետևյալ առանձնահատկություններն ու դրսևորումները.

1. շփման հմտությունները,
2. բավարարվածությունը շփումից,
3. շփման, աֆֆիլյացիայի դրդապատճառները,

4. հավակնությունների և հնարավորությունների համապատասխանությունը,
5. հաղորդակցման դժվարությունների պատճառներն ու հետևանքները,
6. ներընտանեկան փոխհարաբերությունները, դաստիարակության ոճը,
7. փոխհարաբերությունները հասակակիցների, իրենից փոքրերի և մեծահասակների հետ,
8. սոցիալական հարմարման մակարդակը:

Հոգեբանական հետազոտության ոլորտներից է նաև **վարքային ոլորտը:**

Վարքային ոլորտն ընդգրկում է հետևյալ դրսևորումների ուսումնասիրությունը.

1. ագրեսիայի արտահայտման մակարդակ,
2. ինքնապաշտպանական հմտություններ,
3. կոնֆլիկտային իրավիճակներում վարքային ռազմավարություններ,
4. սեռադերային վարքի առանձնահատկություններ,
5. վարքային հակումներ և սովորություններ:

Հետազոտության տվյալների հավաքագրումից հետո տեղի է ունենում տվյալների մշակում՝ ըստ հետազոտության տվյալների քանակական և որակական վերլուծության, որին հաջորդում է հետազոտվողի հոգեբանական բնութագրի կազմումն ու աջակցության ոլորտների սահմանումը՝ ըստ հետևյալ առաջարկված ձևաթղթերի:

Հոգեբանական առանձնահատկությունների հետազոտում

Երեխայի անուն, հայրանուն, ազգանուն

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ

Հաստատության անվանումը

Հոգեբան

Զգայություն և ընկալում /զգայական ակտիվությունը, մասնակցությունը՝ տեսողություն, լսողություն, համ, հոտ, շոշափելիք, հավասարակշռություն, ցավի զգացողություն, ընկալման իմաստավորվածությունը, ամբողջականությունը, պարզ և բարդ հրահանգների ընկալումը, առարկաների ընկալումը ըստ նշանակության և այլն/

Ուշադրություն /ուշադրության կենտրոնացվածություն, կայունություն, բաշխում, տեղափոխելիություն, կամաձին և ոչ կամաձին ուշադրություն/

Հիշողություն /կարճատև հիշողության ծավալ, մտապահման և վերարտադրման գործընթացներ, հիշողության տեսակ, զուգորդությունների համարժեքություն/

Մտածողություն և երևակայություն / մտքի ճկունություն, արագություն, հետևողականություն, մտածողության տեսակ, գործողությունների պատճառահետևանքային կապերի գիտակցում, ինտելեկտի զարգացման մակարդակ, վերլուծահամադրական գործընթացներ, ստեղծարար մտածողություն, երևակայության մեխանիզմներ/

Հուզականային ոլորտ /հուզական դրսևորումներ, տագնապայնություն, վախեր, ֆոբիաներ, տրամադրության ֆոն, հուզական հակազդումներ, կամային որակներ, ինքնաընկալում, ինքնագնահատական/

Շփման և հաղորդակցման ոլորտ /շփման հմտություններ, աֆֆիլյացիայի դրդապատճառներ, միջանձնային փոխհարաբերություններ փոքրերի, հասակակիցների և մեծահասակների հետ, ներընտանեկան փոխհարաբերություններ, դաստիարակության ոճ, սոցիալական հարմարում/

Վարքային ոլորտ /ագրեսիայի արտահայտման մակարդակ, վարքի վերահսկողություն, վարքային դրսևորումների ադեկվատություն, ինքնապաշտպանական հմտություններ, վարքային սովորույթներ, շեղվող վարքային հակումներ, կոնֆլիկտային իրավիճակների հաղթահարման մեխանիզմները, սեռադերային վարքի առանձնահատկություններ, ակտիվության մակարդակ/

Ուսման նկատմամբ վերաբերմունք /Հետաքրքրություններ, կրթական դրդապատճառներ, հմտություններ, մասնագիտական կողմնորոշում/

Չրույց /խոսքային հաղորդակցման առանձնահատկություններ, զրույցի ենթատեքստի ընկալում, փոխաբերական իմաստների ընկալում, զրույցի ընթացքում սահմանի և տարածության զգացում, զրույցի բովանդակային ադեկվատություն/

Օգտագործված գործիքներ՝

- ## Հոգեբանական աջակցության ուղղությունները

20

Հոգեբանական աջակցությունը հոգեխոսքային զարգացման խնդիրների դեպքում

Հոգեկան զարգացման խնդիրների շարքում իրենց առանձնահատուկ դերն են զբաղեցնում հոգեխոսքային զարգացման խնդիրները: Այս խնդիրները յուրահատուկ են այն իմաստով, որ անմիջականորեն փոխալայմանավորված են խոսքի ուշացման հետ: Լինելով բարձրագույն հոգեկան գործընթաց՝ խոսքը էականորեն պայմանավորում է մյուս բարձրագույն հոգեկան գործընթացների զարգացումը, մասնավորապես՝ սերտորեն կապված է մտածողության գործընթացի և գիտակցության հետ, ուստի՝ խոսքի և հոգեկան գործընթացների զարգացումը տեղի են ունենում համընթաց, և մեկի ուշացման հետևանքով դանդաղում են նաև մյուսի զարգացման տեմպերը:

Խոսքն, իր վրա վերցնելով երեխայի և մեծահասակի միջև հաղորդակցման գործառույթը, հիմք է ստեղծում մտածողության զարգացման համար, ապահովում է երեխայի վարքի պլանավորման և կարգավորման հնարավորությունը, գիտակցված գործունեության, ողջ հոգեկան կյանքի կազմակերպումը, ազդում է ամբողջությամբ վերցրած անձի վրա: Ուստի, խոսքի զարգացման տեմպերի դանդաղումը ազդակներ է հաղորդում և զգուշացնում մեծահասակներին, որ երեխայի հոգեկան զարգացման գործընթացում հնարավոր են ծագել բազմաթիվ դժվարություններ և խնդիրներ: Հայտնի է, որ երեխայի խոսքի զարգացման զգայուն շրջանը համարվում է 0-6 տարեկանը, մասնավորապես՝ առանձնացվում է 1,5-3 տարեկանը՝ որպես խոսքային ընդունակությունների զարգացման կենտրոնական տարիք, երբ երեխան առավել զգայուն է, ընկալունակ և պատրաստ խոսքի յուրացման համար: 1 տարեկանում երեխան մեծահասակների հետ հաղորդակցվելու միջոցով ակտիվորեն լսում և հարստացնում է իր պասիվ բառապաշարը, իսկ մոտավորապես 3 տարեկանում արդեն ինքն է հստակ և ակտիվորեն հաղորդակցվում խոսքի միջոցով: Հետևաբար, եթե մինչև 3 տարեկանը երեխան չի խոսում, մեծահասակները պետք է անհանգստանան և դիմեն մասնագետների օգնությանը:

Այժմ անդրադառնանք հոգեխոսքային զարգացման խնդիրներ ու-

նեցող երեխաների հոգեկան զարգացման առանձնահատկություններին:

Հոգեկան զարգացումը նման երեխաների մոտ բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով.

1. Այսպիսի երեխաները վաղ հասակում առանձնանում են ուշադրության անկայունությամբ, թույլ կենտրոնացվածությամբ, ոչ կամաձին ուշադրության զարգացման ցածր մակարդակով, հաճախ են ուշադրությունը մի առարկայից տեղափոխում մյուսին, անուշադիր են, հաճախ չեն արձագանքում ձայնին, անվանը, կարծես թե չեն լսում: Այս երեխաների աշխատունակությունը ցածր է, նրանք շուտ են հոգնում:
2. Հիշողության գործընթացները թույլ են զարգացած: Կարճատև և երկարատև հիշողության ծավալը նեղ է: Կամաձին և ոչ կամաձին մտապահման արդյունավետությունն ավելի ցածր է՝ ի համեմատ բնականոն զարգացմամբ երեխաների:
3. Երեխան շատ դանդաղ է մտածում, դժվարությամբ է խոսքեր գտնում արտահայտվելու համար: Նման երեխաները դժվարությամբ են հասկանում երկարժեք մտքերը, դարձվածքները, մտածողությունը ճկուն չէ, ամեն ինչ հասկանում են ուղիղ իմաստով, դա է պատճառը, որ հաճախ ծնողները նկարագրում են երեխային որպես միամիտ: Նրանք հաճախ չեն հասկանում հարցի իմաստը և տալիս են հարցի հետ բովանդակային կապ չունեցող պատասխաններ, հաճախ ունենում են զրույցի թեմայի հետ իմաստային կապ չունեցող զուգորդություններ, օրինակ, երբ զրուցում ես «ընտանիք» թեմայով, նրանք կարող են անտեղի միտք արտահայտել կենդանիների մասին, կամ հարցին՝ «Ովքեր են ապրում ձեր ընտանիքում», կարող է հնչել պատասխան՝ «մեր տունը գտնվում է ծառերի մոտ»: Մտավոր օպերացիաների՝ վերլուծության, սինթեզի, վերացարկման մակարդակը ցածր է: Կապակցված խոսքը նույնիսկ մեծ տարիքում թույլ է զարգացած և կարող է ուղեկցվել շարահյուսական և ձևաբանական սխալներով:
4. Հոգեխոսքային զարգացման խնդիրներ ունեցող երեխաների ստեղծարար մտածողությունը նույնպես թույլ է զարգացած, քանի որ դժ-

վարանում են կապեր ստեղծել երկու տարբեր առարկաների միջև: Նրանք ընկալում են առարկաների հիմնական նշանակությունը՝ աթոռը միայն նստելու համար է, լուցկին միայն վառելու, բաժակը միայն խմելու, տետրը՝ միայն գրելու: Նրանք դժվարանում են պատկերացնել, որ բացի հիմնական ֆունկցիաներից, առարկաները կարող են կիրառել նաև այլ նշանակությամբ, օրինակ՝ տետրով կարելի է հով անել:

5. Հուզականային ոլորտը հասուն չէ: Այս երեխաները նույնիսկ մեծ տարիքում դժվար են կտրվում խաղային գործունեությունից և դրսևորում են տարիքային զարգացման ավելի վաղ փուլերին բնորոշ մանկական վարք, ֆիզիկապես նրանք նույնպես հաճախ փոքր են երևում իրենց իրական տարիքից: Նրանք հաճախ են ընկճվում, հուզվում, քանի որ ամեն ինչ ընկալում են որպես բացարձակ ճշմարտություն, օրինակ՝ եթե ինչ-որ մեկը քո ընկերն է, նա չի կարող նեղացնել և վիճել քեզ հետ, որովհետև նրանց մոտ ձևավորվել է ընկերության շաբլոնային պահվածք: Նրանց մտածողությունն ու վարքը նույնպես շաբլոնային են: Այս երեխաները բավականին ներշնչվող են, որը նույնպես պայմանավորված է նրանց ուղղամտությամբ, նրանք հավատում են բոլորի խոսքերին, նրանց շատ հեշտ է խաբել, դա է պատճառը, որ հաճախ այս երեխաներին ծաղրում են իրենց միամտության պատճառով: Հաճախ են ունենում ոչ համարժեք հուզավարքային դրսևորումներ, անհիմն ուրախանում են կամ տխրում, չնչին ազդակներին կարող են սուր հակազդումներ տալ, օրինակ՝ խաղալիք օձից կարող են անչափ վախենալ:
6. Նման երեխան մեծ դժվարություններ ունի հասակակիցների հետ շփվելիս, քանի որ նրանց հոգեկան զարգացումները չեն համապատասխանում միմյանց: Դա է պատճառը, որ նրանք ձգտում են խաղալ իրենցից փոքրերի հետ: Շփման ընթացքում դժվարանում են պահպանել զրույցի կանոնները, շփման տարածությունը, չափազանց անկաշկանդ են, անմիջական, արտահայտում են այն, ինչ մտածում են, չեն գիտակցում, որ իրենց խոսքով կարող են վիրավորել դիմացիներին, որը նույնպես պայմանավորված է գործողությունների պատճառահետևանքային կապի թույլ գիտակցմամբ: Հաճախ

անհիմն միջամտում են այլ մարդկանց գրույցին, ընդհատում են խոսակցին: Դժվարանում են հասկանալ գրույցի ենթատեքստը:

7. Թույլ համագործակցություն, համատեղ գործունեության իրականացման դժվարություններ: Նախադպրոցական տարիքում հոգեխոսքային զարգացման խնդիրներով երեխաները չեն կարողանում համատեղ գործունեություն իրականացնել հասակակիցների հետ, նրանք ձգտում են խաղալ միայնակ կամ կողք կողքի, սակայն՝ ոչ միասին:
8. Այսօրինակ երեխաները դժվարանում են ենթարկվել վարքի նորմերին և կանոններին, նրանց վարքը չափազանց ինքնաբերական է, անում են այն, ինչ ուզում են, դժվարանում են գիտակցել «կարելի-չի կարելի» սահմանը: Օրինակ՝ դասարանում բոլորը նստած դաս են լսում, իսկ նա կանգնում է, քայլում, հետո ուսուցչուհու սեղանից առանց թույլտվության գրիչ է վերցնում և այլն: Ամոթի զգացումը այս երեխաների մոտ թույլ է արտահայտված, վարքի ինքնահսկողությունը՝ նույնպես, դա է պատճառը, որ նրանք թողնում են գերակտիվ երեխայի տպավորություն: Այս երեխաները դժվարանում են գիտակցել վարքի պատճառահետևանքային կապերը և գնահատել իրենց գործողությունների հետևանքները, ուստի, հաճախ այնպիսի արարքներ կարող են անել, որոնք բացատրություն չունեն, օրինակ՝ կարող են ածելիով մաքրել հոնքերը, կտրել վարագույրը և այլն: Նրանք հաճախ շարժումներում անփույթ են, թափթփված, դանդաղկոտ:
9. Այս երեխաները մեծ հասակում հաճախ հասկանում են, որ խնդիրներ ունեն այս կամ այն ոլորտում և ընկճվում են այդ փաստից, ուստի, ձևավորվում է ցածր ինքնագնահատական: Օրինակ՝ չեն կարողանում կամ դժվարանում են բացատրել իրենց ցանկությունը, չեն կարողանում ինքնապաշտպանվել, ծաղրանքի են ենթարկվում հասակակիցների կողմից և զգում են իրենց թերարժեքությունը:
Վաղ հասակում հոգեխոսքային զարգացման խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելիս հոգեբանը պետք է հաշվի առնի հոգեբանական աշխատանքների մի քանի կարևոր կողմ.
- Նախ և առաջ, կարևոր է մասնագետի և երեխայի միջև ձևավորել դրական հուզական կոնտակտ: Հոգեբանը, երեխայի կողմից վստա-

հույթյան արժանանալով, դրականորեն է երեխային մոտիվացնում համատեղ գործունեությանը:

- Հարկ է հիշել, որ երեխան աշխարհը ճանաչում է մեծահասակի օգնությամբ նմանակման միջոցով, հետևապես մանկիկի հետ պարապմունքները ցանկալի է կառուցել՝ մեծահասակի գործողությունների, բառերի, շարժումների նմանակման առանձնահատկությունը հաշվի առնելով և ոչ թե բացատրել, զրուցել, ներշնչել:
- Այս շրջանում երեխայի առաջատար գործունեությունը խաղն է, խաղի միջոցով է տեղի ունենում նրա հոգեկան զարգացումը, ուստի աշխատանքները պետք է տեղի ունենան խաղի միջոցով, հակառակ դեպքում երեխային չի հետաքրքրի համատեղ գործունեությունը և աշխատանքները կլինեն անարդյունավետ:
- Աշխատանքների ընթացքում նոր հմտության ձևավորման համար անհրաժեշտ է ամրապնդում կրկնողության, խոսքային կամ առարկայական խրախուսանքի միջոցով:
- Զարգացնող աշխատանքների բովանդակությունը պետք է համապատասխանի երեխայի փորձին: Օրինակ, քանի որ երեխան դրսում տեսել է իրական մեքենա, ապա մեքենաներով խաղը համապատասխանում է նրա փորձին:
- Անհրաժեշտ է վերահսկել աշխատանքային նյութի բարդության աստիճանը: Երեխայի համար դժվար ու անհասանելի խաղերը կարող են բացասական հույզեր առաջացնել նրա մոտ և նա հրաժարվի շփվել մասնագետի հետ: Աշխատանքները պետք բարդացնել աստիճանաբար՝ համապատասխան երեխայի ունակությունների:
- Կարևոր է վերահսկել պարապմունքների տևականությունը: Հարկ է նկատի ունենալ, որ երեխայի ուշադրությունը այդ տարիքում ոչ կամաձին է և կարճատև, ուստի, որպեսզի երեխան չհոգնի և հետաքրքրությունը չկորցնի պարապմունքների նկատմամբ, կարիք չկա մեծ տևականություն պահանջող խաղեր խաղալ, իսկ հոգնածության դեպքում պետք է հմտորեն փոխել խաղի բնույթը:
- Անհրաժեշտ է գործունեության փոփոխություն: Պարապմունքների արդյունավետության և աշխատունակության բարձրացման համար շատ կարևոր է փոփոխել խաղերի բնույթը, ընդգրկել և՛ հանգիստ,

նստակյաց, մտավոր գործունեություն պահանջող խաղեր, և՛ շարժողական, ակտիվ խաղեր՝ փոխարինելով մեկը մյուսով:

- Հարկավոր է իրականացնել գիտելիքների տեղափոխում: Շատ կարևոր է, որ պարապմունքների ընթացքում յուրացրած գիտելիքները երեխան կիրառի տանը, դրսում և այլ միջավայրերում: Այդ նպատակով ծնողները պետք է տեղեկացված լինեն՝ ինչ գիտելիք է երեխան յուրացրել պարապմունքների ընթացքում և օգնեն նրան կիրառել այն իր կենսագործունեության ընթացքում:

Հոգեխոսքային զարգացման խնդիրների դեպքում երեխային հոգեբանական աջակցություն է անհրաժեշտ հետևյալ ուղղություններով.

1. Իմացական ոլորտի զարգացում:
- Այս երեխաների հետ աշխատելիս նախ և առաջ անհրաժեշտ է զարգացնել **ուշադրության կենտրոնացվածությունն ու կայունությունը, կամածին և ոչ կամածին ուշադրությունը, արձագանքը ձայնային ազդակներին, անվանը:** Բնականաբար, վաղ հասակում ուշադրությունը հարկ է զարգացնել խաղերի միջոցով: Ձայնային ազդակների նկատմամբ ուշադրությունը կարելի է զարգացնել խաղալիք երաժշտական գործիքների միջոցով՝ խաղի ընթացքում կիրառելով սուլիչներ, զանգեր և այլն: Անվան նկատմամբ արձագանքը զարգացնելու համար աշխատանքների ընթացքում հաճախակի պետք է կիրառել նրա անունը, կարելի է խաղալ «Անուն գոռոցի», «Պահմտոցի»՝ իհարկե պարզեցված տարբերակով: Խաղ-վարժություններից մեկում մասնագետը սենյակում կանչում է երեխայի անունը, իսկ մյուս մեծահասակը սենյակի դուռը բացում է և երեխայի հետ վազում մասնագետի մոտ:
- Հաջորդ քայլը **հիշողության և մտածողության զարգացումն է հիշողության և մտածողության խաղ-վարժությունների միջոցով:** Քանի որ այս երեխաների մոտ թույլ է զարգացած մտքի վերլուծականությունը, պատճառականությունը, գործողությունների պատճառահետևանքային կապերի գիտակցումը, հենց այդ առանձնահատկություններն էլ պետք է զարգացնել: Վաղ հասակում դա կատարվում է առարկաների հետ փորձարկումների միջոցով, օրինակ՝ ջրա-

ներկը լցնելով ջրի մեջ՝ այն գունավորվում է, ծեփամածիկը սեղմելով, այն փոխում է իր ձևը, տարբեր առարկաներին փայտե մուրճիկով հարվածելիս տարբեր ձայներ է արձակում և այլն: Դպրոցական տարիքում մտքի վերլուծականությունն ու պատճառականությունը զարգացնելու համար կարելի է քննարկել տարբեր հարցեր՝ «ո՞վ է տատիկը, հորեղբայրը», «ինչո՞ւ են երեխաները գնում դպրոց», «եթե բաժակը զգեստ հատակին, ի՞նչ կլինի» և այլն: Դեռահասության շրջանում մտածողության զարգացման համար երեխայի հետ ցանկալի է քննարկել տարբեր հասկացություններ, օրինակ՝ «ի՞նչ է ընտանիքը», «ընկերությունը», «բարությունը» և այլն: Մտքի տրամաբանվածությունը զարգացնելու համար կարելի է կիրառել նկարային խաղ պատմություններ, երբ թեմատիկորեն միմյանց կապված նկարային իրավիճակները երեխան պետք է դասավորի տրամաբանական հաջորդականությամբ՝ մեկնաբանելով դրանք: Ավելի մեծ տարիքում երեխային կարելի է առաջարկել շարունակել անավարտ նախադասությունները կամ պատմությունները:

- **Ուղղամտության, շարունային մտածողության հաղթահարման, մտքի ճկունության, ստեղծարար մտածողության** զարգացման համար հարկավոր է երեխայի հետ խաղալ այնպիսի խաղեր, որտեղ երեխան կհասկանա, որ բացի հիմնական նշանակությունից առարկաները կարող են կիրառվել այլ նշանակությամբ: Օրինակ՝ խաղարկել՝ ինչի համար կարող են օգտագործել աթոռը, բացի նստելուց, սեղանը՝ բացի հաց ուտելուց, բաժակը՝ բացի խմելուց և այլն: Մտքի ճկունության զարգացման հետաքրքիր խաղերից է «Տառային խառնաշփոթը», երբ երեխան, բառի խառնված տառերը համադրելով, պետք է գուշակի ճիշտ բառը: Ուղղամտության հաղթահարման համար կարելի է երեխայի հետ քննարկել երևույթների, հասկացությունների և՛ դրական, և՛ բացասական կողմերը, օրինակ՝ քննարկել երեխայի հետ, որ ընկերները, բացի միմյանց օգնելուց, կարող են միմյանց հետ վիճել, վիրավորել, հաշտվել և այլն:
- **Խոսքի ենթատեքստը, փոխաբերական իմաստները** հասկանալու համար կարելի է երեխայի հետ քննարկել տարբեր անեկդոտներ, դարձվածքներ, հումորներ: Քանի որ այս երեխաները դժվարանում

են սուտ խոսել, երբեմն խրախուսվում է նաև ստելը՝ որպես հնարամտության դրսևորում:

- **Ջրույցի ընթացքում հիշողության անհիմն զուգորդությունների հետ աշխատելիս**, երբ երեխան արտահայտում է թեմայի հետ կապ չունեցող մտքեր, անհրաժեշտ է հարցերի միջոցով երեխային բերել իրականության դաշտ և խնդրել հիմնավորել՝ ինչպես է իր արտահայտած միտքը կապված քննարկվող թեմայի հետ, ինչու նա հիշեց դա:
- 2. **Հուզական և վարքային դրսևորումների համարժեքության ձևավորում**: Խաղ-վարժությունների միջոցով հարկավոր է երեխային բացատրել՝ այս կամ այն իրավիճակում ինչպիսի հուզական և վարքային հակազդում կարող է լինել: Օրինակ, երբ հարվածում են, երեխան կարող է տխրել, զայրանալ, բայց ոչ՝ ուրախանալ կամ, երբ վիրավորում են, ուրախության հույզեր չեն արտահայտում և այլն: Կարելի է քննարկել հիմնական հույզերը և թե ինչպիսի իրավիճակներում դրանք կարող են արտահայտվել:
- 3. **Վարքի ինքնավերահսկողություն, սահմանի զգացումի ձևավորում, շփման, զրույցի նորմերի գիտակցում**: Այս առանձնահատկությունների զարգացման համար մասնագետը կիրառում է խաղ-վարժություններ, որտեղ մեկնաբանվում են վարքի նորմերը, այս կամ այն իրավիճակում ինչպիսի վարք պետք է դրսևորել, որտեղ ինչ խոսել, ինչպես վարվել, ինչն է կարելի, ինչը՝ չի կարելի: Ցանկալի է ամրապնդել յուրացրած գիտելիքները դերային խաղերով, ինչպես նաև՝ տարբեր միջավայրերում՝ տանը, դպրոցում կիրառելով: Կարևոր է իրականացնել շփման հմտությունները զարգացնող վարժություններ:
- 4. **Ինքնավերլուծության զարգացում**: Դպրոցահասակ տարիքում մասնագետը աշխատանքների ընթացքում պետք է իրականացնի ինքնավերլուծությանն ուղղված վարժություններ, օրինակ՝ երեխայի հետ միասին քննարկի իր առանձնահատկությունները, ինչ է նա ցանկանում, ինչ է սիրում, որոնք են նրա հետաքրքրությունները: Վերջինս նպաստում է իր մասին պատկերացումների ու կայուն ինքնագնահատականի ձևավորմանը:

5. Աշխատանք վախերի հետ, ներշնչվողության մակարդակի նվազեցում: Հաճախ այս երեխաները չնչին պատճառների դեպքում կարող են արտահայտված վախեր դրսևորել, ուստի անհրաժեշտության դեպքում մասնագետը պետք է իրականացնի աշխատանք վախերի հետ:

Հոգեբանական աշխատանքներ հոգեխոսքային զարգացման խնդիրների դեպքում (10 տ.-ից բարձր երեխաների համար)

1. Ասացվածքների, դարձվածքների քննարկում

Նպատակը՝ շփման հմտությունների զարգացում՝ խոսքի, հաղորդակցման պերցեպտիվ ֆունկցիայի զարգացման շնորհիվ:

Խնդիրները՝ խոսքի փոխաբերական իմաստի, գրույցի ենթատեքստի ընկալման կարողության զարգացում:

Ընթացքը՝ մասնագետը այցելուի հետ քննարկում է տարբեր ասացվածքներ և դարձվածքներ՝ վերլուծելով՝ ինչպիսի թաքնված ենթատեքստ ունեն դրանք, որ դեպքում են կիրառվում, ինչպիսի դարձվածքներ են առօրյա կյանքում կիրառել այցելուն և իր շրջապատի մարդիկ:

Ասացվածքներ, առածներ

1. Մեկը՝ բոլորի, բոլորը՝ մեկի համար:
2. Առուն թռի՝ ր, նոր հոպ ասա:
3. Յոթ անգամ չափիր, մեկ անգամ կտրիր:
4. Գիտունին մին ասա, անգետին հազար ու մին:
5. Ստի ոտը կարճ է:
6. Փոս փորողը ինքն է փոսը ընկնում:
7. Ձու գողացողը ձի էլ կգողանա:
8. Կրկնողությունը գիտության մայրն է:
9. Աղվեսի դուռնը խաղողին չի հասնում, ասում է՝ խակ է:
10. Դատարկ տակառն է զրնգում:
11. Ուշ լինի, նուշ լինի:
12. Թթու է, թան չի, ամեն մարդու բան չի:
13. Ոտքը վերմակի չափով մեկնել:

14. Տաշաճ քարը գետնին չի մնա:
15. Լավ է գիտունին գերի, քան՝ անգետին սիրելի:
16. Պտուղը ծառից հեռու չի ընկնում:

Դարձվածքներ

1. Ականջը կախ գցել
2. Ձեռնոց նետել
3. Գլուխը տալ պատին
4. Յեխից հանել
5. Մազերը բիզ-բիզ կանգնել
6. Լեզվին տալ
7. Գլուխը մոռանալ
8. Մոծակը փիղ դարձնել
9. Ատամները հաշվել
10. Ականջ դնել
11. Գլուխ գլխի տալ
12. Գլուխ հանել
13. Ախ քաշել
14. Օդերում լինել
15. Ջրի նման կյանք ունենալ
16. Կրակի հետ խաղալ
17. Առյուծի կաթ խմել
18. Քար կտրել
19. Էշը ցեխից հանել
20. Գլուխ խոնարհել
21. Ոտքը քարին առնել
22. Անմեղ գառ
23. Բերանը ջուր առնել
24. Գլուխ հանել
25. Արջի ծառայություն մատուցել:

2. Խաղ-վարժություն՝ «Գործողության մտադրության կռահում»

Նպատակը՝ շփման հմտությունների զարգացում՝ հաղորդակցման էմպատիկ ֆունկցիայի զարգացման շնորհիվ:

Խնդիրներ՝ դիմացինի գործողության մտադրության կռահման ունակության, գործողության թաքնված կոմպոնենտի բացահայտման կարողության զարգացում:

Ընթացքը՝ մասնագետը այցելուին առաջարկում է անավարտ իրավիճակներ, որտեղ ներկայացված չէ գործողության մտադրությունը, երեխան պետք է փորձի կռահել այն: Երեխայի հետ միասին քննարկվում է գործողության մտադրության տարբերակները, օրինակները՝ իր և շրջապատի մարդկանց առօրյայից:

Բոլորը ճաշեցին, վերջացրեցին, մայրիկը բացեց ծորակը, ինչո՞ւ:

1. Տղան վերելակի կոճակը սեղմեց, հետո տուն բարձրացավ աստիճաններով, ինչո՞ւ:
2. Երեխաները հեռվից տեսան ծիրանենին և վազեցին նրա ուղղությամբ, ինչո՞ւ:
3. Ժամը 8 ն է, մայրիկն ու հայրիկը արթնացան և հագնվեցին, ինչո՞ւ:
4. Հայրիկը գնումներ էր կատարել խանութից, նա մեքենայով հասավ բակ և զանգեց, կանչեց իր տղաներին, ինչո՞ւ:
5. Մայրիկը նայեց պատուհանից, վերցրեց անձրևանոցը և դուրս եկավ տանից, ինչո՞ւ:
6. Մայրիկն ու աղջիկը գնացին հիվանդանոց, բացեցին բժշկի սենյակի դուռը, հետո՝ փակեցին և նստեցին միջանցքում դրված աթոռներին, ինչո՞ւ:
7. Մայրիկը իջավ բակ և կանգնեց կանգառում, ինչո՞ւ:
8. Տղան բացեց պահարանի դուռը և վերցրեց բաժակը, ինչո՞ւ:
9. Տղան դաս պատրաստելիս գլուխը դրեց գրքի վրա և քնեց, ինչո՞ւ:
10. Մայիսի 18-ն էր, շատ հյուրեր էին հավաքվել տանը, մայրիկը ներս մտավ՝ տորթը ձեռքին, Անահիտը շատ երջանիկ էր, ինչո՞ւ:
11. Դպրոցում ֆուտբոլի մրցաշար էր, 5 ^տ դասարանի տղաները շատ ուրախ էին, ինչո՞ւ:
12. Բերքահավաք էր, պապիկը աստիճան խնդրեց թոռնիկից, ինչո՞ւ:
13. Երեխաները բակից եկան տուն և գնացին լոգարան, ինչո՞ւ:

14. Մայրիկը ծանրոցներով գնում էր և, տեսնելով իր աղջկան, կանչեց, ինչո՞ւ:
15. Դրսում բոլորը կարճաթև զգեստներով էին, ինչո՞ւ:
16. Փողոցում երթևեկող մեքենաները կանգնեցին, ինչո՞ւ:
17. Աղջիկը դպրոցից տուն վերադարձավ և բացեց սառնարանի դուռը, ինչո՞ւ:
18. Մայրիկը վերցրեց ցնցուղը և մոտեցավ պատուհանագոգին, ինչո՞ւ:
19. Պարանի վրայից լվացքը հավաքելուց անմիջապես հետո մայրիկն իջավ բակ, ինչո՞ւ:
20. Տղան գնում էր հանդիպման և անընդհատ նայում էր ժամացույցին, ինչո՞ւ:

3. Հանելուկների քննարկում

Նպատակը՝ մտքի ճկունության զարգացում:

Խնդիրները՝ առարկաների, երևույթների միջև զուգորդական կապեր հաստատելու ունակության, համանմանություններ գտնելու կարողության զարգացում, խոսքի ենթատեքստի ընկալում, պատճառահետևանքային կապերի գիտակցում, վերացական մտածողության զարգացում:

Ընթացքը՝ մասնագետը այցելուին առաջարկում է հանելուկներ, որը նա պետք է կռահի, ապա վերլուծության է ենթարկվում հանելուկի յուրաքանչյուր բաղադրիչը:

- | | |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> 1. Մի օձ կա մեծ, գույնը կապույտ,
Նա գնում է պտույտ-պտույտ,
Նրանով են սնվում անվերջ
Ծառ ու ծաղիկ, խոտ ու առվույտ:
(Գետ) 2. Մի տախտակ կա քառանկյուն,
Առանց դրա չկա տուն, | <p>Մինչև ամուր չփակես,
Դու չես մտնի հանգիստ քուն:
(Դուռ)</p> <p>Թռչուն՝ անթև ու անփետուր,
Բայց շրջում է նա ամենուր,
Նրա համար սահման չկա
Ոչ գետ ու ծով, ոչ լեռ, բլուր:</p> <p>(Միտք)</p> |
|---|--|

3. Ծնվում է ու մեծանում,
Հենց նույն օրն էլ՝ մահանում,
Հետո նորից կյանք առած՝
Դեղին շորեր է հագնում:

(Արև)

4. Ամբողջ օրը տանը մնում,
Բեհեզ բարձի վրա քնում,
Հենց որ մուկ է տեսնում,
Բազեի պես որս է անում:

(Կատու)

5. Չորս ոտք ունի, բայց շուն չի,
Ձու է ածում, թռչուն չի,
Խոտ է ուտում կովի պես,
Պատյան ունի, բայց՝ տուն չի:

(Կրիա)

6. Ժայռի տակից դուրս կգամ,
Շրջապատիս կյանք կտամ
Ու, երգելով մեղմօրոր,
Վերից կիջնեմ դեպի ձոր:

(Աղբյուր)

7. Իմ խելամիտ, ժիր բարեկամ,
Ի՞նչ կանվանես արդյոք նրան,
Օգնում է նա տատիկներին,
Երբ դիմում են ասեղ-թելին:

(Ակնոց)

8. Մեզ հետ բնավ չի խոսում,
Բայց իր կամքն է մեզ ասում,
Նա է գործի դնում մեզ՝
Անունն ասեմ, թե՛ գիտես:

(Ուղեղ)

9. Այն ի՞նչ իր է՝ դրված տան մեջ,
Որ պատկերդ ես տեսնում իր
մեջ:

(Հայելի)

10. Ի՞նչն է լռակյաց նստած մեր
տան մեջ,
Տան տաք ու սառն է ցույց տա-
լիս անվերջ,
Եվ, իր ցուցումին մենք հետևե-
լով,
Զգուշանում ենք, ելնում մուշ-
տակով:

(Ջերմաչափ)

11. Հազարածալ, հազար թերթիկ՝
Ունի անհուն խորհուրդ ու
միտք,
Ով որ նրան ձեռքն է առնում,
Միտքը լույսով է զարդարվում:

(Գիրք)

4. Խաղ-վարժություն՝ «Պրոբլեմային իրավիճակների քննարկում»

Նպատակը՝ մտքի ճկունության զարգացում:

Խնդիրներ՝ խնդրահարույց իրավիճակներում կողմնորոշման ու-
նակության, որոշման ընդունման կարողության, ինքնուրույնության,

ստեղծարար մտածողության զարգացում, կյանքի տարբեր իրավիճակներում սեփական ազդեցության գործոնի կարևորության գիտակցում:

Ընթացքը՝ այցելուին առաջարկվում է տարբեր իրավիճակներ, որոնցից նա պետք է ելքեր գտնի, որից հետո մասնագետի հետ միասին քննարկվում են պրոբլեմային իրավիճակներից դուրս գալու տարբեր եղանակներ՝ այցելուի փորձից սեփական օրինակներ վերլուծելով՝ ընթացքում շեշտադրվելով շրջապատի փոփոխությունների վրա սեփական ազդեցության գործոնի կարևորությունը:

1. Դու գնացել ես ընկերոջդ տուն հյուր, իսկ նա հիվանդ է, ինչպես կվարվես:
2. Գիշեր է, դու նստած հեռուստացույց ես նայում և լույսերն անջատվեցին, ինչպես կվարվես:
3. Դու փոշեկույով մաքրում ես տունը և տեսնում ես, որ այն լավ չի մաքրում, ինչպես կվարվես:
4. Վերելակի մեջ ես մնացել, հեռախոս չունես, ինչպես կվարվես:
5. Մեքենայով տեղ ես գնում, ճանապարհին այն փչանում է, ինչպես կվարվես:
6. Կահույքի անկյունում ինչ-որ իր է ընկած, որը քեզ շատ անհրաժեշտ է, բայց ձեռքդ չի հասնում, ինչպես կվարվես:
7. Շուկայից ծանր տոպրակներով քայլում ես դեպի տուն, տոպրակը պատռվում է, իսկ սննդամթերքը՝ թափվում, ինչպես կվարվես:
8. Պետք է դաս սովորես, իսկ գրքի այդ էջը պատռված է, չկա, ինչպես կվարվես:
9. Դու շատ սոված ես, տանը պատրաստված կերակուր չկա, ինչպես կվարվես:
10. Դու դրսում ես, տանից հեռու, հորդառատ անձրև է գալիս, իսկ դու անձրևանոց չունես, ինչպես կվարվես:
11. Դու գնացել ես հաց գնելու, իսկ խանութը փակ է, ինչպես կվարվես:
12. Դու սար ես բարձրանում, կոշիկդ պոկվում է, նոր կոշիկ չունես, ինչպես կվարվես:
13. Դրսում ինչ-որ մեկը վատ է զգում իրեն և ուշաթափվում է, ինչպես

կվարվես:

14. Տան դուռը փակվել է և չես կարողանում դուրս գալ, ինչպես կվարվես:
15. Դրսում բարձր աղմուկ է, ինչը շատ է խանգարում քեզ, ինչպես կվարվես:
16. Գնացել ես անտառ և շատ ցուրտ է, ինչպես կվարվես:
17. Բակում խաղում ես գնդակով, գնդակը ծակվում է, ինչպես կվարվես:
18. Գնացել ես քաղաքից դուրս, որտեղ շատ մոծակներ կան, ինչպես կվարվես:
19. Զրի ծորակը բացում ես և տեսնում, որ ջրատար խողովակը խցանվել է, ինչպես կվարվես:
20. Լույսը միացրեցիր և լամպը վառվեց, ինչպես կվարվես:
21. Կրակից մատդ փոքր-ինչ այրվել է, ինչպես կվարվես:
22. Լոգանք ընդունելիս ջուրը կտրվեց, ինչպես կվարվես:
23. Պառկել ես քնելու և զգում ես, որ մրսում ես, ինչպես կվարվես:
24. Ուզում ես պահարանից ինչ-որ բան վերցնել, բայց ձեռքդ չի հասնում, ինչպես կվարվես:
25. Դրսում քայլելիս ոտքդ ուղրվեց և ընկար, ինչպես կվարվես:
26. Դպրոցում պետք է թելադրություն գրես, նայում ես պայուսակիդ մեջ, իսկ տետրը չկա, ինչպես կվարվես:
27. Հրավիրված ես ընկերոջդ ծննդյան տոնին և պետք է անպայման գնաս, սակայն նվեր չունես և ոչ էլ գումար, ինչպես կվարվես:
28. Պետք է հանդիպես ընկերոջդ, սակայն փողոցում խցանումներ են և դու ուշանում ես, ինչպես կվարվես:
29. Քո սիրելի իրը ընկել է ճահիճի մեջ և դժվար է այն վերցնել, ինչպես կվարվես:
30. Մոլորվել ես քաղաքում, չգիտես՝ ինչպես հասնել քո ցանկալի վայրը, ինչպես կվարվես:
31. Ծաղիկները ջրելիս ցնցուղը կոտրվեց, ինչպես կվարվես:

5. Խաղ- վարժություն՝ «Ամբողջացրու պատմությունը»

Նպատակը՝ տրամաբանական մտածողության զարգացում:

Խնդիրներ՝ գործողությունների պատճառահետևանքային կապերի գիտակցում, վերացական մտածողության զարգացում:

Ընթացքը՝ մասնագետը այցելուին առաջարկում է տարբեր անավարտ նախադասություններ, որտեղ բացակայում է իրավիճակային գործողություններից մեկը կամ մի քանիսը՝ խնդրելով ամբողջականացնել այն:

1. Ես դասավորում եմ պայուսակս, որպեսզի...:
2. Ես գնում եմ անտառ, որպեսզի...:
3. Ես դպրոցից շուտ վերադարձա տուն, քանի որ...:
4. Ես սառնարանը բացեցի, որպեսզի...:
5. Մայրիկը վերցրեց անձրևանոցը, քանի որ...:
6. Պապիկը ջրում է այգին, որպեսզի...:
7. Ես տաք եմ հագնվել, քանի որ...:
8. Ամեն օր հայրիկը տուն է վերադառնում ժամը յոթին, քանի որ...:
9. Ես գնում եմ խանութ, որպեսզի...:
10. Դրսում գետինը թաց է, քանի որ...:
11. Մայրիկը սպասում է կանգառում, քանի որ...:
12. Հայրիկը նվեր և տորթ էր գնել ինձ համար, քանի որ...:
13. Երեխաները անտառում փայտ էին հավաքում, որպեսզի...:
14. Ես եկա տուն, որպեսզի.....և իջնեմ բակ:
15. Ես առավոտյան արթնացա,.....հագնվեցի և.....:
16. Ես ծաղկի սերմը վերցրեցի ,....., ջրեցի, և այն աճեց ու մեծացավ:
17. Պապիկն աստիճանը բերեց,...և քաղեց հասած ծիրանը:
18. Մենք գնացինք անտառ,....և տաքացանք:
19. Մայրիկս....., դրեց վառարանի մեջ,...և մենք սկեցինք ուտել:
20., մայրիկս բացեց անկողինը և մենք....:
21., ափսե ու բաժակ վերցրեցի, որպեսզի...
22. Մայրիկը...., գոգնոցը կապեց, որպեսզի...
23. Տատիկը....., որ կարողանա հեռուստացույց նայել:
24. Աղջիկը վերցրեց հեռախոսը,... և ծնողները եկան:
25. Մեքենան կանգնեց,....., հետո կրկին շարժվեց:

26., երեխաները իջան բակ և ձնեմարդ պատրաստեցին:
27. Աղջիկը հանեց իր կեղտոտ շորերը,,, չորացավ և նորից հագավ:
28. Գյուղացին, ու մշակեց, այլուր աղաց ու.....:
29. Ուժեղ քամի եղավ,....., ընկան գետնին, փայտահատը եկավ տարավ:
30. Զամբյուղը վերցրեցի,.....ծաղիկներ հավաքեցի, և դրեցի գլխիս:

6. Անեկդոտների, հումորների քննարկում

Նպատակը՝ շփման հմտությունների զարգացում՝ հաղորդակցման պերցեպտիվ ֆունկցիայի զարգացման շնորհիվ:

Խնդիրները՝ իրավիճակի, զրույցի ենթատեքստը հասկանալու կարողության զարգացում, հումորի զգացումի բարելավում, ուղղամտության հաղթահարում:

Ընթացքը՝ մասնագետը այցելուի հետ միասին քննարկում է տարբեր հումորներ՝ վերլուծելով յուրաքանչյուր բաղադրիչը, որից հետո առաջարկվում է միասին ստեղծել տարբեր հումորային պատմություններ:

1. Վարդանիկը մայրիկին ասում է.
 - Մայրի՛կ, այսօր ուսուցչուհին ինձ հարցրեց՝ ես քույր կամ եղբայր ունեմ:
 - Դու ի՞նչ պատասխանեցիր:
 - Ասացի, որ ես միակ երեխան եմ:
 - Իսկ ուսուցչուհին ինչ ասաց:
 - Ասաց. «Փառք Աստծո»:
2. Հայրը Վարդանիկին հարցնում է.
 - Ի՞նչ էիր անում քիմիայի դասին:
 - Պայթուցիկ նյութեր էինք փորձում:
 - Եվ ինչ տնային աշխատանք հանձնարարեց:
 - Չհասցրեց.....
3. Աշոտիկը Վարդանիկին հարցնում է.
 - Երեկ ինչո՞ւ դասի չէիր եկել:
 - Ատամս ցավում էր:

- Հիմա ցավում է:
- Չգիտեմ, ատամնաբույժի մոտ է:
- 4. - Գո՛ռ, շատ գեղեցիկ շարադրություն էիր գրել, բայց ինչո՞ւ էր կիսատ:
- Որովհետև մայրիկիս շտապ աշխատանքի կանչեցին:
- 5. Քիմիայի դասին.
- Մարիա՛մ, ի՞նչ գույն է ստացվել քո լուծույթը:
- Կարմիր:
- Նստի՛ր, ի՞նչ:
- Աննա՛, իսկ քո լուծույթն ի՞նչ գույն է:
- Վարդագույն:
- Նստի՛ր, ուր:
- Արա՛մ, իսկ քո՞նը:
- Սև:
- Երկո՛ւս, դասարա՛ն, փախի՛ր:

7. Խաղ՝ «Սուտ պատմություններ»

Նպատակը՝ ուղղամտության նվազեցում:

Խնդիրները՝ մտքի ճկունության, հնարամտության, կողմնորոշվելու ունակության, երևակայության զարգացում:

Ընթացքը՝ մասնագետն ու այցելուն, միմյանց հերթափոխելով, հորինում են և վերլուծում անիրական, սուտ պատմություններ:

1. Հիմա ես ձեզ մի պատմություն կպատմեմ. Երեկ ես քայլում էի փողոցով, արևը շողում էր, գիշեր էր, կապույտ տերևները խշխշում էին ոտքերիս տակ: Հանկարծ անկյունից դուրս վազեց շունը և բառաչեց ինձ վրա: «Ծուղ-րու-ղու», -կանչեց նա և պոզերը տնկեց: Ես փախա, իսկ դու կփախնե՞իր:
2. Անտառով քայլում էի, շուրջ բոլորը մեքենաներ էին երթևեկում: Հանկարծ տեսնում եմ սունկ, ճյուղի վրա էր աճում, թաքնվել էր կանաչ տերևների մեջ: Ես թռա և քաղեցի այն: Հետո եկա գետի մոտ, տեսնեմ ափին ձուկ է նստած, ոտքը գցել է ոտքին և նրբերշիկ է ուտում: Ես մոտեցա, իսկ նա, հոպ, թռավ ջուրը և լողաց:
3. «Անհաղթ աքլորը», «Սուտլիկ որսկանը», «Սուտասանը» հեքիաթներ-

րի քննարկում:

8. Խաղ «Այլ կերպ»

Նպատակը՝ մտքի ճկունության զարգացում:

Խնդիրները՝ վերացական մտածողության, արագ կողմնորոշվելու ունակության, վերլուծելու կարողության զարգացում, միտքը բացատրելու կարողության զարգացում:

Ընթացքը՝ մասնակիցներին տրվում է հրահանգ՝ բացատրել առարկան, երևույթը՝ առանց բառի արմատը օգտագործելու:

9. Խաղ «Թվարկիր առարկայի կիրառման բոլոր հնարավոր տարբերակները»

Նպատակը՝ մտքի ճկունության զարգացում:

Խնդիրները՝ ստեղծարար մտածողության, երևակայության, կողմնորոշվելու ունակության զարգացում:

Ընթացքը՝ մասնագետը նշում է որևէ առարկա և խնդրում այցելուին գտնել այդ առարկայի կիրառման հնարավորինս շատ տարբերակներ: Առարկաներն են՝ թերթ, բաժակ, գրիչ, լուցիկ, փսես, գիրք, տետր, սրբիչ և այլն:

10. Խաղ «Անհնարին կապեր»:

Նպատակը՝ մտքի ճկունության զարգացում:

Խնդիրները՝ ստեղծարար մտածողության, հնարամտության, երևակայության զարգացում:

Ընթացքը՝ մասնակիցներին ասվում է երկու իրար հետ կապ չունեցող առարկաներ, որոնք նա պետք է կապի միմյանց հետ և պատմություն հորինի այդ կապի մասին: Այդ բառազույգերից են՝ կակտուս-լիմոնադ, սագ-թեյնիկ, հրապարակ-անկողին, սառնարան-հեծանիվ, հեռախոս-առյուծ, գրիչ-սրբիչ, ծաղիկ-հեռախոս:

11. Խաղ «Սիամյան երկվորյակներ»

Նպատակը՝ շփման հմտությունների զարգացում՝ հաղորդակցման էմպատիկ ֆունկցիայի զարգացման շնորհիվ:

Խնդիրները՝ դիմացինի մտադրությունը հասկանալու կարողության զարգացում, համագործակցության զարգացում, էմպատիայի զարգացում:

Ընթացքը՝ երկու մասնակիցների ձեռքերը պարանոց կապում են միմյանց, և այդ կապած ձեռքով նրանք պետք է նկարեն՝ գուշակելով, թե ինչ է ցանկանում նկարել մյուսը, ընդ որում՝ ընթացքում չպետք է խոսեն: Նույնը կարելի է անել ծեփով, կարելի է անել առանց ձեռքերը կապելու, նույն առաջադրանքը հնարավոր է տալ խնդրելով, որ ինչ-որ գործողություններ անեն միասին առանց խոսելու՝ գուշակելով մեկը մյուսի մտքերը, ընդ որում՝ մի գործողությունը անում է մեկը, մյուսը՝ հաջորդ մասնակիցը, օրինակ՝ մեկը վերցնում է վրձինը, մյուսը՝ ջրաներկը, մեկը վերցնում է թուղթը, մյուսը՝ ջուրը:

12. Խաղ՝ «Բացատրում ենք ձեռքերով»

Նպատակը՝ շփման հմտությունների զարգացում՝ հաղորդակցման էմպատիկ ֆունկցիայի զարգացման շնորհիվ:

Խնդիրները՝ ժեստերով մեկը մյուսի մտադրությունը հասկանալու կարողության, հնարամտության, արագ կողմնորոշվելու ունակության զարգացում:

Ընթացքը՝ մասնակիցներին խնդրվում է հաջորդաբար ինչ-որ գործողություն կատարելու համար միմյանցից ժեստերով բացատրել և խնդրել ինչ-որ բաներ:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ մեր կողմից ներկայացված աջակցության սկզբունքներն ու առանձնահատկությունները կարող են մասնագետներին ուղղորդել, թե երեխայի զարգացման ո՞ր կողմերի վրա պետք է առավել ուշադրություն դարձնել, ի՞նչ ուղղությամբ աշխատանքները վարել, ինչպե՞ս փոփոխել, շտկել կամ զարգացնել այս կամ

այն առանձնահատկությունը, սակայն հոգեխոսքային զարգացման խնդիրների դրսևորումները յուրաքանչյուր երեխայի մոտ շատ անհատական են և բնորոշվում են յուրատիպ ընթացքով, ուստի, հոգեբանական աջակցության ծրագիրը կազմելիս պետք հաշվի առնել նաև յուրաքանչյուր երեխայի զարգացման, տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Համակարգչային կախվածությամբ ուղեկցվող հոգեկան զարգացման խնդիրները և աջակցության առանձնահատկությունները

Անձի զարգացումն էապես պայմանավորվում է տվյալ ժամանակաշրջանի տնտեսական, սոցիալ-հասարակական և տեխնիկական փոփոխություններով ու զարգացումներով: Մասնավորապես՝ 20-րդ դարավերջին տեխնիկական նորարությունները՝ համակարգիչն ու համացանցը, ինչպես իրենց հետ ներմուծեցին բազում դրական տեղաշարժեր, հեշտացրեցին մարդու կենսագործունեությունը, այնպես էլ՝ սերմանեցին տարաբնույթ անցանկալի երևույթներ: Այսօր աշխարհում մարդը համարվում է տեխնածին էակ և գտնվում է տեխնիկական փոփոխությունների և զարգացումների կիզակետում:

Այդ առումով համակարգչային այս դարում պետք է սպասել, որ մեծ կլինի համակարգչային գործունեության ազդեցությունը 21-րդ դարաշրջանի մարդու անձի և հոգեկան զարգացման վրա:

Այսօր, հաճախ որպես գործունեություն, մարդու՝ մասնավորապես՝ երեխայի կյանքում իր յուրահատուկ տեղն է զբաղեցնում համակարգչային գործունեությունը: Համաձայն մի շարք գիտնականների (Ա. Ն. Լեոնտև, Ս. Լ. Ռուբինշտեյն, Լ. Ս. Վիգոտսկի) գործունեությունը պայմանավորում է անձի զարգացումը:

Հոգեկան զարգացման համատեքստում, հատկապես կարևոր է և հրատապ ուսումնասիրել համակարգչային գործունեության ազդեցությունը մինչև 6 տարեկան երեխաների անձի և հոգեկան զարգացման գործընթացում, քանի որ անձի զարգացման վաղ փուլերում տարաբնույթ սոցիալական և հոգեբանական ազդեցությունները վճռորոշ են հետագա կենսագործունեության համար: Եվ հենց այս շրջանում է տեղի ունենում երեխայի խոսքի զարգացումը, ինքնագիտակցության, սոցիալական «ես»-ի ձևավորումը, շփման հմտությունների զարգացումը և այլն: Այդ իմաստով, մեծահասակը որպես անձ արդեն կազմավորված է և զգալի չափով կարող է վերահսկել շրջակա միջավայրի տարաբնույթ ներգործությունները:

Բացի այդ, մինչև 6 տարեկանը հարկ է շեշտադրել երեխայի զար-

գացման «զգայուն շրջանների» կարևորությունը խոսքի, հոգեկան գործընթացների զարգացման, վարքաձևերի յուրացման համար: Ուստի, համակարգչային կախվածությունը և չարաշահումը հոգեկան գործընթացների զարգացման զգայուն շրջաններում տրամաբանորեն կունենան իրենց յուրատիպ ներգործությունը:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է հատկացնել համակարգչային գործունեության ազդեցությանը խոսքի զարգացման զգայուն շրջանում (0-6 տ., մասնավորապես՝ 1,5 տ-ը առանձնահատուկ կարևոր շրջանն է խոսքի զարգացման համար), քանզի նախադպրոցական տարիքում երեխայի առաջին կարևոր ձեռքբերումը, տարիքային նորագոյացությունը խոսքի զարգացումն է, և այն դիտարկվում է որպես անձի և հոգեկան զարգացման հիմնասյուն. խոսքի զարգացումը իր հետ զուգորդում է նաև մյուս հոգեկան գործընթացների զարգացումը, իսկ խոսքի հապաղման հետ համընթաց հաճախ հապաղում է նաև երեխայի հոգեկան զարգացումը:

Խոսքը շփման անհրաժեշտ բաղադրիչ է և ձևավորվում է շփման ընթացքում: Եթե մինչև 1 տարեկանը շփման պահանջմունքը չի բավարարվում կամ ոչ լիարժեք կերպով է բավարարվում, երեխայի հոգեկան զարգացումը հետ է ընկնում, իսկ խոսքը նման երեխաների մոտ շատ ուշ է ի հայտ գալիս: Առաջին մեկ տարում մեծահասակի հետ լիարժեք շփումը կենսականորեն կարևոր է երեխայի համար: Հետևապես՝ համակարգչային կախվածությունն ու չարաշահումը, կենդանի շփման, երկխոսության պակասը կարող են բացասաբար անդրադառնալ հոգեխոսքային զարգացման վրա: Եթե մեծահասակները անտեսեն կամ բավականաչափ ուշադրություն չդարձնեն երեխայի խոսքի զարգացման զգայուն շրջանին, այն կարող է ավելի ուշ ձևավորվել՝ նպաստելով նաև հոգեկան գործընթացների հապաղմանը:

Տեղեկատվական է այն փաստը, որ համակարգչային կախվածություն ունեցող երեխաների ծնողները շեշտադրում էին խոսքի զարգացման զգայուն շրջանում (մինչև 1,5-2 տարեկանը) երեխայի համակարգչային գործունեության չարաշահման և կախվածության մասին, ինչպես նաև՝ ընտանիքում շփման դժվարությունների, ցրվածության, կամակորության վերաբերյալ: Համակարգչային կախվածության դրս-

ևորումներից է՝ ճաշելիս համակարգչային գործունեությամբ զբաղվելը: Հետաքրքիր էր, որ նրանք նշում էին երեխաների օտար լեզուներով ճանաչողական գիտելիքների՝ հաշվելու կարողության, կենդանիների, մրգերի, ոտանավորների, երգերի իմացության մասին, թեև մայրենի խոսքը այս երեխաների մոտ դեռ հստակ ձևավորված չէր: Ծնողների մոտ ամենահաճախ հանդիպող արտահայտությունն էր. «լավ չի խոսում, բայց շատ լավ հաշվում է ռուսերեն, անգլերեն, անգլերեն գիտի մրգերի անվանումները» և նմանատիպ այլ մեկնաբանություններ:

Կարելի է առանձնացնել համակարգչային գործունեության չարաշահման և կախվածության հետևանքով դրսևորվող հոգեկան և խոսքի զարգացման հետևյալ առանձնահատկությունները.

1. Սահմանափակ բառապաշարով իմաստավորված խոսքի հետ համատեղ մեխանիկական, շաբլոնային խոսք՝ զուգորդվող մայրենի լեզվով կրկնխոսություններով (էխոլալիաներով) և օտարալեզու համակարգչային բառապաշարով ու մենախոսությամբ:

Կրկնխոսությունների դրսևորումը երեխայի խոսքի բնականոն զարգացման փուլերից է, որը բնորոշ է երեխայի խոսքի զարգացման վաղ շրջանին: Անձի, սոցիալական նմանակման տեսակետից այն շփոթ է «ես»-ի և «ոչ-ես»-ի միջև և հաճախ ներկայանում է խադի տեսքով, երեխային հաճույք է պատճառում բառերի կրկնողությունը հենց այնպես, զվարճանքի համար: Երեխան կրկնխոսություններով կարծես թե հաստատում է դիմացինի ասածը: Ի տարբերություն բնականոն զարգացմամբ երեխաների, որոնց մոտ կրկնխոսությունները շատ կարճատև բնույթ են կրում, համակարգչային ազդեցության ներքո դրսևորվող կրկնխոսությունները համեմատաբար ավելի երկար են տևում: Կրկնխոսություններ հանդիպում ենք նաև աուտիստիկ սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների մոտ: Սակայն, ի տարբերություն աուտիզմ ունեցող երեխաների, ովքեր կրկնում են բառերն ու արտահայտությունները հիմնականում իրավիճակին ոչ համարժեք և իմաստը չհասկանալով՝ համակարգչային ազդեցության ներքո դրսևորվող կրկնխոսությունների դեպքում երեխաները հիմնականում հասկանում են կրկնած արտահայտությունների իմաստը՝ դրանով հաստատելով դիմացինի ասածը: Օրինակ՝ ծնողի հարցին «հաց ուզում ես», կրկնվող

«հաց ուզում ես» պատասխանով երեխան հաստատում է նրա ասածը: Աուտիզմ ունեցող երեխաների մոտ կրկնխոսությունները կատարում են զգայական, ուշադրություն գրավելու կամ ինչ-որ բանից խուսափելու գործառույթ: Բացի այդ, այս երեխաների հետ աշխատելիս կրկնխոսություններն ավելի հեշտությամբ են փոխարինվում իմաստավորված խոսքով, քան աուտիզմ ունեցող երեխաների մոտ: Եվ, ի տարբերություն աուտիզմ ունեցող երեխաների, այս երեխաների մոտ իմաստավորված խոսքն ավելի շատ է:

Այս երեխաները հաճախ են օգտագործում համակարգչային խաղերից և մուլտֆիլմերից յուրացրած օտարալեզու խոսքը, արտահայտությունները, բացի այդ՝ առանց առարկաների հետ հարաբերվելու մենախոսում են: Մենախոսությունը նույնպես խոսքի բնականոն զարգացման փուլերից է, սակայն, ի տարբերություն բնականոն զարգացմամբ երեխաների, ովքեր խաղալիս, ինչ-որ գործողություն անելիս մեկնաբանում են իրենց գործողությունները, և իմաստային առումով մենախոսությունը կապված է իրենց գործողությունների հետ, համակարգչային ազդեցությամբ երեխաները մենախոսում են խաղից դուրս, առանց խոսքի և գործողության իմաստային կապի, և մենախոսության հիմնական բովանդակությունը համակարգչային թեմաներն են, ընդ որում՝ օտար լեզվով: Նրանք հաճախ նաև օգտագործում են համակարգչային գործունեության ընթացքում յուրացրած բառեր, արտահայտություններ, որոնք թերևս նպատակային, իրավիճակին համարժեք են կիրառվում և համակարգչային հնչողությամբ, օրինակ՝ «правильно», «отлично», «мой животик такой голодный», «ой, какая красивая кукла»:

Խոսքի ուշացումով զուգակցվող հոգեկան զարգացման խնդիրներ և համակարգչային կախվածություն ունեցող երեխաները հաճախ խոսքում ունենում են մեխանիկական, անգիր յուրացրած արտահայտություններ: Մեխանիկական խոսքի ցայտուն օրինակներից են. «բարև, ոնց ես, լավ ես», կամ դերային խաղի ժամանակ՝ «մեքենա եմ վաճառում, ինչ արժի, 500 դրամ» նախադասությունները, որոնք նրանք արտաբերում են մի շնչով:

Համակարգչային ազդեցության ներքո դրսևորվող կրկնխոսությունները, օտարալեզու բառապաշարը, մենախոսությունը հավանաբար

պայմանավորված են երեխայի զարգացման վաղ շրջանում նմանակման, ընդօրինակման փուլի հետ:

Հաճախ զբաղվածության կամ երեխայի խնամքն ու իրենց առօրյա գործունեությունը հեշտացնելու նպատակով ծնողները չեն վերահսկում, երբեմն նաև՝ խթանում են համակարգչային խաղերի և օտարալեզու մուլտֆիլմերի չարաշահումը՝ այդպիսով սահմանափակելով կենդանի շփումը շրջապատի մարդկանց հետ: Խոսքի զարգացման զգայուն շրջանում ընտանիքի անդամների խոսքը լսելու և յուրացնելու փոխարեն, երեխան սկսում է յուրացնել համակարգչային խոսքը, որը և դառնում է ընդօրինակման հիմնական օբյեկտը:

Կրկնխոսություններ զարգացնող համակարգչային խաղերից է «Խոսող Թոմը» (Говорящий Том), որտեղ գլխավոր հերոսը՝ կատուն, նույնությամբ կրկնում է համակարգչից այնպիսի լավոլ խոսքը:

2. Համատեղ ուշադրության թույլ արտահայտվածություն, ուշադրության պակաս:

Խոսքի ուշացումով զուգակցվող հոգեկան զարգացման խնդիրներ և համակարգչային կախվածություն ունեցող երեխաները դժվարանում են ինչ-որ մեկի հետ միասին կենտրոնացնել ուշադրությունը միևնույն գործողության վրա: Նրանք խաղում են միայնակ, ցանկություն չունեն շփվելու, դիմելու և համատեղ որևիցե մեկի հետ խաղալու, հարաբերվելու: Կարող են դիմել և փորձել հասկացնել իրենց ցանկությունը գլխավորապես գործողության ընթացքում արգելքների և խոչընդոտների հանդիպելիս: Ուշադրությունը կայուն չէ, հաճախ են տեղափոխում այն մի գործողությունից մյուսը, դժվարությամբ են արձագանքում հրահանգներին: Նմանօրինակ վարքաձևի դստորման պատճառները հետևյալն են.

- Առաջինը՝ համակարգչային գերակա ազդեցության դեպքում կենդանի շփման, երկխոսության պակասն է, որի ընթացքում երեխան պետք է յուրացնեի սոցիալական տարբեր վարքաձևեր, շփման հմտություններ, սովորեի հաղորդակցվել մարդկանց հետ:
- Հաջորդը՝ միակողմանի շփումն է համակարգչի հետ, որի հետևանքով երեխան սովորում է միայնակ խաղալ, տարբեր գործողություններ կատարել առանց որևէ մեկի մասնակցության, առանց որևէ մե-

կին լսելու, ուշադրություն դարձնելու, ինչի հետևանքով համատեղ գործունեություն իրականացնելու ցանկությունը շատ թույլ է նրանց մոտ:

- Եվ իհարկե, երեխան հաճախ չի արձագանքում հրահանգներին, երբ իրեն դիմում են, քանզի համակարգչի հետ գործողություններ կատարելիս, նրան ոչ ոք չի դիմում, հրահանգներ չի տալիս և կարիք չկա ինչ-որ մեկին լսելու: Հետևապես, ոչ համակարգչային խոսքին ուշադրություն դարձնելու հատկությունն այս երեխաների մոտ թույլ է արտահայտված:

Ի տարբերություն աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող երեխաների, ովքեր նույնպես բնորոշվում են համատեղ ուշադրության թույլ արտահայտվածությամբ, հրահանգները չլսելու, անվանը չարձագանքելու հատկությամբ, համակարգչային ազդեցությամբ երեխաներն ավելի հեշտությամբ են ներգրավվում համատեղ գործունեության մեջ և, տեսողական կոնտակտի պահպանվածության շնորհիվ, մասնագետի օգնությամբ ուշադրությունը կենտրոնացնելու դեպքում կարողանում են իրականացնել հրահանգները, արձագանքել շրջապատի ազդակներին: Կարճատև հոգեբանական ախտանքները առավել ակնհայտ փոփոխություններ են արձանագրում այս երեխաների ուշադրության գործընթացում:

3. Տեսաշարժողական կոորդինացիայի, տարածական կողմնորոշման զարգացվածություն, ակնառու-գործնական մտածողության գերակայություն:

Համակարգչային գերակա ազդեցությունը զարգացնում է երեխայի մոտ տեսաշարժողական կոորդինացիան, տարածական կողմնորոշումը, քանի որ համակարգչային գործունեության ընթացքում՝ մասնավորապես՝ խաղի ժամանակ, երեխան ձեռքի շարժումները համատեղում է նկարի հետ: Հետևապես, նրանց մոտ զարգացած և գերակայող է լինում ակնառու-գործնական մտածողությունը, թեև 3 տարեկանից հետո պետք է զարգանա ակնառու-պատկերավոր, ապա՝ վերացական (բառա-տրամաբանական) մտածողությունը: Մտածողության վերջին երկու տեսակները այս երեխաների մոտ շատ թույլ են զարգացած, քանի որ նրանց զարգացման համար անհրաժեշտ է կենդանի շփում, երկխոսու-

թյուն, ինչը պակասում է համակարգչային ազդեցությամբ երեխաների մոտ, հետևաբար՝ խոսքը հապաղում է, վերացական մտածողությունը՝ նույնպես:

Այս երեխաները ունեն ճանաչողական գիտելիքների մեծ պաշար, գիտեն իրերի ֆունկցիոնալ նշանակությունը, կարող են ինքնուրույն, առանց մեծի օգնության կիրառել առարկաները ըստ նշանակության, օրինակ՝ աթոռը հարմարեցնել, պահարանից վերցնել բաժակը, ծորակից ջուր լցնել և խմել: Սակայն, երբ մեծահասակը դիմի նրան.«գնա, բեր, պահարանի վրա դրված բաժակը», նա կարող է չհասկանալ, քանի որ այս դեպքում պետք է ակտիվանա երեխայի վերացական մտածողությունը:

4. Շաբլոնային մտածողություն, հաջորդական գործողությունների ավտոմատացում:

Համակարգչի դիտումը և կարգավորումը տեղի է ունենում ալգորիթմային կանոններով: «Այնպիսի բնութագրերը, ինչպիսիք են համակարգչային պատկերում շրիֆտի և սիմվոլի համակցումը, համակարգչային աշխատանքը կարգավորող հրահանգների կրկնողությունը, նրա տեմպոռիթմիկ հատկությունը, դիսփլեյի էկրանի չափսերի սահմանափակ լինելը և դիսփլեյի վրա աշխատանքների կազմակերպման ստանդարտացումը օգտագործողի մտավոր գործունեությունը ենթարկում են ալգորիթմային կանոնների նոր համակարգին՝ դարձնելով այն ավելի շաբլոնային, քան ավանդական համակարգում»: Համակարգչի հետ հաճախակի փոխազդեցությունը նպաստում է նաև գործունեության միատարրությանն ու շաբլոնային լինելուն: Իսկ երեխաների շրջանում, ովքեր չեն կարող վերահսկել համակարգչի ազդեցությունը, վարքում հստակորեն դրսևորվում են ստանդարտացված գործողություններ: Համակարգչային ազդեցությամբ և հոգեխոսքային զարգացման հախաղմամբ երեխաները հաճախ ճաշելիս, հագնվելիս, քնելիս գործողությունները իրականացնում են նույն հաջորդականությամբ, օրինակ՝ երեխաներից մեկը վերցնում էր բարձը, իր լեզվով բարի գիշեր մաղթում եղբորը, գնում ննջարան, շորերը դնում մինևույն աթոռին, հագնում իր նույն գիշերային զգեստը, պառկում քնելու և ամեն օր կրկնում այս նույն գործողությունները առանց հաջորդականությունը խախտելու: Դերային

խաղեր խաղալիս նրանք պահպանում են և կրկնում գործողությունների նույն հաջորդականությունը, որը յուրացրել են առաջին անգամ այդ խաղը խաղալիս: Համակարգչային ազդեցության ներքո դրսևորվող շաբլոնային վարքը պետք է շփոթել աուտիստիկ սպեկտորի խանգարումներ ունեցող երեխաների, ստերիոտիպային, արարողակարգային վարքի հետ, որի դեպքում գործողության որևէ օղակի խախտման դեպքում այդ երեխաները հայտնվում են հուզական անկայուն վիճակում: Ի տարբերություն նրանց, համակարգչային ազդեցությամբ երեխաները չեն շփոթվում և բացասական հուզական ապրումներ չեն ունենում շաբլոնային վարքի որևէ օղակի խախտման դեպքում, բացի այդ, նրանց շաբլոնային վարքն առավել հեշտությամբ է ենթարկվում փոփոխման: Ինչպես նաև, այս երեխաները վարքում չեն դրսևորում ստերեոտիպ, կրկնվող շարժումներ, չունեն սևեռունություններ (фиксация)՝ ի տարբերություն աուտիզմ ունեցող երեխաների:

Ստանդարտացված վարք զարգացնող համակարգչային խաղի վառ օրինակ է «Խոսող Թումը», որի գլխավոր հերոս կատվին հարկավոր է խնամել՝ օրինակ՝ կերակրել, քնացնել, նույնատիպ, ստերոտիպային, հաջորդական գործողություններով:

5. Կարգուկանոնի ընկալման թույլ արտահայտվածություն, կամակորություններ, հակադրվող վարքագիծ՝ ուղեկցվող լացով կամ ագրեսիվ գործողություններով:

Համակարգչային գերակա ազդեցության դեպքում հոգեխոսքային զարգացման խնդիրներով երեխաները հաճախ են դրսևորում հակադրվող վարքագիծ, այն դեպքում, երբ նրանց ցանկությունները չեն կատարվում: Նրանք հաճախ են կիրառում «չեմ ուզում» արտահայտությունը: Հակադրվող վարքագիծը հաճախ է ուղեկցվում անցանկալի վարքային դրսևորումներով՝ իրեր նետելով, ջարդելով, գռռալով, գետնին պռնկելով և այլն: Այս երեխաները ուղղակիորեն չեն ենթարկվում սահմանված կանոններին և դժվարանում են կատարել այն, ինչ նրանց այդ պահին չի հետաքրքրում: Օրինակ՝ նախադպրոցական հաստատություններում նրանք չեն ենթարկվում սահմանված ռեժիմին, չեն կարողանում շաք կանգնել, չեն ընկալում դասապրոցեսի կանոնները, ընդհանուր առմամբ՝ անում են այն, ինչ ուզում են:

Միգրացիոն և մարդկային վարքագծի պատճառներից մեկն այն է, որ համակարգչային գործունեության ընթացքում երեխան ինքն է ղեկավարում գործընթացը, որպես այդպիսին վարքի ինքնակարգավորման դժվարությունների չի հանդիպում, հետևապես՝ նա ենթադրում է, որ ամեն ինչ իր ցանկությամբ պետք է լինի: Քանի որ համակարգչային կախվածության դեպքում նվազագույնի է հասնում կենդանի շփումը միջավայրի մարդկանց հետ, երեխան չի յուրացնում վարքի կարգավորման ձևերը, նորմատիվները, կարգուկանոնին հարմարվելու հմտությունները: Պետք է նկատել նաև, որ հենց 0-3 տարեկանն է կարգուկանոնի ընկալման ձևավորման զգալուն շրջանը, և, եթե այդ փուլում նպաստող հանգամանքներ չեն լինում նշված զգացումի ձևավորման համար, երեխան դժվարանում է ընկալել կարգը, դառնում է կամակոր և հակադրվող:

Բնականաբար նման երեխաներին հարկավոր է հոգեբանական աջակցություն և, պայմանավորված երեխայի անհատական, զարգացման և տարիքային առանձնահատկություններով, յուրաքանչյուր երեխայի համար պետք է մշակվի և կյանքի կոչվի անհատական աջակցության ծրագիր:

Ըստ այդմ, համակարգչային կախվածություն ունեցող երեխան բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով.

1. Ուշադրության կենտրոնացման, նստունակության արտահայտված խնդիրներ, այսինքն՝ անում է այն, ինչ ուզում է, կարծես չլսելով և չարձագանքելով այլ մարդկանց խոսքին,
2. Համակարգչային գործունեության արգելման և սահմանափակման դեպքում բնորոշվում է հուզական անկայուն դրսևորումներով՝ իրեր նետելով, հարվածելով, լացով, տարբեր այլ կամակորություններով,
3. Վերացական մտածողության թույլ զարգացվածությամբ՝ չի հասկանում և ընկալում խոսքային հրահանգները, հետևապես չի կարողանում կատարել դրանք,
4. Սահմանափակ բառապաշարով և կրկնխոսություններով՝ գրեթե միշտ կրկնում է դիմացինի խոսքը, իմաստավորված խոսքը գրեթե բացակայում է,
5. Ինքնաբերական վարքով՝ չի ընկալում և հասկանում վարքի կանոնները,

հետևապես՝ չի ենթարկվում դրանց,

6. Համագործակցության բացակայությամբ՝ խաղում է միայնակ, չի կարողանում խմբային խաղեր խաղալ,
7. Դժվարությամբ է արձագանքում անվանը:

Ելնելով վերոնշյալ վերլուծություններից՝ համակարգչային կախվածություն ունեցող երեխաների հետ հոգեբանամանկավարժական աշխատանքները հարկ է կառուցել հետևյալ ուղղություններով.

1. Համակարգչային գործունեության սահմանափակում: Համակարգչային գործունեության սահմանափակումը հարկ է կատարել աստիճանաբար, փուլ առ փուլ՝ համատեղ երեխայի մոտ ակտիվացնելով այլ հետաքրքրություններ՝ կապված կենդանի հուզական շփման հետ: Այսինքն՝ երեխային պետք է տալ այլընտրանք, որը գերակա կլինի իր համար, ինչի շնորհիվ նա հետզհետե կհրաժարվի համակարգչային գործունեությունից:
2. Կենդանի շփում, երկխոսությունների, հրահանգների հաճախակի կիրառում, երեխայի գործողությունների խոսքային մեկնաբանում: Կենդանի հուզական շփումը կզարգացնի երեխայի խոսքը՝ ակտիվացնելով նաև հոգեկան զարգացումը: Ուստի, այս երեխաները հաճախակի պետք է գտնվեն մարդկանց միջավայրում, այցելեն տարբեր մարդաշատ վայրեր՝ խանութներ, խաղահրապարակներ, մանկական ժամանցի կենտրոններ, ներկա լինեն տարբեր խնջույքների, միջոցառումների և այլն:

Հրահանգների կիրառումը հարկ է սկսել պարզ հրահանգներից, օրինակ՝ «լույսը միացրո՛ւ», «դուռը բացի՛ր»: Եթե երեխան չի հասկանում պարզ հրահանգները, անհրաժեշտ է օգնել նրան, նախ՝ հրահանգի հետ միասին երեխայի հետ անելով այդ գործողությունը, ապա՝ ժեստերի միջոցով երեխային ուղղորդել և մատնանշել, թե ինչ պետք է նա անի: Անհրաժեշտ է նաև պարզ և հակիրճ՝ 2-3 բառով մեկնաբանել երեխայի գործողությունները, օրինակ՝ «դու նստում ես աթոռին», «ջուր ես խմում», «լվացվում ես» և այլն:

3. Համատեղ ուշադրության ձևավորում, համատեղ գործունեության իրականացում: Այս դեպքում մասնագետը և ծնողը պետք է սովորեցնեն երեխային խաղալ միասին: Հարկ է սկսել պարզ խաղերից,

օրինակ՝ «գնդակի նետում», «խաղեր օղակներով՝ թռչել օղակի մեջ, դուրս գալ, անցնել միջով», «խաղ սառույցով ապակե սեղանի վրա», «խաղեր օճառապղպաղակով» և այլն: Երբ ծնողը նկատում է, որ երեխան միայնակ է խաղում, անմիջապես պետք է միջամտի և միասին խաղա նրա հետ: Խաղալիս ցանկալի է, որ երեխան ու մեծահասակը միմյանց հետ փոխանակեն առարկաները՝ «Տուր, վերցրու, դիր» հրահանգները կիրառելով: Ուշադրության կենտրոնացման համար շատ կարևոր են ինքնակենտրոնացման վարժությունները, դրանցից են «ամրակների ամրացումը երեխայի հագուստին», «օղակների տեղադրումը ձեռքերին և ոտքերին», «փոքրիկ գնդակների թաքցնումը հագուստի մեջ», ինչը ստիպում է նրան ուշադրությունը կենտրոնացնել և գտնել ամրակները, հանել օղակներն ու փոքրիկ գնդակները: Ամրակներից, օղակներից, գնդակներից ազատվելու ջանքերը նույնպես պետք է ուղղորդվեն խոսքային մեկնաբանմամբ՝ «հանի՛ր օղակը», «գտի՛ր գնդակը» և այլն:

4. Պրոբլեմային իրավիճակների ստեղծում՝ մտածողության զարգացման և երեխայի մոտ շփման մեջ մտնելու անհրաժեշտություն առաջացնելու նպատակով: Երեխայի համար պրոբլեմային իրավիճակների ստեղծելով՝ մասնագետը կամ ծնողը խթանում են նրա շփման ցանկությունը, մտածողության զարգացումը: Նախընտրելի է երեխայի համար թեթև աստիճանի դժվարություններ ստեղծել՝ վերցնելով իր համար շատ ցանկալի իրը, օրինակ՝ կոնֆետը, որը նա շատ է ուզում ուտել: Այդ իրը կարելի է ձեռքից ձեռք փոխել, որպեսզի երեխան փորձի վերցնել, թաքցնել, այնպես, որ նա տեսնի և ցանկանա գտնել:
5. Ոչ շաբլոնային վարքի ձևավորում, միևնույն վարքը տարբեր գործողություններով իրականացնելու ունակության զարգացում: Անհրաժեշտ է, որ երեխան միևնույն գործողությունը տարակերպ իրականացնի, օրինակ՝ ամեն օր հագնի տարբեր զգեստներ, ճաշի տարբեր վայրերում, մանկապարտեզ գնա տարբեր ճանապարհներով, խաղալիքների հետ խաղա տարբեր ձևերով, տարբեր հաջորդակա-նությամբ: Ցանկալի է, որ քնելու և արթնանալու գործողությունները լինեն տարբեր հաջորդականությամբ:

6. Կարգուկանոնի ընկալման ձևավորում, կամակորությունների հաղթահարում: Երեխան հաճախ կամակորություններ է դրսևորում, երբ նրա այդ վարքը ամրապնդվում է՝ խրախուսանքի կամ նախատինքների միջոցով: Երբ նա լացում է, իսկ մեծահասակը տրվում է այդ լացին և փորձում ամեն կերպ հանգստացնել՝ «մի լացիր», «ինչո՞ւ ես լաց լինում» արտահայտություններով, երեխան բավարարում է իր ուշադրության պահանջը և հաջորդ անգամ կրկին լաց է լինում: Երբ պատժում ես, զայրանում, նրա լացը նույնպես ամրապնդվում է: Այս դեպքում պետք է հնարավորինս ուշադրություն չդարձնել և չամրապնդել երեխայի կամակոր վարքը՝ միաժամանակ նրան այլընտրանք, այլ առավել ազդեցիկ զբաղմունք, հետաքրքրություն տալով և ամրապնդելով նրա դրական վարքը խրախուսանքների միջոցով:
7. Անվան արձագանքի ձևավորում: Անվան արձագանքը ուշադրության կենտրոնացման առաջին քայլերից է, ինչի զարգացման համար կարելի է խաղալ մի շարք խաղեր: Այդ խաղերից է «անուն գոռոցին» կամ «պահմտոցին»՝ անունը կանչելով: Քանի որ երեխան դժվարանում է արձագանքել անվանը, ցանկալի է մեծահասակներից մեկը կանչի նրան, իսկ մյուսը այդ պահին երեխային տանի նրա մոտ, կամ մեծահասակի հետ երեխան դուրս գա սենյակից և մյուսի կանչելուն պես երեխային ուղեկցի սենյակ:
8. Վերացական՝ բառատրամաբանական մտածողության զարգացում: Եթե երեխան յուրացրել է պարզ խոսքային հրահանգները, անհրաժեշտ է երեխային տալ բարդ հրահանգներ, այնպիսի հրահանգներ, որոնց իրականացումը իր տեսողական դաշտից դուրս է, օրինակ «գնա՛, սառնարանից բե՛ր խնձորը», «պահարանը բացի՛ր, գդալը բե՛ր», « հեռուստացույցի հետևում ժամացույց է դրված, գնա՛, բե՛ր ինձ մոտ» և այլն: Վերացական մտածողության զարգացման համար անհրաժեշտ է երեխային տալ տարբեր հարցեր, սկզբում՝ պարզ, հետո՝ առավել բարդ, օրինակ՝ «անունդ ի՞նչ է», «ի՞նչ է մայրիկիդ, հայրիկիդ, քույրիկիդ անունը», «ի՞նչ ես ցանկանում ուտել, խմել» և այլն: Երբ երեխան հետաքրքրված ինչ-որ բան է ուզում, օրինակ՝ ասում է «ջուր տո՛ւր», ծնողը և մասնագետը պետք է կողմնակի հարցեր տան նրան և ստանան պատասխան՝ «որտե՞ղ լցնեմ ջուրը», «բաժա-

կի մեջ», «ո՞ր բաժակի մեջ» «կապույտ, մեծ», «որտե՞ղ դնեմ բաժակը», «սեղանին» կամ, երբ երեխան ասում է՝ «դուռը բացի՛ր», պետք է հարցնել «ինչի՞ համար», «դուրս գնա՛մ», «որ ի՞նչ անես», «մեքենա քշեմ» և այդպես շարունակ և բոլոր իրավիճակներում: Եթե երեխան դժվարանում է պատասխանել, պետք է նախ նրան օգնել, հուշել, ապա նորից հարցը կրկնել, որպեսզի նա պատասխանի: Խոսքային հուշումը յուրացնելուց հետո մեծահասակը պետք է կիրառի ժեստային հուշում:

9. Երևակայության զարգացում: Երևակայության զարգացման համար կարելի է երեխային հանձնարարել տարբեր սյուժետային նկարների վերաբերյալ պատմություններ հորինել, հետո առավել բարդեցնել հրահանգը և խնդրել երեխային պատմություններ հորինել ինչ-որ թեմայի շուրջ, օրինակ՝ «Նոր Տարի» թեմայի վերաբերյալ: Կամ խաղալ «ամբողջացրու նկարը» խաղը, երբ մասնակիցները մեկը մյուսի նկարին ինչ-որ բան ավելացնելով ստանում են նոր պատկեր:
10. Շփման հմտությունների զարգացում, վարքի կանոնների յուրացում: Այս առանձնահատկությունները զարգացնելու համար պետք է կիրառել խաղեր, որոնք երեխային սկսովորեցնեն վարքի և շփման կանոնները: Քանի որ երեխայի մոտ քիչ թե շատ զարգացած է լինում վերբալ մտածողությունը, կարելի է նրա հետ խաղալ տարբեր դերասյուժետային խաղեր, որոնց օգնությամբ նա կյուրացնի շփման և վարքի կանոնները, օրինակ՝ «տուն-տունիկ», «խանութ-խանութ», «բժիշկ-բժիշկ» և այլն: Կարելի է յուրովի բեմականացնել նաև տարբեր հեքիաթներ, օրինակ՝ «Երեք խոզուկները», «Գնդիկ- բոքոնիկը» և այլն:

Ամփոփելով՝ նշենք, որ երեխայի հոգեկան զարգացումը յուրատիպ ընթացք է ստանում, երբ խոսքի զարգացման զգայուն շրջանում ընկալման, ճանաչողության և շփման դաշտում առանձնահատուկ դեր է սկսում զբաղեցնել համակարգչային գործունեությունը: Մանկահասակ երեխային ակամայից հրամցվում է այլ իրականություն, ինչը գրավում է նրան իր գույներով, տեղեկույթի հագեցվածությամբ և այլն: Փաստացի, դեռ ամբողջությամբ չճանաչելով իրեն շրջապատող իրական աշխարհը, նա, նախ և առաջ, ծանոթանում է համակարգչային աշխարհին,

որը և դառնում է երեխայի զարգացման համար առաջնահերթ իրողություն՝ երկրորդային պլան մղելով իրական աշխարհին ու շփումները:

Ընդհանրացնելով նյութի ներկայացումը՝ հարկ է նշել, որ վերոշարադրյալ երևույթները այն հիմնական ախտանշաններն են, որոնք դրսևորվում են համատեղ, միմյանց հետ փոխալայմանավորված: Ուստի, ինչ-որ իմաստով կարելի է նշել, որ նրանք ձևավորում են 21-րդ դարի համար շատ արդիական համակարգչային համախտանիշը, որը և բնորոշում է երեխայի հոգեխոսքային զարգացման ընթացքը: Նրանց մեկուսի և անկայուն դրսևորումները դեռ չեն վկայում համակարգչային գործունեության չարաշահման և կախվածության մասին: Այս համախտանիշը բնութագրվում է ժամանակային և իրադրային կայունությամբ:

Աուտիստիկ սպեկտրի խանգարումներ, հոգեբանական աշխատանքը բնորոշ դրսևորումների դեպքում

Աուտիզմն այսօր աշխարհում ամենատարածված զարգացման և շփման խանգարումն է, որը գնալով ավելի է ընդլայնվում՝ պայմանավորված տարբեր գործոններով: Զարգացած երկրներում այն առավել տարածված է՝ միգրացե պայմանավորված տեխնիկական զարգացման հետևանքներով, տնտեսական զարգացումներով, էկոլոգիայի և սննդարդյունաբերության խնդիրներով և գենային փոփոխություններով: Եթե դիտարկենք պատմական զարգացման տեսանկյունից, 21-րդ դարում կենդանի շփումը՝ որպես զարգացման կարևոր գործոն, գնալով երկրորդային դեր է զբաղեցնում (ինտերնետային կախվածություն, աշխատանքային ծանրաբեռնվածություն, գերզբաղվածություն)՝ զիջելով իր տեղը տեխնիկական շփմանը. այսօր նկատվում է ավտոմատիզացման միտում, օրինակ՝ սպասարկման վճարները, առևտրային գործողությունները, տարբեր ծառայություններ իրականացվում են տեխնիկական սարքերի օգնությամբ, ինչը նպաստում է կենդանի շփման գործոնի նվազեցմանը, մարդկանց՝ միմյանցից մեկուսացմանը:

Նշված խանգարման պատճառականության գիտական հետազոտությունների սկզբնական փուլում որոշ գիտնականների կարծիքով աուտիզմն ուղեկցում էր կենտրոնական նյարդային համակարգի հիվանդություններին (Г.И.Каплан, Б.Дж. Седок, 1994) կամ կապված էր վերջինիս անբավարարության հետ, մյուս մասն այն կապում էր նյութափոխանակության խնդիրների հետ (Б.В.Лебедев, М.Г.Блюмина, 1972): Ներկայումս ավելանում են աուտիզմի գենետիկ պայմանավորվածությունը հաստատող հետազոտությունները (Е.Вейкфилд, Е.Язбак), իսկ սոցիալական գործոնները դիտարկվում են որպես նպաստող հանգամանքներ:

Սոցիալական գործոնների թվում առանձնացնում են պատվաստումները, ծննդաբերության ընթացքում առաջացած բարդությունները, ծնողների տարիքը, նրանց ինտելեկտի զարգացման մակարդակը, համակարգչային և էկրանային կախվածությունը, սոցիալական մեկու-

սացումը:

Ենթադրվում է, որ մեծ տարիքում աուտիզմ ունեցող երեխա ունենալու ռիսկն ավելի մեծ է: Կա տեսակետ, որ բարձր ինտելեկտով ծնողների մոտ աուտիզմ ունեցող երեխա ունենալու հավանականությունը նույնպես բարձր է:

Չնայած ուղիղ կապ չկա աուտիզմի և պատվաստումների միջև, բայց շատ են դեպքերը, երբ պատվաստման բարդություններից հետո երեխայի խոսքը, վարքը հետ են զարգացել:

Կամ, որքան ընտանիքը մեկուսացված է հասարակությունից, որքան երեխայի կենդանի շփումը քիչ է, այնքան նպաստավոր պայմաններ են ստեղծվում աուտիզմի դրսևորման համար, նմանապես համակարգիչներից, պլանշետներից, գաջետներից և մնացյալ էկրաններից կախվածությունը նույնպես կարող է խթանել աուտիստիկ ախտանշանների դրսևորումը:

Հարկ է նշել, որ թվարկված սոցիալական գործոնների և աուտիստիկ սպեկտրի խանգարումների միջև կապը լուրջ գիտական հիմնավորումներ դեռևս չի ստացել և մնում է հիպոթեթիկ մակարդակում:

Դասական աուտիզմը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով.

1. Թույլ տեսողական կոնտակտ
2. Շփման ցանկության թույլ արտահայտվածություն
3. Փոխհատուցող աուտոստիմուլյացիաների առկայություն, որոնք օգնում են երեխային խեղդել անհարմարավետությունը, ուշադրություն գրավել կամ խուսափել ինչ-որ բանից: Դրանցից են՝ կրկնվող շարժումները, առարկաների հետ մանիպուլյացիաները, որոնց նպատակն է՝ կրկնել միևնույն հաճելի զգացողությունը:
4. Ստերեոտիպ, կրկնվող վարքային շարժումներ (տարուբերում է մարմինը, քայլում է ոտքերի թաթերի վրա, շարժում է թաթիկները, կրճտացնում է ատամները, փակում է ականջները)
5. Ստերեոտիպ վարքային գործողություններ (հաջորդականությամբ դասավորում է մատիտները, մեքենաները, առանձնացնում է առարկաներն ըստ գույների, քանդում և նույնությամբ կառուցում է աշտառակները)

6. Անհասկանալի, չիմաստավորված ձայների արձակումներ (տկը-տկը, պտը-պտը, հու-հու)
7. Գիտակցված խոսքի բացակայություն կամ կրկնխոսություններ
8. Ոչ ադեկվատ հույզեր և վարքային դրսևորումներ՝ ինքնաձևասում կամ ագրեսիա մյուսների նկատմամբ, անտեղի լաց և ծիծաղ
9. Վախ մարդկանցից և նոր, անծանոթ միջավայրերից
10. Աղմուկի, բարձր ձայների նկատմամբ գերզգայունություն կամ անտարբերություն
11. Ոչ կամածին ուշադրության թույլ արտահայտվածություն, անվան թույլ արձագանք
12. Պարզ և բարդ հրահանգները ընկալելու և կատարելու ցանկության թույլ արտահայտվածություն
13. Ոչ ցանկալի վարքային սովորույթներ (անպետք, կեղտոտ առարկաների համտեսում՝ ավագ, ջրաներկ, օճառ, ձեռնաշարժություն, զուգարանային գործողությունների անվերահսկելիություն)
14. Ընտրողական սնունդ (փափուկ սնունդից հրաժարում, կարմիր գույնի սնունդից խուսափում և այլն)
15. Ֆիքսվածություններ կոնկրետ առարկաների և գործողությունների վրա (խաղում է միայն մեքենաներով, դուրս է գալիս տանից միայն սիրելի տիկնիկի հետ, սիրում է միայն համակարգիչ և այլն)
16. Գերզգայունություն հպումների, մարմնական կոնտակտի նկատմամբ կամ ծայրաստիճան խուսափում մարմնական կոնտակտից
17. Անտարբերություն մարդկանց և նրանց զգացմունքների նկատմամբ, էմպատիայի թույլ արտահայտվածություն
18. Նմանակման թույլ արտահայտվածություն:

Աուտիստիկ սպեկտրի խանգարումների վերաբերյալ ընդհանուր պատկերացումներ և տեղեկություններ ստանալուց հետո անհրաժեշտ է և կարևոր անդրադառնալ վաղ մանկական աուտիզմի ախտորոշման էությանն ու հիմնական մեթոդներին: Արդի ժամանակներում վաղ տարիքում խնդրի ախտորոշման անհրաժեշտությունը բավականին կարևորվում է, քանզի ըստ մասնագետների (հոգեբան, հատուկ մանկավարժ, զարգացնող մանկաբույժ, նյարդաբան հոգեբույժ և այլն), որքան վաղ է հայտնաբերվում խնդիրը, այնքան հեշտ է կանխարգելել

վերջինիս զարգացումը և շտկել այն: Վաղ մանկական աուտիզմի ախտորոշումն իրականացվում է՝ հիմնվելով երեք հիմնական որակական խանգարումների վրա.

- ոչ բավարար սոցիալական համագործակցություն կամ վերջինիս լիովին բացակայություն
- ոչ բավարար փոխադարձ հաղորդակցություն կամ առհասարակ շփման բացակայություն
- վարքում ստերեոտիպ ձևերի առկայություն:

Վերջիններս կարևորվում են անհատական զարգացման ընթացքում, քանի որ երեխայի զարգացման կարևորագույն ցուցիչներ են և անկախ արտահայտվածության աստիճանից՝ դրսևորվում են գրեթե բոլոր իրավիճակներում: Սովորաբար նշված խնդիրները նկատվում են արդեն իսկ երեխայի կյանքի առաջին տարում, իսկ 3 տարեկանին մոտ վերջիններս դառնում են առավել նկատելի:

Առկա են աուտիզմի ախտորոշման բազմաթիվ մեթոդիկաներ, ներկայացնենք «CARS» (Childhood Autism Rating Scale) մեթոդիկան՝ «Վաղ մանկական աուտիզմի գնահատման սանդղակը»:

1. Փոխհարաբերությունները մարդկանց հետ

1 բալ-Մարդկանց հետ շփվելիս որևէ ակնհայտ դժվարություններ և շեղումներ չկան: Երեխայի վարքը համապատասխանում է տարիքին, կարող է նկատվել մի փոքր շփոթվածություն, ամաչկոտություն կամ անհանգստություն այն պահին, երբ դիմում են իրեն, բայց դա նորմայի սահմանում է:

1,5 բալ - (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ – Փոխհարաբերություններում փոքր-ինչ դժվարություններ են նկատվում: Երեխան կարող է խուսափել աչքերի կոնտակտից, խուսափել մեծահասակներից կամ դառնալ նյարդային, եթե ցանկանում են գրավել իր ուշադրությունը, կարող է լինել շատ ամաչկոտ, չարձագանքել, երբ դիմում են իրեն, ավելի շատ է կպած ծնողներին, քան հասակակից այլ երեխաները:

2,5 բալ - (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ - Փոխհարաբերություններում նկատվում են մեծ դժվարու-

թյուններ: Երեխան հաճախ անտարբեր է, տպավորություն է ստեղծվում, որ չի նկատում մեծերին: Անընդհատ անհրաժեշտ են պարտադրող մեթոդներ՝ նրա ուշադրությունը գրավելու համար: Երեխան հաճախ շփման մեջ նախաձեռնող չէ:

3,5 բալ - (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ - Փոխհարաբերություններում առկա են չափազանց ակնհայտ դժվարություններ: Երեխան միշտ անտարբեր է և չի նկատում, թե ինչ են անում մարդիկ: Երեխան երբեք չի արձագանքում և չի նախաձեռնում շփում մարդկանց հետ: Միայն շատ համառ ջանքերից հետո կարելի է գրավել երեխայի ուշադրությունը:

2. Նմանակում

1 բալ-Ճիշտ նմանակում: Երեխան կարողանում է նմանակել ծայները, բառերը, շարժումներն՝ իր տարիքին համապատասխան:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ- նմանակումը փոքր-ինչ նորմալ չէ՝ մեծամասամբ երեխան նմանակում է պարզունակ վարքի ձևերը՝ ծափ տալը, պարզ ծայները: Երբեմն նմանակում է խթանելուց հետո կամ ուշացումով:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ-Նկատվում են մեծ դժվարություններ նմանակման մեջ: Երեխան հազվադեպ է նմանակում և դա մեծահասակի կողմից մեծ ջանքեր և օգնություն է պահանջում: Հաճախ ուշացումով է նմանակում:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ-Նկատվում են արտահայտված խնդիրներ նմանակման մեջ: Երեխան շատ հազվադեպ է նմանակում կամ առհասարակ չի նմանակում ծայներ, բառեր, շարժումներ՝ նույնիսկ մեծահասակի կողմից մեծ ջանքերի և օգնության դեպքում:

3. Հուզական հակազդումներ

1 բալ- Հուզական հակազդումները համապատասխանում են տարիքին և իրավիճակին: Երեխան արտահայտում է հուզական հակազդումների համապատասխան տեսակ և դա արտացոլվում է նրա դեմքի արտահայտության մեջ, շարժումներում և շարժումներում:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ-Հուզական հակազդումները փոքր-ինչ աղեկվատ չեն: Երբեմն երեխան արտահայտում է ինչ-որ չափով ոչ համապատասխան հույզեր: Հակազդումները երբեմն կապված չեն շրջապատի օբյեկտների և շուրջը տեղի ունեցող իրադարձությունների հետ:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ - Հուզական հակազդումները հաճախ աղեկվատ չեն: Երեխան ցուցադրում է հուզական հակազդումների անհամարժեքության կոնկրետ նշաններ ըստ տեսակի և աստիճանի: Հակազդումները կարող են լինել բավականին ուշացած, կամ չափազանցված կամ էլ իրավիճակի հետ չկապված: Կարող է ծիծաղել կամ զայրանալ, նույնիսկ, երբ ոչ մի ակնհայտ իրադրություն կամ առարկա չի լինում:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ- Նկատվում է հուզական հակազդումների չափազանց մեծ անհամարժեքություն: Հակազդումները ծայրահեղ հազվադեպ են համապատասխանում իրավիճակին, երբ երեխան գտնվում է կոնկրետ տրամադրության մեջ, շատ դժվար է այն փոխել կամ ընդհակառակը՝ երեխայի հույզերը հաճախակի փոփոխվում են, երբ ընդհանրապես առիթ չկա:

4. Մարմնի տիրապետում

1 բալ - Երեխան շարժվում է թեթև, ճկուն, կոորդինացիան համապատասխանում է տարիքին:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ - Մարմնի տիրապետումը փոքր-ինչ բնականոն չէ՝առկա են որոշ ոչ մեծ տարօրինակություններ, օրինակ՝ շարժումներում անփութություն, կրկնվող շարժումներ, վատ կոորդինացիա:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ- Մարմնի տիրապետման մեջ նկատվում են մեծ դժվարություններ: Երեխայի վարքը անսովոր է կամ տարօրինակ՝ տվյալ տարիքի համար, կարող է ներառել մատների տարօրինակ շարժումներ, մարմնի կամ մատների տարօրինակ դիրքեր, կարող է դրսևորել ինքնաազդու, պտտվել, տարուբերել, ճոճել մարմինը, թափահարել ձեռքերը, ոտնաթաթերի վրա քայլել:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ- Նկատվում են չափազանց ակնհայտ խնդիրներ մարմնի տիրապետման մեջ: Վերոնշյալ շարժումները լինում են շատ ինտենսիվ, և հաճախ և դրանք կանխելու ջանքերը զուր են:

5. Առարկաների հետ գործողություններ

1 բալ- Երեխան դրսևորում է բնականոն հետաքրքրություններ խաղալիքների և առարկաների նկատմամբ և կիրառում է դրանք ըստ նշանակության:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ- Խաղալիքների և այլ առարկաների նկատմամբ հետաքրքրությունները փոքր-ինչ բնականոն չեն, երեխան կարող է դրսևորել ոչ տիպիկ հետաքրքրություն խաղալիքների նկատմամբ կամ խաղալ ոչ համապատասխան ձևով, օրինակ՝ ուտել այն կամ թխթխկացնել նրանով:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ-Նկատելի ոչ բնականոն հետաքրքրություն կամ խաղալիքների և այլ առարկաների ոչ համարժեք կիրառում: Երեխան կարող է դրսևորել թույլ հետաքրքրություն խաղալիքների կամ այլ առարկաների նկատմամբ կամ միտված լինել առարկաները կամ խաղալիքները տարօրինակ ձևով կիրառելու: Նա կարող է կենտրոնանալ խաղալիքի ինչ-որ մասի վրա, անընդհատ պտտել առարկայի կոնկրետ մասը կամ խաղալ միայն մեկ առարկայով:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ- Չափազանց արտահայտված ոչ բնականոն հետաքրքրություն խաղալիքների նկատմամբ և տարօրինակ կիրառում: Երեխան կարող է դրսևորել վերոնշյալ կետերում ներկայացված վարքը, սակայն մեծ հաճախականությամբ և ինտենսիվությամբ: Երեխային շատ դժվար է շեղել, որքան էլ ջանքեր կիրառվեն:

6. Հարմարվողականությունը փոփոխություններին

1 բալ- Տարիքին համապատասխան արձագանք փոփոխություններին: Անկախ նրանից, թե ինչպես է երեխան ընկալում և մեկնաբանում առօրյա փոփոխությունները, նա ընդունում է այն առանց ակնհայտ ցնցումների:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ- Փոքր-ինչ ոչ բնականոն հարմարում փոփոխություններին: Երբ մեծահասակները փորձում են փոխել զբաղմունքների կամ առաջադրանքների ընթացքը, երեխան շարունակում է անել այն, ինչ անում էր կամ օգտագործել միևնույն առարկաները:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ- Նկատելի ոչ բնականոն հարմարում փոփոխություններին: Երեխան ակտիվորեն ընդդիմանում է ստեղծված կարգի փոփոխությանը, ձգտում է շարունակել նախկին զբաղմունքը և դժվար է նրան շեղել դրանից: Կարող է զայրանալ կամ տխրել, երբ գործողությունների սահմանված կարգը խախտվում է:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ - Չափազանց ակնհայտ ոչ բնականոն հարմարում փոփոխություններին:

Երեխան դրսևորում է կտրուկ հակազդումներ փոփոխություններին: Եթե փորձում ենք փոխել նրա գործողություններն ու զբաղմունքները, երեխան դառնում է անկառավարելի, չի համագործակցում և դառնում է չափազանց զայրացկոտ:

7. Տեսողական հակազդումներ

1 բալ- Տարիքին համապատասխան տեսողական հակազդում: Երեխայի տեսողական հակազդումները բնականոն են, տեսողությունը կիրառվում է մյուս զգայարանների հետ համատեղ որպես նոր առարկաների հետազոտման միջոց:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ- Փոքր-ինչ ոչ բնական տեսողական հակազդում: Երեխային անհրաժեշտ է պարբերաբար հիշեցնել, որպեսզի նայի առարկաներին: Երեխան կարող է առավել հետաքրքրված լինել հայելու մեջ իր արտացոլանքով կամ լույսով, քան՝ հասակակիցներով, կարող է երբեմն ուղղակի նայել տարածության մեջ և խուսափել նայել մարդկանց աչքերին:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ- Նկատելի ոչ բնական տեսողական հակազդում: Երեխային հաճախ պետք է հիշեցնել, որ նա պետք է նայի այն ուղղությամբ, որտեղ

գործողություն է կատարում: Նա կարող է նայել տարածության մեջ, խուսափել նայել մարդկանց աչքերին, անսովոր տեսողական անկյան տակ նայել առարկաներին կամ մոտեցնել առարկան աչքերին շատ մոտ:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ- Չափազանց նկատելի ոչ բնական տեսողական հակազդում: Երեխան մշտապես խուսափում է նայել մարդկանց կամ կոնկրետ առարկաներին և դրսևորում է վերոնշյալ տեսողական տարօրինակությունների ծայրահեղ ձևեր:

8. Լսողական հակազդումներ

1 բալ- Երեխայի լսողական հակազդումը բնականոն է և համապատասխանում է տարիքին: Լսողությունը օգտագործվում է մյուս զգայաբանների հետ համատեղ:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ- Փոքր-ինչ ոչ նորմալ լսողական հակազդում: Կարող է լինել ոչ բավարար պատասխան հակազդում կամ կոնկրետ ձայների նկատմամբ զգայունակության ոչ մեծ բարձրացում: Ձայնի նկատմամբ հակազդումը կարող է լինել ուշացած, կարող է հարկ լինի կրկնել ձայները՝ երեխայի ուշադրությունը գրավելու նպատակով: Երեխան կարող է զայրանալ արտաքին ձայներից:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ- Նկատելի ոչ նորմալ ձայնային հակազդում: Երեխայի մոտ ձայների նկատմամբ հակազդումները փոփոխվում են՝ հաճախ անտեսում է ձայները, երբ նրանք արտաբերվում են առաջին մի քանի անգամները, որոշ արտաքին ձայների դեպքում կարող է վախենալ կամ փակել ականջները:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ- Չափազանց նկատելի ոչ նորմալ ձայնային հակազդում: Երեխան դրսևորում է սուր արտահայտված գերզգայունակություն կամ անտարբերություն ձայների նկատմամբ:

9. Համի, հոտառության, շոշափելիքի և հպման հակազդումները և նրանց կիրառումը

1 բալ- Համի, հոտառության և հպման բնական հակազդումներ և կիրառում: Երեխան հետազոտում է առարկաներն իր տարիքին համապատասխան: Առարկաների համի և հոտի նկատմամբ ունի բնական վերաբերմունք, ցավի զգացողության դեպքում հակազդումները նորմայի սահմանում են:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ- Համի, հոտառության և հպման զգայությունների նկատմամբ փոքր-ինչ ոչ բնական հակազդում և կիրառում, երեխան երբեմն առարկաները տանում է բերանը, կարող է հոտոտել և փորձել ոչ ուտելի առարկաների համը: Կարող է չարձագանքել կամ սուր արձագանքել թույլ ցավին, որը բնականոն զարգացմամբ երեխան կընկալեր որպես անհարմարավետություն:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ-Համի, հոտի և հպման նկատելի ոչ նորմալ հակազդումներ և կիրառում: Երեխան շատ սուր է արձագանքում, երբ դիպչում են իրեն, հաճախ հոտոտում և համոտեսում է առարկաներն ու մարդկանց:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ- Համի, հոտի և հպման չափազանց ակնհայտ ոչ նորմալ հակազդումներ և կիրառում: Երեխան մշտապես հոտ է քաշում, համոտեսում առարկաներն ու մարդկանց և անում է դա ոչ թե հետազոտելու նպատակով, այլ՝ զգայական ապրումներ ունենալու համար: Երեխան առհասարակ ցավ չի զգում կամ շատ սուր է արձագանքում փոքր անհարմարավետությանը:

10. Վախ և հուզական անհավասարակշռվածություն

1 բալ – Վախերի և հուզականության բնականոն մակարդակ՝ երեխայի վարքը համապատասխանում են տարիքին և իրավիճակին:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ- Փոքր-ինչ ոչ բնական վախեր և հուզականություն: Երեխան ժամանակ առ ժամանակ դրսևորում է չափազանց ուժեղ կամ շատ թույլ վախ առարկաների նկատմամբ՝ ի տարբերություն բնականոն զարգացմամբ հասակակից երեխաների:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ- Նկատելի ոչ բնական վախեր և հուզական անհավասարակշռվածություն: Երեխան հաճախ դրսևորում է չափազանց ուժեղ կամ շատ թույլ վախ առարկաների և իրավիճակների նկատմամբ՝ ի տարբերություն նույնիսկ իրենից փոքր երեխաների:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ- Չափազանց սուր վախեր և հուզական անհավասարակշռվածություն՝ վախն առկա է նույնիսկ անվտանգ առարկաների և իրավիճակների հետ կրկնակի փորձի դեպքում: Շատ դժվար է հանգստացնել երեխային: Երեխան, ընդհակառակը, չի նկատում վտանգը, որից տարեկից մյուս երեխաները խուսափում են:

11. Խոսքային հաղորդակցում

1 բալ- Խոսքի զարգացումը համապատասխանում է տարիքին:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ- Փոքր-ինչ ոչ նորմալ խոսքային հաղորդակցում՝ խոսքն ընդհանուր առմամբ ուշացած է: Խոսքի մեծ մասը իմաստավորված է, միաժամանակ առկա են որոշ կրկնխոսություններ կամ կարող է շփոթել դերանունները: Ժամանակ առ ժամանակ տարօրինակ բառեր է կիրառում:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ- Նկատելի ոչ բնական խոսքային հաղորդակցում՝ գիտակցված խոսքը գրեթե բացակայում է: Եթե այն կա, ապա խոսքային հաղորդակցումը գիտակցված և տարօրինակ խոսքի խառնուրդ է:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ- Չափազանց ոչ բնական խոսքային շփում, գիտակցված խոսք չի կիրառվում: Երեխան կարող է կենդանական ձայներ արձակել, ինչոր անսովոր հնչյուններ կրկնել, ծանոթ պարզ բառերը տարօրինակ ձևով և հնչողությամբ կիրառել:

12. Ոչ խոսքային հաղորդակցում

1 բալ- Ոչ խոսքային հաղորդակցումը համապատասխանում է տարիքին և իրավիճակին:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ- Փոքր-ինչ ոչ բնական ոչ խոսքային հաղորդակցում՝ կարող է

անորոշ ցույց տալ կամ ձգվել դեպի ցանկալի առարկան, այն դեպքում, երբ իր տարեկից երեխան ժեստերով կարող է բացատրել՝ ինչ է ուզում:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ- Նկատելի ոչ բնական ոչ խոսքային հաղորդակցում՝ երեխան մասամբ կարող է ժեստերով արտահայտել ցանկությունները, սակայն չի կարող հասկանալ մյուսների ոչ խոսքային հաղորդակցումը:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ- Չափազանց արտահայտված ոչ բնական ոչ խոսքային հաղորդակցում՝ երեխան միայն կիրառում է մտացածին, տարօրինակ ժեստեր, որոնք նկատելի իմաստ չունեն և չի հասկանում մյուսների ժեստերն ու դեմքի արտահայտությունը:

13. Ակտիվության մակարդակ

1 բալ- Ակտիվության մակարդակը համապատասխանում է տարիքին և իրավիճակին:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ- Փոքր-ինչ ոչ բնական ակտիվության մակարդակ՝ երեխան կա՛մ մի փոքր ավելի շարժում է, անկարգապահ կա՛մ ալարկոտ և դանդաղկոտ: Ակտիվության մակարդակը թույլ ազդեցություն է ունենում հաջողության վրա:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ- Նկատելի ոչ բնական ակտիվության մակարդակ՝ երեխան կարող է լինել շատ ակտիվ և դժվար կառավարելի: Նա կարող է ունենալ անսպառ էներգիա և չկարողանալ քնել: Եվ, ընդհակառակը, երեխան կարող է լինել բավականին իներտ և մեծ խթաններ անհրաժեշտ լինեն նրան շարժելու համար:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ- Չափազանց արտահայտված ոչ նորմալ ակտիվության մակարդակ՝ երեխան դրսևորում է ակտիվության ծայրահեղ վիճակներ և կարող է նույնիսկ փոփոխվել մի ծայրահեղ վիճակից մյուսին:

14. Ինտելեկտուալ արձագանքի մակարդակն ու աստիճանը

1 բալ- Ինտելեկտը համաչափ է զարգացած բոլոր ոլորտներում՝ երե-

խան իր տարեկիցների նման խելացի է և չունի ինչ-որ արտասովոր ինտելեկտուալ հմտություններ կամ խնդիրներ:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ- Ինտելեկտի փոքր-ինչ ոչ բնական դրսևորում՝ երեխան այնքան խելացի չէ, որքան տարեկիցները, տարբեր ոլորտներում հմտությունները որոշ չափով թույլ են զարգացած:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ- Ինտելեկտի նկատելի ոչ բնական դրսևորում՝ երեխան ընդհանուր առմամբ այնքան էլ խելացի չէ, բայց մեկ կամ մի քանի ինտելեկտուալ ոլորտներում ֆունկցիոնալությունը նորմալ է:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ- Ինտելեկտի չափազանց արտահայտված ոչ բնական դրսևորում՝ այն դեպքում, երբ երեխան տարեկիցների համեմատ խելացի չէ, բայց մեկ կամ մի քանի ինտելեկտուալ ոլորտներում կարող է ունենալ նույնիսկ ավելի բարձր ֆունկցիոնալություն:

15. Ընդհանուր տպավորություն

1 բալ- Սա աուտիզմ չէ, երեխան չունի աուտիզմին բնորոշ ախտանշաններ:

1,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

2 բալ- Աուտիզմի մեղմ տեսակ՝ երեխայի մոտ մի քանի նշաններ կան:

2,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

3 բալ- Նկատելի աուտիզմ է՝ երեխան կոնկրետ ախտանշաններ է դրսևորում:

3,5 բալ- (եթե հարևան պնդումների միջև է)

4 բալ- Ծանր աուտիզմ է՝ երեխան դրսևորում է շատ ախտանշաններ և աուտիզմի ծայրահեղ աստիճան:

Տվյալների վերլուծություն

15-30- աուտիզմ չունեցող երեխա

30-37- աուտիզմի թեթև աստիճան

37-60- ծանր աուտիզմ

Հոգեբանական տեխնիկաներ և հնարներ աուտիստիկ սպեկտորի խանգարումների դեպքում

1. Տեսողական կոնտակտի զարգացում

- Տեսողական կոնտակտի զարգացման նպաստավոր պայման է տեսողական ընկալման դաշտի սահմանափակումը և երեխայի հետ շփման օպտիմալ տարածության հաստատումը, բնականաբար մեծ հեռավորության դեպքում ավելի դժվար կլինի զարգացնել այն: Վերջինիս համար ցանկալի է, որպեսզի աշխատանքները իրականացվեն ոչ շատ ընդարձակ սենյակում, հնարավորության դեպքում աշխատանքային սեղանը տեղադրել սենյակի անկյունում՝ երեխայի շարժողական ակտիվությունը կարգավորելու և ուշադրության կենտրոնացվածությունը ապահովելու համար:
- Այն իրը, որը երեխան շատ է ցանկանում ստանալ և աչքերով հետևում է դրան, մասնագետը պետք է մոտեցնի իր աչքերին, որսա տեսողական կոնտակտը, նոր այն փոխանցի երեխային:
- Խաղ ծածկոցով կամ կտորե խողովակով: Երեխան մտնում է կտորե խողովակի մեջ և խաղերը կազմակերպվում են՝ սահմանափակելով նրա տեսողական ընկալման դաշտը և շփման տարածությունը: Կամ՝ երեխան պառկում է ծածկոցի մեջ, և օրորելով՝ մասնագետը խոսում կամ խաղում է նրա հետ:
- Խաղ «Ցանցերի և ճաղերի միջով»: Ցանցերի և ճաղերի օգնությամբ մասնագետը ակտիվացնում է երեխայի հետաքրքրությունը և, որսալով նրա հայացքը, կենտրոնացնում է երեխայի ուշադրությունը իր հայացքի վրա և խաղում նրա հետ:
- Խաղ օճառապղպաղակով: Պղպաղակի համար նախատեսված ծողը մասնագետը մոտեցնում է աչքերին և հնարավորինս երկար փորձում պահել երեխայի հայացքը՝ ակտիվացնելով նրա հետաքրքրությունը և, երբ երեխայի ցանկությունը աճում է, մասնագետը իրականացնում է նրա ցանկությունը:
- Խաղ «Ծիկ» դռան նեղ անկյունից, մեծ անցքով ստվարաթղթե խողովակի միջից, տնակի պատուհանիկից, որտեղ տեսողական ընկալման դաշտն ավելի նեղ է լինում:

2. Անվան արձագանքի ձևավորում

- Խաղ «Թաքստոց»: Կողքի սենյակից կամ վարագույրի հետևից մեծահասակներից մեկը կանչում է երեխայի անունը, մյուս մեծահասակը օգնում է երեխային գնալ նրա մոտ: Կարելի է ավելի զարգացնել այդ խաղը, օրինակ՝ երեխան մեծահասակի հետ սպասում է դռան հետևում, երբ անունը տալիս են, դուռը բացում են և ներս մտնում, այնքան ժամանակ, մինչև երեխան ինքնուրույն անի դա:
- Խաղ «Անուն գոռոցի»: Երեխաները ռետինե, թղթե գնդակը կամ փուչիկը հերթականությամբ գցում են միմյանց՝ իրենց անունները ասելով և բռնելով: Եթե երեխաները դժվարանում են մեծահասակները փորձում են օգնել նրանց: Հետո երեխաները մեկ գծով շարվում են, իսկ մյուս երեխան կանգնում է դեմ դիմաց և, ընկերոջ անունը բացականչելով, փոխանցում է նրան:
- Խաղ զանգով կամ սուլիչով: Մասնագետը հնչեցնում է զանգը կամ սուլում է սուլիչով, երբ երեխան պատվում է, տալիս է նրա անունը՝ այդպիսով կենտրոնացնելով երեխայի ուշադրությունը իր անվանը:
- Խաղ «Պահմտոցի»: Երեխան թաքնվում է ծածկոցի տակ, մասնագետը կանչում է նրա անունը, հետո բացում է այն: Կամ երեխան թաքնվում է ինչ-որ մի տեղ, մեծահասակը կամ մեկ ուրիշ երեխա փնտրում է նրան՝ անունը բացականչելով և ի վերջո գտնում նրան:

3. Ընդօրինակման և նմանակման զարգացում

- Ընդօրինակման զարգացման համար մասնագետը երեխային խնդրում է իր կատարած շարժումներից, գործողություններից, արտաբերած ձայներից անմիջապես հետո կրկնել դրանք:
- Խաղ երաժշտական գործիքներով: Օրինակ՝ մասնագետը հարվածում է թմբուկին, նվագում է շվիով և խնդրում երեխային նույնությամբ կրկնել իր գործողությունը:
- Խաղ մուրճիկով: Մասնագետը մուրճիկով հարվածում է փայտիկներին կամ փոքրիկ գնդակներին, երեխան կրկնում է:
- Խաղ գնդակով: Երեխան ընդօրինակում է գնդակով խաղերը, օրինակ՝ մասնագետը գնդակը գցում է վերև, ծափ է տալիս և երեխային առաջարկում կրկնել: Մեկ այլ դեպքում՝ գնդակը հարվածում է հատակին, բռնում և կրկին առաջարկում նրան կրկնել այն: Նմանակ-

ման խաղերից է նաև գնդակի գլորումը, նետումը ցանցի կամ տնակի մեջ և այլն:

- Խաղ օղակներով կամ ռետինե անիվներով: Մասնագետը անցնում է օղակի միջով, ցատկում է օղակի մեջ, պտտում է այն և անմիջապես առաջարկում կրկնել իր կատարած շարժումներն ու գործողությունները:
- Խաղ բուրգերով, լեգոներով, խորանարդիկներով և այլն: Մասնագետն առաջարկում է երեխային միմյանց հերթափոխելով դասավորել կամ տեղադրել այդ խաղերը:
- Շարժումների ընդօրինակում: Մասնագետը առաջարկում է կրկնել իր կատարած շարժումները՝ ծափ, օդային համբույր, բարևի և հաջողության ժեստ, մարմնամարզության տարրեր, շարժողական խաղեր՝ «Գնացք-գնացք», «Թզուկ-հսկա» և այլն:
- Սյուժետադերային խաղեր: Պարզագույն գործողությունների ընդօրինակումից հետո կարելի է իրկանացնել ավելի բազմատարր՝ սյուժետադերային խաղերի նմանակում: Օրինակ՝ մասնագետը կերակրում է, քնեցնում է տիկնիկին՝ խնդրելով կրկնել նույն գործողությունը:

4. Ոչ կամաժին ուշադրության զարգացում

- Ոչ կամաժին ուշադրության զարգացման համար մասնագետը երեխայի ուշադրությունը ակամայից սևեռում է միջավայրային ազդակների վրա: Երբ երեխան խաղում է, մասնագետը երաժշտական գործիքով, սուլիչով կամ զանգով ձայներ է արձակում, ծափ է տալիս, ջուր ցողում նրա վրա, լույսն է անջատում, միացնում՝ միջավայրի կողմնակի ազդակներին նրա ուշադրությունը կենտրոնացնելու համար:
- Երբ երեխան խաղում է իրեն հետաքրքրող խաղալիքներով, խաղի ընթացքում կարելի է զգուշությամբ վերցնել խաղալիքը, որպեսզի նա նկատի և ցանկանա վերադարձնել այն: Խաղի ընթացքում կարելի գնդակներ նետել նրա ուղղությամբ և այլն:

5. Ուշադրության կենտրոնացում սեփական մարմնի վրա, պրոբլեմային իրավիճակների ստեղծում:

- Պրորբլեմային իրավիճակների ստեղծումը նպաստում է երեխայի շփման ցանկության ակտիվացմանը, խոսքային հաղորդակցման նախաձեռնողականությանը, մտածողության ակտիվացմանը, ուշադրության որակների զարգացմանը, կամային որակների՝ համառության, նախաձեռնողականության, ինքնուրույնության զարգացմանը և այլն: Պրորբլեմային իրավիճակները կարող են պայմանավորված լինել մի քանի գործոններով՝
- 1. պրորբլեմային իրավիճակ, որի հիմքում ընկած է երեխայի պահանջմունքների բավարարումը:
- 2. պրորբլեմային իրավիճակ՝ պայմանավորված անհարմարավետության զգացումը հաղթահարելու ցանկությամբ:
- 3. պրորբլեմային իրավիճակ, որի հիմքում ընկած է երեխայի հետաքրքրությունը բավարարելու ցանկությունը:
- Խաղ ամրակներով: Մասնագետը ամրակները ամրացնում է երեխայի հագուստին, կամ մազերին, մատներին, այդպիսով երեխայի համար ստեղծում է պրորբլեմային իրավիճակ, անհանգստություն և նա ակամայից ուշադրությունը կենտրոնացնում է իր վրա և փորձում հաղթահարել անհարմարավետության զգացումը:
- Խաղ պարաններով: Մասնագետը պարանը թույլ փաթաթում է երեխայի ձեռքերին կամ ոտքերին՝ այն արձակելու ցանկություն առաջացնելով: Մեկ այլ դեպքում՝ գնդակները տեղադրում է հագուստի մեջ, որպեսզի երեխան ակամայից կենտրոնացնի ուշադրությունը սեփական մարմնի վրա և ցանկանա ելք գտնել այդ պրորբլեմային իրավիճակից: Նմանատիպ գործողություն կարելի է իրականացնել անձեռոցիկը սոսնձելով և մատներին, ձեռքին ամրացնելով:
- Խաղ փոքր պլաստմասե օղակներով, որոնք անցկացնում ենք երեխայի ձեռքին, ոտքին և խնդրում, որ հանի դրանք: Նմանապես նաև բարակ ռեզինե օղակները կարելի է ամրացնել մատիկներին:
- Խաղ «փորձիր հասնել խաղալիքին»: Երեխայի սիրելի, իրեն հետաքրքրող առարկան ձեռքից ձեռք փոխանցել, թաքցնել, զգել խողովակի մեջ, այնքան, մինչև չհոգնի սիրելի առարկայի հետևից գնալուց: Իմաստը երեխայի համար դժվարություն, խնդիր ստեղծելն է՝ մտածողությունը ակտիվացնելու համար:

6. Շոշափողական զգայությունների ակտիվացում, հուզական լարվածության նվազեցում, ռելաքսացիա

- Խաղ հատիկաընդեղենով՝ սիսեռով, ոլոռով ոսպով, լոբիով, հնդկաձավարով և այլն: Մասնագետի հետ միասին երեխան հատիկաընդեղենով կատարում է տարատեսակ գործողություններ՝ ապլիկացիաներ, ձեռքի տարբեր աշխատանքներ: Կարելի է այդ հատիկները լցնել թափանցիկ տարայի մեջ և սեղմել ձեռքերով, փոխանցել մի ձեռքից մյուսը, լցնել ձեռքերի վրա և այլն: Օգտակար է նաև բալի կորիզներով լցված լողավազանը, որոնց մեջ երեխան ընկղմվում է ողջ մարմնով:
- Խաղ տարբեր խոզանակներով, վրձիններով: Մասնագետը հերթականությամբ մերսում է երեխայի վերջույթները տարբեր չափսերի խոզանակներով, վրձիններով:
- Խաղ ջրով, ջրաներկով: Օրինակ՝ մասնագետը ձեռքի համար նախատեսված ջրաներկով ներկում է երեխայի ձեռքի ափը, հետո՝ տպում մեծ սպիտակ թղթի վրա, կամ երեխան նկարում է մատիկներով: Մեկ այլ դեպքում՝ երեխան ջրաներկով և վրձինով նկարում է ջրի մեջ կամ փրփուրի վրա:
- Խաղ ծեփով, խմորով, կավով: Օրինակ՝ մասնագետի հետ միասին երեխան պատրաստում է ցեխագնդիկներ, խմորագնդիկներ, տարբեր առարկաներ՝ համանման կաղապարներով:
- Խաղ հատուկ մշակված ավազով կամ սպիտակաձավարով: Մասնագետը երեխայի հետ միասին լուսային սեղանների վրա զետեղված սպիտակաձավարի կամ ավազի վրա նկարում է տարբեր առարկաներ և իրավիճակներ, թաքցնում տարբեր իրեր և երեխան փորձում է գտնել ու անվանել դրանք:
- Խաղ տարատեսակ՝ հարթ, գոգավոր, մանր, մեծ, գունավոր քարերով:
- Խաղ տարբեր չափսերի ոգնիաձև գնդակներով:
- Խաղ ճոճերով, ծածկոցներով և մերսող գորգերով: Երեխայի հուզական լարվածության նվազեցման համար բավականին արդյունավետ է ճոճերի միջոցով տարատեսակ խաղեր կազմակերպելը: Մասնագետը կարող է նաև երեխային պարուրել փափուկ ծածկո-

ցով՝ օգնելով նրան հետ պարուրվել:

7. Ուշադրության կենտրոնացում, կայունություն

- Խաղ ներարկիչներով կամ ռետինե խողովակով: Մասնագետը թափանցիկ տարայի մեջ ջուր է լցնում, ջրի մեջ երեխայի օգնությամբ տեղադրում է տարբեր թեթև առարկաներ՝ խաղալիք մրգեր, բանջարեղեններ, խխունջներ, քարիկներ և այլն, ապա՝ երեխան ներարկիչի մեջ ջուր է հավաքում և նշան բռնելով՝ ցողում ջուրը այդ առարկաների վրա: Այդ գործողությունը կարելի է իրականացնել նաև ամռանը՝ ջուրը ներարկիչով մարդկանց վրա ցողելով կամ ռետինե խողովակով ջրելով մարդկանց, ծառերը, ծաղիկները, քարերը և այլն:
- Խաղ ջրով: Թափանցիկ տարայով ջրի մեջ մասնագետը երեխայի հետ տեղադրում է տարբեր գույնի օղակներ կամ այլ առարկաներ, ապա՝ վրձինով կամ փայտիկներով փորձում է որսալ այդ առարկաները և տեղադրել այլ տարայի մեջ: Կարելի է նաև ջրաներկով ներկել և պղտորել ջուրը, ապա ջրի մեջ թաքցնել տարբեր առարկաներ, քարիկներ, թղթի կտորներ, որպեսզի երեխան փայտիկով գտնի և դուրս բերի դրանք:
- Խաղ մագնիսով: Խաղալիք ուռկանի մագնիսե հատվածով երեխան որսում է ձկնիկներին կամ կտրատում է մագնիսով ամրացված խաղալիք բանջարեղեններն ու մրգերը:
- Խաղ մուրճիկով: Երեխան փորձում է մուրճիկով հարվածել գնդակներին, փայտիկներին, գնդակը գցում է ցանցը կամ խողովակի մեջ:
- Խաղ հատիկաընդեղենով: Երեխան հատիկաընդեղենը լցնում է նեղ անցքով տարաների, շշերի մեջ:
- Խաղ մկրատով: Մասնագետի օգնությամբ երեխան մկրատով կտրում է թուղթը՝ ուղիղ գծով, հետո՝ կոր, այնուհետև՝ կտրում է տարբեր պատկերներ:
- Խաղ լապտերով կամ ջրի ցողիչով: Մույթ կամ լուսավոր վայրում մասնագետը անկանոն տեղադրում է խաղալիքները և խնդրում, որ երեխան լապտերիկով գտնի դրանք, օրինակ՝ բանանը, ափսեն, բաժակը և այլն: Նույն գործողությունը կարելի է իրականացնել ջրի ցողիչով՝ խնդրելով երեխային գտնել և ջրով ցողել առարկաները: Խաղի ընթացքում, երբ երեխան գտնում է առարկան, մասնագետը

վերցնում է այն, տալիս նրան և հարցնում՝ ինչի համար է, կամ ինչ ենք անում նրանով, օրինակ՝ ինչի համար է բաժակը, մատիտով ինչ ենք անում և այլն: Հաջորդիվ կարելի է փոխվել դերերով, այս դեպքում երեխան է նշում, թե որ խաղալիքը մասնագետը փնտրի լապտերիկով և ինչը ջրի ցողիչով:

- Խաղ լաբիրինթոս: Աթոռներով, սեղաններով, օղակներով, կտորե պարկերով և այլ առարկաներով մասնագետը պատրաստում է լաբիրինթոս և երեխային օգնում անցնել դրանց միջով:
- Խաղ փուչիկներով: Փուչիկը փչել, փոխանցել միմյանց, հարվածել ձեռքով, ոտքով և այլն:

8. Պարզ և բարդ հրահանգների ուսուցում

- Մասնագետը սովորեցնում է երեխային «տուր», «վերցրու», «դիր», «արի», «գնա», «միացրու», «բացիր», «փակիր», «հանիր», «հագիր», «հավաքիր» և այլ պարզ հրահանգներ տարբեր գործողությունների միջոցով, օրինակ՝ դուռը, ծորակը բացել, փակելով, լույսը, հեռուստացույցը միացնել, անջատելով, խաղալիքները և տարբեր իրեր տալով, վերցնելով, հավաքելով և այլն: Աշխատանքի ընթացքում այն հրահանգը, որը պետք է ընկալի և յուրացնի երեխան, անհրաժեշտ է արտասանել մեկ բառով:
- Յուրաքանչյուր հրահանգ սովորեցնելիս պետք է այն ուղեկցվի գործողության հետ, օրինակ՝ «Գնա» հրահանգը սովորեցնելիս մեծահասակը կանգնում է երեխայի առջև, իսկ մասնագետը, երեխային թույլ դիպչելով, ասում է՝ «գնա-գնա»: Պետք է սկսել պարզ հրահանգներից՝ «տուր», «բացիր», «դիր»:
- «Տուր» հրահանգը ցանկալի է սովորեցնել նույնատիպ գործողություն պահանջող խաղերի օգնությամբ, երբ երեխային առաջարկվում է մի քանի անգամ կատարել նույն գործողությունը, (օրինակ՝ բուրգերը, լեգոները): Այս դեպքում մասնագետը պարբերաբար կիրառում է «տուր» հրահանգը: Եթե երեխան չի կատարում այդ հրահանգը, մասնագետը «տուր» հրահանգը հնչեցնելուն զուգահեռ երեխայի ձեռքի խաղալիքը դնում է իր ձեռքի ափի մեջ, այսինքն՝ կատարում «տուր» հրահանգի գործողությունը երեխայի օգնությամբ, բայց՝ նրա փոխարեն: Նույն կերպ ցանկալի է գործել նաև մյուս

հրահանգների դեպքում, օրինակ՝ «բացիր» հրահանգը երեխաները արդյունավետ յուրացնում են գուաշների, շշերի խցանները և դուռը բացելիս:

- «Հանիր» հրահանգը երեխաներին կարելի է սովորեցնել՝ ամրակները հագուստին ամրացնելով, գնդակները հագուստի մեջ տեղադրելով, օղակները ձեռքերին անցկացնելով՝ զուգահեռ կրկնելով «հանիր» հրահանգը մի քանի անգամ: Չափազանց կարևոր է երեխայի հետ խոսել մատչելի լեզվով և որքան հնարավոր է հակիրճ: Խոսելիս մասնագետը ցանկալի է հաճախ կիրառի այն բառերը, որոնք կան երեխայի բառապաշարում՝ միաժամանակ ստեղծելով այնպիսի իրավիճակներ, որ երեխան հաճախ կիրառի իր խոսքում առկա բառերը:
- Պարզ հրահանգները միանման գործողությունների միջոցով յուրացնելուց հետո ցանկալի է այդ հրահանգը հաճախ կիրառել կենցաղում: Երեխաները հրահանգները և առհասարակ՝ գիտելիքը առավել արդյունավետ յուրացնում են կենցաղում կիրառվող առարկաների, իրերի և գործողությունների օգնությամբ, օրինակ՝ մայրիկի հետ մրգեր, բանջարեղեններ կտրատելով, աղցաններ պատրաստելով, սառնարանից օգտվելով, փոշեկուլով հատակը մաքրելով և այլն:
- Պարզ հրահանգների յուրացումից հետո կարելի է անցնել 2 և ավել գործողություն պարունակող բարդ հրահանգների ուսուցանմանը, օրինակ՝ «վերցրու խաղալիքը դիր սեղանին» կամ՝ «բաժակը վերցրու, տար խոհանոց»: Ցանկալի է հրահանգը կրկնել մի քանի անգամ: Եթե երեխան դժվարանում է կատարել այն, մասնագետը օգնում է նրան միասին իրականացնել գործողությունը կամ կիրառում է ժեստային հուշում:

9. Համատեղ ուշադրության և համագործակցության զարգացում

Համատեղ ուշադրությունը արդյունավետ զարգանում է, երբ մասնագետը երեխայի հետ միասին կենտրոնացնում է ուշադրությունը միևնույն գործողության վրա:

- Եթե երեխան նախընտրում է միայնակ խաղալ, ցանկալի է աննկատ միջամատել և ներգրավվել խաղի մեջ՝ միասին կատարելով նույն

գործողությունը, օրինակ, եթե նա տիկնիկին օրորում է անվասայլակով, մոտենալ, բռնել բռնակից և միասին օրորել, եթե տիկնիկին կերակրում է կամ խաղում լեզոներով, մոտենալ և նույնը կրկնել, ապա՝ կոնտակտ հաստատելու նպատակով խոսքայնացնել երեխայի գործողությունը հրահանգի տեսքով: Այն դեպքում, եթե երեխան վերցնում է լեզոն և դնում սեղանին և ոչ մի կերպ չի կատարում այլ հրահանգ, նախ մասնագետը պետք է կիրառի՝ «լեզոն վերցրու, դիր սեղանին» հրահանգը և մի քանի անգամ կրկնելուց հետո, այն փոխարինի իր առաջարկած հրահանգով:

- Միայնակ խաղի ժամանակ ցանկալի է մասնագետը թույլ խոչընդոտներ ստեղծի երեխայի համար, որպեսզի նա նկատի և փորձի դիմել մասնագետին, օրինակ՝ բուրգը կառուցելիս հատիկները պահել ձեռքի ափի մեջ, որպեսզի երեխան շփման նախաձեռնություն ցուցաբերի և մասնագետի ձեռքից վերցնի իրեն հետաքրքրող առարկան:
- Երեխայի հետ խաղալ մասնագետ-երեխա փոխադարձ կապ ապահովող խաղեր՝ տուր, վերցրու, դիր գործողություններով, օրինակ՝ «վրձինը տուր, ջուրը վերցրու, թուղթը դիր և այլն»: Կարելի է բուրգի հատիկը պահել ձեռքի ափի մեջ, որպեսզի նա դիմի և ցանկանա վերցնել այն, որպեսզի իր կատարած գործողությունը ենթադրի համագործակցություն մասնագետի հետ:
- Համագործակցությունը կարելի է զարգացնել միասին պարզեցված խաղեր խաղալով՝ գնդակ, բատմինտոն, թենիս, բասկետբոլ, խաղ պարաններով և այլն:
- Հաշվի առնելով երեխայի հոգեկան զարգացման մակարդակը, մասնագետը համատեղ ուշադրությունն ու համագործակցությունը կարող է զարգացնել սյուժետադերային խաղերի միջոցով, օրինակ՝ «Տուն-տունիկ», «Խանութ-խանութ», «Բժիշկ-բժիշկ» և այլն:

10. Վերբալ հաղորդակցման բարելավում

- Խոսքային հաղորդակցման կարևոր նախապայման է երեխայի գործողությունների հակիրճ և մատչելի մեկնաբանումը, օրինակ՝ «հիմա դու նստում ես աթոռին, բաժակը վերցնում ես, ջուր ես խմում»: Պետք է խուսափել բարդ ստորադասական նախադասություններից:

- Խոսքի զարգացման համար անհրաժեշտ է աշխատանքի ընթացքում հաճախակի կիրառել այն բառերը, որոնք երեխան արդեն գիտի և ընթացքը կազմակերպել այնպես, որ երեխան հաճախ օգտագործի այդ բառերը: Դա նաև ինքնավստահություն է տալիս երեխային իր խոսքային ունակությունների վերաբերյալ:

11. Աշխատանք ոչ ցանկալի վարքային դրսևորումների հետ

- Եթե երեխան դրսևորում է ոչ ցանկալի վարք, անհրաժեշտ է պարզել՝ ինչու է երեխան ցուցաբերում այդ վարքը, ինչ գործառույթ է այն կատարում, և փոխարինել այն մեկ այլ համարժեք գործառույթ իրականացնող վարքով: Եթե երեխան ընկնում է հատակին, հարվածում գլուխը պատին, պետք է հասկանալ՝ ինչն է նախորդում և հաջորդում դրան: Միգուցե երեխայի նման վարքի պատճառը տագնապի, անապահովության զգացումն է, իսկ որպես վարքի արձագանք մեծահասակները վազում են նրա հետևից, փորձում հարկադրաբար բարձրացնել հատակից, ուստի՝ անապահովության զգացումը նվազեցնելու և մարդկանց ոչ ցանկալի արձագանքը դադարեցնելու դեպքում, հավանաբար կդադարի նաև երեխայի վարքը: Երբ երեխան հայտնվում է անկայուն հուզական վիճակում որևէ սենյակ մտնելիս, կարևոր է հասկանալ՝ ինչն է նրան անհանգստացնում, կամ ինչ է տեղի ունեցել այդ սենյակում և, գտնելով պատճառը, մեկուսացնել այն:
- Ոչ ցանկալի վարքային դրսևորումների հետ աշխատելիս կարելի է աստիճանաբար նվազեցնել այն՝ նպաստելով վերջինիս դադարեցմանը:
- Երեխայի հետ աշխատելիս ցանկալի է, որպեսզի մասնագետը խուսափի ոչ ցանկալի վարքի ամրապնդման երևույթից. հաճախ, դրական կամ բացասական արձագանք տալով երեխայի կատարած գործողությանը, մենք նպաստում ենք վերջինիս ամրապնդմանը: Եթե մեծահասակները բարկանում են այս կամ այն արարքի համար, խրախուսում կամ ուշադրություն են դարձնում, հաճախ այդ վարքն ամրապնդվում է: Այս պարագայում ցանկալի է ուշադրություն չդարձնել, չգայրանալ, չխրախուսել անցանկալի վարքը, այլ՝ փոխարինել այն նույն պահանջունքը բավարարող մեկ այլ վարքով:

- Երեխայի հետ խոսելիս ցանկալի է լինել հստակ, վստահ, տոնը՝ հանգիստ, սակայն՝ ոչ ագրեսիվ, տագնապային, կասկակաձող և այլն: Երեխան հաճախ զգում է մեծահասակի անինքնավստահությունը, ոչ հաստատական լինելը և կարող է շահարկել նրան, իսկ զայրույթի դեպքում՝ հակադրվել:

12. Շփման և սոցիալական հմտությունների զարգացում

- Շփման հմտությունների զարգացման նպատակով նախ ցանկալի է ակտիվացնել և խրախուսել երեխայի շփման ցանկությունն ու նախաձեռնողականությունը: Իսկ վերջինիս համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի իրավիճակներ, որտեղ երեխան ակամայից կփորձի դիմել մասնագետին: Այդպիսիք են օգնություն ենթադրող իրավիճակները, օրինակ, երբ երեխան փորձում է խաղահրապարակում սահել, բայց ինքնուրույն դժվարանում է, կամ՝ ցանկանում է ջուր խմել, սակայն չի կարողանում վերցնել բաժակը, ինքնաբերաբար օգնության է դիմում և շփվում մեծահասակի հետ:
- Շփման զարգացման համար նախընտրելի են համագործակցային խաղերը՝ պարզից մինչև բարդ, որոնց մասին ներկայացվել է «համատեղ ուշադրության և համագործակցության զարգացում» ենթակետում:
- Շփման զարգացման համար բավականին արդյունավետ են շարժողական խաղերը՝ «Խաղ օղակներով», «Լաբիրինթոս», «Գնացք-գնացք», «Զիլինա», «Պահմտոցի», «Բռնոցի» և այլն:
- Շփվողականությունը հնարավոր է զարգացնել նաև տակտիլ խաղերի օգնությամբ, որտեղ երեխան անմիջապես զգում է շփումը՝ օրինակ՝ «Խնոցի-հարոցի», «Խաղ ինքնաթիռ» և այլն:
- Շփման և սոցիալական հմտությունների զարգացման համար անհրաժեշտ է երեխային ներգրավվել կենցաղային տարբեր պարզ գործողություններում, օրինակ՝ աղջիկը մայրիկին կարող է օգնել ճաշ կամ աղցան պատրաստել, տղան կարող է հայրիկին օգնել մեքենան լվանալ և այլն:
- Շփվողականության զարգացման համար ցանկալի է կենցաղում տարբեր հանձնարարություններ տալ երեխային՝ նախ իրեն ծանոթ միջավայրում, ապա՝ նաև՝ անծանոթ, օրինակ՝ «բաժակը դիր սեղա-

նին, դուռը փակիր, լույսը վառիր» և այլն:

- Շփման համար կարևոր է երեխային աստիճանաբար հարմարեցնել մարդաշատ վայրերին և հաճախ մասնակցել խնջույքների, հաճախել տարբեր զվարճանքի կենտրոններ, խաղահրապարակներ՝ խրախուսելով կենդանի հուզական շփումը:

Հուզականային ոլորտի խնդիրները և տրամադրվող հոգեբանական աջակցության սկզբունքները

Հույզը սուբյեկտի վերաբերմունքի արտացոլումն է շրջապատող աշխարհի նշանակալի օբյեկտների և երևույթների նկատմամբ: Դրանք արտացոլում են անձի վերաբերմունքն աշխարհի և հենց իր նկատմամբ, ինֆորմացիա են տալիս պահանջմունքի բավարարման կամ անբավարարության և հետագայում այն բավարարելու հնարավորության կամ անհնարինության մասին:

Հույզերը սահմանվում են որպես մարդու արձագանք, հակազդում իրավիճակին՝ ապրումների, վերաբերմունքի ձևով: Օրինակ՝ մայրիկին տեսնելիս երեխան ուրախության հույզ է արտահայտում՝ դրսևորելով իր վերաբերմունքը մոր նկատմամբ: Հոգեբանության մեջ տարբերակում են հիմնական հույզերը՝ զարմանք, զայրույթ, զգվանք, ուրախություն, տխրություն, վախ: Հիմնական հույզերի միջոցով արտահայտվում են հուզական վիճակներն ու հուզական դրսևորումները:

Երբ երեխան ընկալում է այս կամ այն առարկան կամ երևույթը, նա նաև որոշակի վերաբերմունք, հուզական ապրում է տաժում դրանց նկատմամբ. որոշ առարկաներ և երևույթներ նրան դուր են գալիս, մյուսները՝ ոչ, որոշները ուրախության զգացում են առաջացնում, մյուսները՝ զայրույթ:

Հոգեբանական աշխատանքների ընթացքում հաճախ հանդիպող դժվարություններից են հուզական ոլորտի խնդիրները, որոնք ասես խաթարում են երեխայի հոգեկան զարգացման բնականոն ընթացքը, բացասական ազդեցություն ունենում ինչպես շփման հաղորդակցման վրա, այնպես էլ՝ ուսումնական գործունեության վրա:

Երեխայի մոտ դրսևորվող հուզական խնդիրներից է բարձր տագնապայնությունը:

Տագնապը անորոշության, անհանգստության զգացում է, իսկ տագնապայնությունը՝ մարդու անձնային որակ: Տագնապը հաճախ ուղեկցվում է սրտխփոցներով, գլխացավերով, անկանոն շնչառությամբ: Տագնապայնությունը նորմայի սահմաններում կարող է դրական ազդեցություն ունենալ երեխայի գործառնության և ինքնակարգավորման

գործում՝ նպաստելով սեփական ներուժի մոբիլիզացմանը, մոտիվացիայի բարձրացմանը, սակայն բարձր տազնապայնության դեպքում երեխան դառնում է անինքնավստահ, ընկնում է նրա ինքնագնահատականը, գործողությունների ընթացքում թույլ է տալիս բազմաթիվ սխալներ, հարմարողականությունը թուլանում է և այլն: Տազնապայնության առաջացման պատճառները բազմազան են: Դրանք կարող են լինել մանկական տրավմաները, ծնող-երեխա ոչ կառուցողական փոխհարաբերությունները, սթրեսածին իրավիճակները, հիվանդությունը և այլն:

Երեխայի մոտ բարձր տազնապայնություն կարող է առաջանալ, եթե.

- երեխայի ծնողները վախեցել են նրան կորցնել հղիության ընթացքում,
- երեխայի ծնողներն իրենք իսկ տազնապային անձինք են,
- ծնողները դժգոհ են սեփական կյանքից, աշխատավարձից, ապրելակերպից,
- երեխան ապրում է կոնֆլիկտային իրավիճակում,
- երեխան ապրում է անհամապատասխան, ավելի հաճախ չափից մեծ պահանջների ներքո,
- երեխային շրջապատող միջավայրն անընդհատ նրան դնում է կախյալ վիճակի մեջ,
- երեխան շրջապատված է հակասական պահանջներով՝ դպրոցի կամ ծնողների կողմից և այլն:

Վախերն, ի տարբերություն տազնապի, առավել առարկայական են և որոշակի: Մանկական վախերը երեխաների հակազդումներն են վտանգ հարուցող իրավիճակների (իրական կամ երևակայական) կամ վտանգավոր օբյեկտների նկատմամբ, ինչն առաջացնում է նրանց մոտ անհարմարավետության զգացում, փախնելու կամ թաքնվելու ցանկություն: Վախերի սուր արտահայտվածությունը նպաստում է երեխայի սոցիալական հարմարման խանգարմանը, կենսակերպի փոփոխմանը, ոչ կառուցողական փոխհարաբերությունների, հուզական անկայուն դրսևորումների ձևավորմանը և այլն: Վախերը նույնպես հաճախ ուղեկցվում են սոմատիկ դրսևորումներով՝ գլխացավեր, գիշերամիզու-

թյուն, աղետամոլության տրակտի խանգարումներ, ինչպես նաև տիկերով, անկանոն, հավելյալ շարժումներով, քնի խանգարումներով և այլն:

Տարբերակվում է վախերի բազմաթիվ տեսակներ, որոնք իրենց հերթին բաժանվում են մի քանի խմբի.

1. «Բժշկական վախեր»-Նրանց առաջացման պատճառները կապված են ցավի զգայության հետ, որն ինքնին բացասական հուզական զգացողությունների աղբյուր է:
2. «Վախեր՝ կապված ֆիզիկական վնաս կրելու հետ»- Նշված վախի առաջացման պատճառը կապված է բնազդային պայմանավորվածություն ունեցող հակազդումների հետ:
3. «Վախը կենդանիներից և հեքիաթային հերոսներից» պայմանավորված է մտերիմ մարդու կերպարի հուզական աղճատմամբ, նրանից օտարմամբ, ինչպես նաև՝ սիրո և քնքշանքի պահանջմունքի անբավարարվածությամբ:
4. «Սոցիալ-միջնորդավորված վախեր» - Տվյալ վախերի հիմքը ինչ-որ դժբախտության և անհաջողության տագնապային ու անորոշ սպասումն է:
5. «Մահվան վախ» -Այն պայմանավորված է հիմնականում ինքնապաշտպանության բնազդով:
6. «Տարածական վախեր» - Նշված վախի առաջացման պատճառները վտանգի բնական ազդանշաններն են:
7. «Վախ սարսափ երազներից» - Նշված վախի պատճառները անցյալում ապրված սարսափի հուզական հետքերն են, որոնք պահպանվում են հիշողության մեջ և դրսևորվում երազներում:
8. Վախերն ունեն տարիքային դրսևորման առանձնահատկություններ, որոնք օրինաչափ են նշված տարիքներում և դրսևորվում են բնականոն զարգացման դեպքում: Դրանք հետևյալն են.
 - 8 ամսական՝ վախ անձանոթ մարդկանցից,
 - 1 տարեկան՝ վախ բարձրությունից, խորությունից, մենակ մնալուց,
 - 1,5 տարեկան՝ անհանգստություն մոր տևական բացակայությունից, ընտանիքում աղմկահարույց իրավիճակներից, վախ բժիշկներից, ցավից, ներարկումներից,

- 2 տարեկան՝ ծնողների կողմից պատժված լինելու վախ, վախ երթևեկության միջոցներից, ներարկումներից, կենդանիներից (գայլից),
- 3-5 տարեկան՝ վաղ նախադպրոցական տարիք՝ վախ հեքիաթի հերոսներից, ներարկումներից, ցավից, արյունից, բաժրությունից, անսպասելի ծայներից, վախ մենակ մնալուց, մթությունից, փակ տարածությունից,
- 5-7 տարեկան՝ ուշ նախադպրոցական տարիք՝ մահվան վախ, ծնողների մահվան վախ, վախ կենդանիներից, հեքիաթի հերոսներից, խորությունից, վատ երազներից, կրակից, հրդեհից, վախ հարձակումներից, պատերազմներից, վախ պատժվելուց,
- Վաղ դպրոցական տարիք՝ դպրոցից ուշանալու վախ, սխալվելու վախ, վախ քննադատություններից, դժբախտության վախ,
- Դեռահասության տարիք՝ ծնողների մահվան վախ, վախ պատերազմներից:

Վախերի դրսևորման տարիքային չափանիշները ըստ սեռի հետևյալն է.

Երեխայի տարիք	Վախերի քանակ	
	Տղա	Աղջիկ
3 տարեկան	9	7
4 տարեկան	7	9
5 տարեկան	8	11
6 տարեկան	9	11
7 տարեկան	6	9
8 տարեկան	6	9
9 տարեկան	7	10
10 տարեկան	7	10
11 տարեկան	8	11
12 տարեկան	7	8
13 տարեկան	8	9

14 տարեկան	6	9
15 տարեկան	6	7

Եթե երեխայի մոտ արձանագրվում են վախերի տարիքային և սեռային նորմայից ավել վախեր, այն արդեն ցուցանիշ է վախերի բարձր մակարդակի դրսևորման մասին:

Վախերի առավել սուր և հիվանդագին դրսևորումները ֆոբիաներն են: Եթե վախը մարդուն պաշտպանում է իրական վտանգից, ֆոբիայի դեպքում մարդը ոչ իրական վտանգ է զգում և չգիտի, թե ինչու է վախենում: Ֆոբիաները չունեն տրամաբանական բացատրություն, իռացիոնալ բնույթ են կրում: Ֆոբիաները դասվում են կաշուն վիճակների շարքին:

Ինքնագնահատական, ինքնաընկալում

Ինքնագնահատականը մարդու պատկերացումն է իր մասին՝ արտաքին տեսքի, մտավոր ունակությունների, բնավորության գծերի, արժեքների և այլն: Տարբերում են ինքնաընկալման մի քանի մակարդակներ.

1. չափազանց բարձր ինքնագնահատական:

Այն ավելի հաճախ բնորոշ է 4-6 տարեկան երեխաներին և համարվում է տարիքային օրինաչափություն և հաճախ բարձր ինքնագնահատականը հիմնավորումներ չի ունենում: Այս տարիքում երեխաների բարձր ինքնագնահատականը նպաստում է աշխարհի նկատմամբ դրական պատկերացումների, կառուցողական հարաբերությունների ձևավորմանը, նման երեխաները հեշտությամբ են հարմարվում սոցիալական միջավայրում իրենց զգում են սիրված և ընդունված:

2. համարժեք ինքնագնահատական:

Այս դեպքում երեխայի մոտ իր նկատմամբ ձևավորված է դրական վերաբերմունք, նա կարողանում է գնահատել իրեն և իր գործունեությունը, հիմնավորել սեփական կարծիքը իր մասին. «ես լավն եմ, որովհետև ես օգնում եմ մայրիկիս», «ես լավն եմ, որովհետև լավ եմ սովորում, սիրում եմ գրքեր կարդալ», «լավն եմ, որովհետև օգնում եմ ընկերներիս, նրանց հետ լավ եմ խաղում» և այլն: Սա ինքնագ-

նահատականի զարգացման բնականոն տարբերակն է:

3. փոքր-ինչ ցածր ինքնագնահատական:

Որպես կանոն, այն կապված է կոնկրետ հոգեբանական խնդրի հետ: Զրույցի ընթացքում երեխան մեկնաբանում է այսպես. «ես ոչ լավն եմ, ոչ վատը, որովհետև ես բարի եմ, երբ օգնում եմ հայրիկիս, չար եմ, երբ խաղում եմ եղբորս հետ»: Այս դեպքում խաթարված են ընտանեկան փոխհարաբերությունները: Մեկ այլ դեպքում երեխան վերլուծում է՝ «ես ոչ լավն եմ ոչ վատը, որովհետև մայրիկն ու ուսուցչուհին բղավում են ինձ վրա, երբ տառերը վատ եմ գրում, իսկ, երբ գեղեցիկ եմ գրում, նրանք ինձ սիրում են»: Այս պարագայում խաթարված են միջանձնային փոխհարաբերությունները նշանակալի մեծահասակների հետ:

4. ցածր ինքնագնահատական:

Ցածր ինքնագնահատականը կարող է լինել իրադրային՝ կապված կոնկրետ իրավիճակի հետ և կայուն, որը դրսևորվում է բոլոր իրավիճակներում և բնորոշվում է ժամանակային կայունությամբ: Այս երեխաները նշում են հետևյալ մեկնաբանությունները. «ես վատն եմ, որովհետև ինձ հետ չեն խաղում», «ես վատն եմ, որովհետև անընդունակ եմ, վատ ե սովորում», «ես վատն եմ, որովհետև գեր եմ, ցածրահասակ»: Այս դեպքում ցածր ինքնագնահատականը վտանգավոր է այնքանով, որ թույլ չի տալիս երեխաներին տեսնել իրենց հնարավորությունները և բացահայտել իրենց:

5. չափազանց ցածր ինքնագնահատական:

Այս երեխան ունենում է հարմարման լուրջ խնդիրներ, հուզական և անձնային սուր անհամաձայնություններ՝ պայմանավորված բացասական գործոնների մշտական ազդեցությամբ: Չափազանց ցածր ինքնագնահատականը կարող է նպաստել դեպրեսիաների, ներդռների զարգացմանը, ասոցիալ վարքի դրսևորմանը: Որպես կանոն, ցածր ինքնագնահատականը պայմանավորված է երեխաների անտեսվածությամբ, խիստ, ավտորիտար դաստիարակությամբ կամ գերխնամքով, երեխայի հնարավորությունների և հավակնությունների անհամապատասխանությամբ, ծնողների ոչ համարժեք սպասումներով, հուզական քաղցով և այլն:

Շատ հաճախ հանդիպող բացասական հուզական դրսևորումներից է մեղքի զգացումը, երբ երեխան ինքնակեղեքմամբ է տառապում: Պետք է նշել նաև, որ երբեմն մեղքի զգացումը նույնացվում է խղճի ձևավորման հետ: Խիղճը բարոյական արժեք է, ապրումակցման ձևավորման նախահիմք և չունի բացասական դրսևորում: Այն կարող է պայմանավորված լինել դաստիարակության ոճով, ծնող-երեխա փոխհարաբերություններով: Մեղքի զգացումը կարող է դրսևորվել անհիմն, առանց էական պատճառների, երբ ծնողները իրենց բացասական հոգեվիճակները բացատրում են երեխայի վարքով ու պահվածքով. երեխայի մոտ խարսխվում է, որ ծնողի կյանքի անհաջողությունն իր արարքների հետ է զուգակցվում: Շատ հաճախ երեխան մեղքի զգացում է ունենում ծնողների ամուսնալուծության պարագայում, երբ ծնողները չեն մեկնաբանում բաժանման պատճառները երեխան կարող է իրեն, իր արարքները, իր ոչ լիարժեք լինելը պատճառ բերել: Հոգեբանական աջակցությունը տվյալ պարագայում սկսվում է ծնողի հետ խորհրդատվությունից, ինչպես նաև՝ երեխայի հետ պատճառահետևանքային կապերի վերլուծելությունից:

Այսպիսով՝ սրանք էին հուզականային ոլորտում հաճախ հանդիպող հուզական դրսևորումները, որոնց հաճախ հանդիպում է մասնագետը հոգեբանական աջակցություն իրականացնելիս:

Աշխատանքային սկզբունքներ և մոտեցումներ՝ ուղղված վախերի հաղթահարմանն ու տագնապայնության նվազեցմանը

Հոգեբանական աջակցություն տրամադրելիս հիմնական հենակետ պետք է հանդիսանան ստորև նշված աշխատանքային սկզբունքներն ու մոտեցումները:

Վախերի հաղթահարմանն ուղղված հոգեբանական աջակցությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1. Վախերի հետ հոգեբանական աշխատանքներ իրականացնելիս նախ անհրաժեշտ է մանրամասն տեղեկատվություն հավաքել վախի առաջացման և դրսևորման պատճառների մասին՝ ինչպես և երբ

է այն առաջացել, ինչ արձագանք են տալիս ծնողները դրան և ինչպես է դրսևորվում այն երեխայի մոտ:

2. Աշխատանքի հաջորդ քայլը խնդրի խոսքայնացումն է: Երեխան որքան լիարժեք է արտահայտվում, պատմում իր վախի մասին, այնքան ավելի է նվազում հուզական լարվածությունը՝ նպաստելով վախի գիտակցմանը, վերապրմանն ու վերաիմաստավորմանը: Օրինակ՝ մահվան վախերի և հարազատի կորստի դեպքում աշխատանքը սկսվում է *կորստի զգացումի և վշտի վերապրումից*, երբ մասնագետը փորձում է անդրադառնալ կորստի զգացմանը՝ հնարավորություն տալով խոսքայնացնել և առարկայացնել այն: Ինչպես նաև քննարկվում է «ավարտի» գաղափարը՝ համեմատելով բնության երևույթների հետ. աշնանը տերևները ընկնում են, որպեսզի գարնանը նորերը դուրս գան և այլն: Այնուհետև իրականացվում է *հրաժեշտի ծիսակարգը*՝ երեխան հրաժեշտի նամակ է գրում մահացողին կամ ինքն է ընտրում՝ ինչպես հրաժեշտ տալ նրան: Իսկ այս ամենից հետո ամրապնդվում է *շարունակելիության գաղափարը*, որ ֆիզիկական մահը դա վերջ չէ և մեր հիշողություններում ու երազներում մենք կարող ենք հանդիպել նրանց:
3. Շատ հաճախ աշխատանքի նախնական փուլում ցանկալի է իրականացնել վախ առաջացնող պատճառի մեկուսացում կամ նվազեցում, օրինակ՝ եթե երեխան վախենում է որևէ ֆիլմից, ապա՝ անհրաժեշտ է որոշ ժամանակահատված հրաժարվել տվյալ ֆիլմի դիտումից կամ, եթե հասակակիցներից մեկը վախեցնում է նրան իր պատմություններով, ցանկալի է ժամանակավորապես դադարեցնել կամ նվազեցնել շփումը այդ երեխայի հետ:
4. Վախի հաղթահարման կարևոր սկզբունքներից է «իրականության և երևակայության հստակ սահմանազատումը», քանզի վախերը հաճախ սրվում են, երբ երեխան դժվարանում է ոչ իրականը, հորինվածը տարբերակել իրականությունից և, «ապրելով իր հորինված աշխարհում», հավատում է դրան, ազդվում և վախենում այդ ամենից: Մասնագետը աշխատանքի ընթացքում սահմանագիծ է դնում իրականի և երևակայականի միջև, մուլտֆիլմերի, ֆիլմերի և իրական կյանքի, հեքիաթի և վավերագրական պատմությունների միջև:

Նշված սկզբունքն արտացոլող մեթոդիկաներից է «խառնված» պատմությունների վերլուծությունը, որտեղ իրականն ու հորինվածը համատեղված են, և երեխայի հետ միասին մասնագետը փորձում է հասկանալ, թե որը կարող է լինել իրական, որը՝ ոչ իրական:

5. Հաջորդ կարևոր քայլերից է «այստեղ և հիմա» սկզբունքի ամրապնդումը: Քանի որ վախերը հիմնականում ուղեկցվում են ֆանտազիաներով և վառ երևակայությամբ, «այստեղ և հիմա» սկզբունքը կիրառվում է երեխայի իրականության սահմանը հստակեցնելու նպատակով, օրինակ՝ աշխատանք իրականացնելիս երեխային հարց է տրվում՝ ինչ ենք մենք հիմա անում կամ մասնագետը ինքն է նշում, թե ինչով են նրանք այս պահին զբաղված:
6. Ցանկալի աջակցություն է նաև վախերի վերափոխումը, վերաձևավորումը և իմաստազրկումը, երբ մասնագետը փոխում և արժեզրկում է վախի վերաբերյալ ունեցած պատկերը: Այդպիսի խաղ վարժություններից է ջրի մեջ կամ փրփուրի վրա վախի օբյեկտը նկարելը: Այն բավականին արդյունավետ է, քանզի ջրի մեջ պատկերը կայուն չէ, վերափոխվող է, ինչն էլ ասես փոփոխում է վախի օբյեկտի արտացոլանքը անգիտակցական կամ ենթագիտակցական մակարդակներում: Կենդանիներից և հեքիաթի հերոսներից վախերը շտկելու արդյունավետ տեխնիկաներից է «Դարձրու ծիծաղելի» խաղ-վարժությունը: Առաջարկվում է երեխային նկարել վախի օբյեկտը, այնուհետև այն դարձնել առավել ծիծաղելի:
7. Անհրաժեշտ մոտեցում է նաև մասնագետի և մեծահասակների կողմից երեխաների և նրանց սեփական ուժերի, կատարած գործողությունների հանդեպ վստահության ցուցաբերումը, քանզի երեխան հաճախ վախենում է, երբ տեսնում ու զգում է թերհավատություն՝ ուղղված իր անձի հանդեպ (անցանկալի է սահմանափակել երեխայի վարքն ասելով՝ «վայ, մութ է, չգնաս, կամ՝ վայ, լուցկին չվերցնես, մատդ կայրես»): Կարևոր է նաև երեխային վտանգի զգացում չներշնչել ոչ այնքան վտանգավոր իրավիճակներում, ինչպես նաև՝ չքննադատել վախերն ու դրանց դրսևորումները՝ հնարավորություն տալով «դուրս հանել», վերապրել դրանք: Օրինակ, եթե երեխան բարձրաձայնում է, որ վախենում է մթությունից կամ իր մահճակա-

լի տակ հրեշ է պառկած, ապա ապարդյուն է քննարկել, որ այնտեղ ոչինչ չկա, քանզի դրանք գոյություն ունեն իր իրականության մեջ և, հերքելով դրանք, կկորցնենք երեխայի վստահությունը:

8. Աշխատանքների ընթացքում կիրառվում է նաև «վախի օբյեկտի ուսումնասիրում և ընտելացում» սկզբունքը, օրինակ, եթե երեխան վախենում է ասեղից, լուցկուց, ապա նրանց կիրառմամբ կարելի է խաղեր կազմակերպել և այլն: Մթության ընտելացման վարժություն է «գանձերի որոնումը», երբ երեխան լապտերիկով «ուղևորվում է» մութ սենյակ գանձեր փնտրելու: Աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է ընտելացնել մթությանը՝ աստիճանաբար նվազեցնելով լուսավորությունը:
9. Վախերի հաղթահարման համար ցանկալի նախապայման է նաև երեխայի ինքնապաշտպանության, սոցիալական ինքնուրույնության զարգացումը և ուժեղ կողմերի խրախուսումը, ծնողներից սոցիալական կախվածության նվազեցումը: Ծնողներից կախյալության դեպքում երեխան մշտապես օգնություն է սպասում նրանցից և նրանց բացակայության դեպքում ունենում է անապահովության զգացում՝ վախերի ուղեկցմամբ, իսկ ինքնուրույնության զարգացումը թույլ է տալիս վստահել սեփական ուժերին և, սեփական ռեսուրսները ակտիվացնելով, ելքեր որոնել վախ առաջացնող իրավիճակներում:
10. Արդյունավետ է նաև վախ առաջացնող իրավիճակի դրական հանգուցալուծման հնարը, վախի օբյեկտի վերաբերյալ դրական պատկերի ստեղծումը, բացասականը դրականով վերափոխումը: Հեքիաթների, դերային խաղերի, նկարչության միջոցով մասնագետը կարող է օգնել երեխային բացասական մտապատկերներն ու հույզերը փոխարինել դրական պատկերներով՝ ցանկալի որակներ վերագրելով տվյալ իրավիճակին: Այդպիսի հեքիաթներից է «Մթնաշխարհը», որում հեքիաթային և դրական է ներկայացվում գիշերն ու մութը, մթության մեջ խաղաղ է, հանգիստ, աստղազարդ, գեղեցիկ և այլն:

Բարձր տագնապայնություն ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքը կրում է ոչ կարճատև բնույթ և իրականացվում է 3 հիմնական ուղղություններով.

1. աշխատանք ինքնագնահատականի հետ (քանզի պետք է նշել, որ բարձր տազնապայնությունը հաճախ ուղեկցվում է ցածր ինքնագնահատականով)
2. աշխատանք՝ ուղղված մկանային լարվածության թուլացմանը (ռելաքսացիոն վարժություններ)
3. հուզական դրսևորումների ինքնակառավարման հմտությունների զարգացում, մասնավորապես՝ երեխայի համար խնդրահարույց իրավիճակներում:

Համարժեք ինքնագնահատականի ձևավորման և զարգացման համար ցանկալի է կիրառել հետևյալ մոտեցումները.

1. Ծնող-երեխա փոխհարաբերություններում ավտորիտար ոճի նվազեցում, որը երեխային հնարավորություն կտա ինքնարտահայտվել, արտահայտել սեփական կարծիքն ու ինքնադրսևորվել:
2. Մեծահասակի պահանջների և սպասումների համապատասխանեցում երեխայի իրական հնարավորություններին:
3. Երեխայի ոչ ցանկալի վարքային դրսևորումների, սխալների քննարկում՝ խուսափելով քննադատել երեխայի անձնային առանձնահատկությունները: Աշխատանքների ընթացքում հաճախ երեխային պետք է դիմել անունով, խրախուսել նույնիսկ նրա ամենափոքր ձեռքբերումները և մատնանշել դրանք նաև այլ երեխաների ներկայությամբ: Բայց խրախուսանքն ու գովեստները պետք է իրական և տեղին լինեն, քանզի երեխաները զգում և բացասաբար են արձագանքում կեղծիքին: Ինքնագնահատականի բարձրացման արդյունավետ մեթոդիկաներից է «Հայելի»-խաղը. երեխային առաջարկվում է երկու հայելի և տրվում է հրահանգ նախ նայել առաջին հայելու մեջ ու պատմել «իրական ես-կերպարի» մասին (ինչպիսին է նա այժմ, ինչ դրական և բացասական կողմեր ունի): Մասնագետի միջամտությամբ շեշտվում է երեխայի դրական կողմերը և ամրապնդվում այն տարբեր իրավիճակներում: Աշխատանքը քննարկվում է նաև ծնողի հետ՝ կրկին ու կրկին շեշտը դնելով դրական կողմերի շեշտադրման վրա: Այնուհետև առաջարկվում է երկրորդ հայելին և տրվում է հրահանգ պատկերացնել «իդեալական ես-կերպարը» (ինչպիսին նա

կցանկանար լինել): Այնուհետև մասնագետի հետ միասին քննարկվում են դրան հասնելու միջոցներն ու ճանապարհները:

4. Երեխային այլոց հետ համեմատելու սովորության նվազեցում: Ցածր ինքնագնահատական ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքներում արդյունավետ են խմբային խաղ-վարժությունները, օրինակ՝ «Հաճոյախոսություններ» խաղը, երբ մասնակիցները մատնանշում են միմյանց դրական կողմերը՝ հնարավորություն ստանալով սեփական անձը դիտարկել դիմացինի աչքերով:

Բարձր տազնապայնության հաղթահարման մյուս կարևորագույն ուղղությունն է մկանային լարվածության թուլացումը

1. Վերջինիս իրականցման համար կիրառվում են շնչառական վարժություններ, մարմնի մերսում, շփում (շատ կարևոր է նաև գերծմնալ սեռական զգացողություններ արթնացնելուց, հատկապես դեռահասության տարիքում): Բավականին արդյունավետ ռելաքսացիոն վարժություն է երաժշտության ներքո խմորով կամ ալյուրով աշխատանքը, ջրի մեջ նկարելը և այլն:
4. Հուզական դրսևորումների ինքնակառավարման հմտությունների զարգացումը բավականին կարևորում է բարձր տազնապայնության պարագայում, քանզի տվյալ դեպքում երեխան չի կարողանում հասկանալ իր հոգեվիճակը, թե ինչ է իր հետ կատարվում և հենց այդ անորոշությունն էլ սրում է հոգեվիճակը: Հուզական դրսևորումների ինքնակառավարումը ձևավորելու և զարգացնելու համար երեխային պետք է ներքաշել խնդրի համընդհանուր քննարկմանը: Երեխան պետք է կարողանա գիտակցել, որ ինքը միայնակ չէ իր խնդրում, և անվախ է ոչ թե նա, ով ոչնչից չի վախենում (չկան անվախ մարդիկ), այլ նա, ով կարողանում է գիտակցել և հաղթահարել սեփական վախն ու տազնապալ: Հուզական դրսևորումների գիտակցման համար անհրաժեշտ է խոսքայնացնել և շոշափելի դարձնել դրանք. տրվում է հանձնարարություն նկարել սեփական տազնապային հոգեվիճակը և խոսքայնացնել այն:
5. Կարելի է նաև խաղարկել երեխայի կյանքում տազնապ առաջաց-

նող իրավիճակները և փորձել քննարկել այն երեխայի հետ. մի քանի անգամ այն կրկնելով՝ տազնապայնությունը նվազում է, օրինակ՝ խաղարկվում է, թե ինչպես է երեխան դաս պատասխանում խստաբարո ուսուցչի ներկայությամբ: Եվ առհասարակ նմամատիպ դերային խաղերի իրականացումն իդեալական է համարվում սեփական հուզական դրսևորումների գիտակցման, հետևաբար նաև՝ կառավարման ու շփման գործում:

6. Ներքին դրական ռեսուրսների ակտիվացումը և հարմարողականության բարձրացումը սկսվում է ինքնավերլուծությունից և ներհայեցողությունից, երբ որոշակի մեթոդիկաների շնորհիվ երեխան ինքն իր համար վեր է հանում իր իսկ դրական որակներն ու առանձնահատկությունները և փորձում դրանց միջոցով հարմարվել ստեղծված սթրեսային իրավիճակին: Այդպիսի մեթոդիկաներից են *«Ինքնանկարը»*, երբ երեխան նկարում է *ինքն իրեն և պատմում, թե ինչպիսին է ինքը, որոնք են իր դրական և բացասական կողմերը*: Այնուհետև, հիմնվելով դրական կողմերի վրա, վերջիններս ավելի զարգացնելով փորձում ենք խաղարկել սթրեսային իրավիճակը: Պետք է նշել նաև կրկնվող սթրեսների դեպքում երեխան հարմարվում է այդ իրավիճակին և այն դադարում է սթրեսային լինելուց: Հարմարումն առավել արագ ու դյուրին է իրականանում ուժեղ նյարդային համակարգի տիպ ունեցող երեխաների մոտ:
7. Հարմարման գործընթացում մեծ դեր են խաղում նաև երեխաների անձնային առանձնահատկությունները՝ ուժեղ և թույլ բնավորություն, կամային որակներ, անցյալի փորձ, գիտելիքներ, մտավոր և ֆիզիկական պատրաստվածություն: Հարմարումն ավելի դյուրին դարձնելուն նպաստում է նաև փորձի փոխանակումը, երբ երեխային ելքեր է առաջարկվում ինչպես իր, այնպես էլ ուրիշների նախկինում ունեցած փորձերի օրինակով:
8. Հուզական և վարքային կարգավորումն ուղղված է սեփական վարքն ու հակազդումները ինքնակառավարել սովորելուն, քանզի սթրեսային իրավիճակներում բարձրանում է տազնապայնության մակարդակը, հույզերն ավելի բուռն են ընթանում և այլն: Հույզերի և

վարքի ինքնակարգավորման լավագույն մեթոդիկաներից է «Երկու աթոռները», երբ մի աթոռին նստում է երեխան, իսկ մյուսին՝ մասնագետը և դերային խաղի միջոցով մասնագետը հայելային արտացոլմամբ խաղարկում է երեխայի հուզականորեն հագեցած վարքը: Երեխան ասես կողքից տեսնում է իրեն և առաջարկում վերջինիս շտկման ուղիներ:

Վարքային ոլորտում դրսևորվող խնդիրները, աշխատանքային մոտեցումներն ու հնարները

Վարքային ոլորտը, սերտորեն փոխկապակցված լինելով մյուս հոգեբանական ոլորտների հետ, առանձնահատուկ է նրանով, որ ներկայանում է որպես անձի ներքին դրսևորումների արտահայտում: Այն արտահայտամիջոց է, որի օգնությամբ երեխան դրսևորում է իր հուզական աշխարհը և հաղորդակցվում արտաքին աշխարհի հետ: Ուստի վարքային խնդիրների դեպքում հոգեբանական աջակցություն ցուցաբերելիս, մասնագետը աշխատանք պետք է իրականացնի ինչպես վարքի արտաքին կողմի, այնպես էլ այդ վարքը պայմանավորող հուզական և հաղորդակցման ոլորտներում առկա խնդիրների հետ: Վարքային խնդիրների հաղթահարմանն ուղղված հոգեբանական աջակցություն իրականացնելիս մասնագետը գլխավորապես անդրադառնում է հետևյալ վարքային դրսևորումներին.

- ագրեսիայի արտահայտման մակարդակ,
- ինքնապաշտպանական հմտություններ,
- կոնֆլիկտային իրավիճակներում վարքային ոճի նախընտրություն,
- սեռադերային վարքի առանձնահատկություններ,
- վարքային հակումներ և սովորույթներ:

Ագրեսիայի արտահայտման մակարդակ: Հոգեբանը, հետազոտելով երեխայի ագրեսիայի արտահայտման մակարդակը, ագրեսիայի տեսակներն ու դրսևորումները, առաջացման պատճառներն ու հետևանքները, տրամադրում է համապատասխան հոգեբանական աջակցություն:

Ագրեսիան մի ուժ է, որի միջոցով մենք հաղթահարում ենք մեր առջև ծառացած խոչընդոտներն ու դժվարությունները, սակայն հաճախ այն դուրս է գալիս իր սահմաններից՝ վնաս պատճառելով թե մեզ, թե շրջապատի մարդկանց: Ագրեսիվ գործողությունները ճնշող, բռնի, գիտակցական կամ ենթագիտակցական մոտիվացիա ունեցող այնպիսի գործողություններն են, որոնց նպատակը ուրիշին վնաս պատճառելն է: Ագրեսիան տարբերակվում է ըստ հետևյալ տեսակների.

- **Վերբալ և ֆիզիկական ագրեսիա:** Վերբալ ագրեսիայի օրինակներ

րից են հայիոյանքը, խոսքային վիրավորանքը, անեծքը, իսկ ֆիզիկական ագրեսիայի դրսևորումներից են ծեծը, ֆիզիկական հարձակումը և այլն:

- **Ռիդիդ և քողարկված ագրեսիա:** Ռիդիդ ագրեսիան անմիջականորեն ուղղված է մարդուն, քողարկված ագրեսիան կարող է լինել բամբասանքի, կատակների, խայթոցների տեսքով:
- **Արտաքին ագրեսիա և ինքնաագրեսիա:** Արտաքին ագրեսիան ուղղված է արտաքին աշխարհին, իսկ ինքնաագրեսիան՝ ինքն իրեն, օրինակ՝ ինքնաժխատումը, ինքնամեղադրումը, ինքնախարազանումը:
- **Պաշտպանական և նախահարձակ ագրեսիա:** Պաշտպանական ագրեսիան որևէ մեկի ագրեսիվ գործողությունների պատասխանն է, իսկ նախահարձակ ագրեսիայի դեպքում անձն ինքն է առաջինը դիմում ագրեսիվ գործողությունների:
- **Հիմնավորված և չհիմնավորված ագրեսիա:** Հիմնավորված ագրեսիայի դեպքում կա իրական պատճառ, իսկ չհիմնավորված ագրեսիան դիտվում է որպես անհամապատասխանություն իրավիճակին:
- **Թշնամական և միջնորդավորված ագրեսիա:** Թշնամական ագրեսիայի դեպքում այն ուղղված է կոնկրետ անձին, իսկ միջնորդավորված ագրեսիայի դեպքում անձը հետապնդում է այլ շահեր, ագրեսիան ուղղակի միջոց է այլ նպատակին հասնելու համար:
- **Կոնստրուկտիվ և դեստրուկտիվ ագրեսիա:** Կոնստրուկտիվ ագրեսիան ուղղված է սոցիալական հարմարմանը, սթրեսային իրավիճակների, խոչընդոտների հաղթահարմանը, դեստրուկտիվ ագրեսիան ունի կազմաքանդող և ավերող բնույթ, երբ անձն ինքն իրեն կամ շրջապատի մարդկանց նշանակալի փաստ է պատճառում: Դեստրուկտիվ ագրեսիայի օրինակներից են գողությունները, սպանությունները, բռնաբարությունները և այլն:
- **Պասիվ և ակտիվ ագրեսիա:** Պասիվ ագրեսիայի դեպքում անձը ոչինչ չանելով, ցածր ակտիվություն դրսևորելով, արհամարհելով և անտեսելով է արտահայտում իր ագրեսիան, իսկ ակտիվ ագրեսիայի դեպքում կոնկրետ փաստաբեր ակտիվություն է ծավալում:
- **Իրավիճակային և անձնային ագրեսիա:** Իրավիճակային ագրեսիա

սիան դրսևորվում է կոնկրետ իրադրություններում, իսկ անձնային ագրեսիան մարդու բնավորության մի մասն է և արտահայտվում է միմյանցից տարբեր իրավիճակներում և կյանքի տարբեր ժամանակահատվածներում:

Երեխայի ագրեսիայի դրսևորման պատճառները կարող են զանազան լինել: Հարկ է թվարկել դրանցից կարևորները.

- 1. Վախի զգացումը, անվստահությունը շրջապատող աշխարհի նկատմամբ:** Փոխվստահության մթնոլորտի բացակայությունը երեխայի և այլ մարդկանց միջև հաճախ նպաստում է ագրեսիայի առաջացմանը:
- 2. Երեխայի ցանկությունների դեպրիվացիան, պահանջմունքների անբավարարվածությունը, ֆիզիկական ագրեսիայի, արգելքների կիրառումը այլ մարդկանց կողմից:** Մշտօրինակ զրկանքները, պատիժները, ֆիզիկական բռնությունները, տարրական՝ սննդի, հագուստի, կացարանի պահանջմունքների անբավարարվածությունը, երեխայի մոտ ագրեսիվ դրսևորումների պատճառ կարող է դառնալ: Այսպես հաճախ լինում է մանկատան երեխաների, ինչպես նաև՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների մոտ:
- 3. Երեխայի անձնական տարածքի պաշտպանումը, ինքնապաշտպանությունը ագրեսիվ վարքի միջոցով:** Այս դեպքում երեխան զգում է, որ դիմացինը իրեն կարող է վնաս հասցնել՝ լինի դա ֆիզիկական, բարոյական, թե նյութական, և դիմում է ագրեսիվ գործողությունների:
- 4. Ծնողների վարքի ընդօրինակումը:** Եթե մայրը կամ հայրը տագնապային են, մարդկանց չեն վստահում, ունեն ագրեսիվ դիրքորոշում մարդկանց և աշխարհի նկատմամբ, դա ազդում է երեխայի վրա, և նրա վարքում ու գործողություններում դրսևորվում են տագնապի ու ագրեսիվության բռնկումներ:
- 5. Ծնողների վեճերը, ոչ բարենպաստ ընտանեկան հարաբերությունները:** Երեխաների հոգեկանի վրա բացասաբար են ազդում ծնողների վեճերը, որոնց դեպքում երեխան վտանգի զգացում է ունենում, որին արձագանքում է ագրեսիվ վարքով:
- 6. Իր անձի հանդեպ ուշադրություն գրավելու ցանկությունը:** Հա-

ճախ անտեսված, չսիրված երեխաները ագրեսիայի միջոցով փորձում են ուշադրության արժանանալ ծնողերի կողմից կամ պատժել նրանց՝ իրենց նկատմամբ ոչ ուշադիր վերաբերմունքի համար:

7. Խանդի և նախանձի զգացումը: Այս պատճառը դրսևորվում է այն ընտանիքներում, որտեղ փոքր երեխայի ծնունդը խանդ է առաջացրել մեծի մոտ՝ դառնալով ագրեսիայի դրսևորման պատճառ: Կամ, երբ ծնողները հաճախ են համեմատում իրենց երեխային մյուս երեխաների հետ՝ մատնանշելով նրա բացասական կողմերը՝ նման կերպով նախանձ առաջացնելով նրա մոտ:

8. Ցածր ինքնագնահատականը, ինքնահաստատման ձգտումը: Այն դեպքում, երբ երեխան ունի չափազանց ցածր ինքնարժեք, իր մասին դրական կարծիք ստեղծելու համար դիմում է ագրեսիվ գործողությունների՝ կարծես ապացուցելով բոլորին, որ ինքն ուժեղ է և ազդեցիկ:

9. Երեխայի վարքի վրա բացասաբար են ազդում նաև համակարգչային խաղերը, ֆիլմերը, որոնցում ագրեսիան, թշնամանքը, դաժան տեսարանները շատ են, երեխաները կրկնօրինակում են այն:

Հաճախ երեխաները ագրեսիվ վարք են դրսևորում, որովհետև չգիտեն խնդրի լուծման ավելի կառուցողական եղանակներ, օրինակ՝ երեխան կարող է դիմել ֆիզիկական ուժի կիրառմանը, քանի որ դժվարանում է խոսքով արտահայտել իր ցանկությունը, կամ՝ վարքաձևը փոխելով հաղթահարել դժվարությունը: Այս դեպքում, դերային խաղերի, պատմությունների միջոցով, վարքի տարբեր օրինակներ քննարկելով, երեխային կարելի է սովորեցնել կոնֆլիկտի լուծման այլ եղանակներ: Կարևոր է նաև նշել, որ ցանկալի չէ բուռն հուզական արձագանքներ տալ ագրեսիվ վարքագիծ ցուցաբերելիս, երբեմն անհրաժեշտ է նաև անտեսել այն, վերջինիս վրա երեխային չկենտրոնացնելու, չֆիքսելու նպատակով: Ագրեսիվ վարքագծի դրսևորման դեպքում հոգեբանական աջակցություն ցուցաբերելիս հաճախ կիրառվող տեխնիկա է հույզերի, զայրույթի պարպումը բռնցքամարտի տանձիկի միջոցով, որն ասես հանդիսանում է ագրեսիայի արտահայտման միջոց:

Ինքնապաշտպանական հմտություններ: Այս դեպքում հոգեբանական աջակցությունը ենթադրում է ինքնապաշտպանական հմտու-

թյունների արտահայտվածության, կոնֆլիկտային իրավիճակում վարքային ոճի նախընտրության, հակազդման ձևերի, պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրում և աշխատանք նշված ոլորտներում: Երեխան պրոբլեմային, կոնֆլիկտային իրավիճակներում նախընտրում և կիրառում է այս կամ այն վարքային ոճը, ռազմավարությունը, այդ թվում՝ կարելի է առանձնացնել հետևյալները.

- 1. Երեխան արձագանքում է խուսափելով և մեկուսանալով:** Պրոբլեմային իրավիճակներում երեխան մեկուսանում է, փակվում իր մեջ, չի ցանկանում շփվել ոչ ոքի հետ, հրաժարվում է երբեմն սնունդից, խաղերից և այլն: Այս երեխաները չեն սիրում վիճել, վեճի դեպքում թողնում հեռանում են կամ փախչում: Այս երեխաներն ունեն ցածր ինքնագնահատական, իսկ ինքնապաշտպանական հմտությունները թույլ են զարգացած:
- 2. Երեխան արձագանքում է հարձակվելով և ագրեսիայով:** Խնդրահարույց իրավիճակներում երեխան արտահայտում է զայրույթ, ագրեսիա, որը հաճախ ուղեկցվում է բղավոցներով, հատակին պառկելով, մարդկանց հարվածելով և այլն: Այս երեխաները հաճախ են հայտնվում կոնֆլիկտային իրավիճակներում և ցուցաբերում են անտեղի ինքնապաշտպանություն, նույնիսկ վտանգի թույլ ազդանշաններն ընկալում են որպես հարձակում իրենց անձի նկատմամբ:
- 3. Երեխան դիմում է մեծահասակների օգնությանը:** Այս երեխաները հաճախ կոնֆլիկտի մեջ հայտնվելիս չեն կարողանում ինքնուրույն հարթել այն և դիմում են ծնողի, մանկավարժի կամ այլ մեծահասակի օգնությանը: Նրանց ինքնապաշտպանական հմտությունները նույնպես զարգացած չեն:
- 4. Երեխան հարմարվում է իրավիճակին:** Այս դեպքում կոնֆլիկտային իրավիճակներում երեխան ընդունում է պարտվողի կարգավիճակը և հարմարվում նրա հետ: Նա չի ըմբոստանում, երբ վիրավորում են իրեն և հարմարվում է այդ դերի հետ, պատրաստ է զիջել դիմացինին, միայն թե կոնֆլիկտի մեջ չհայտնվի:
- 5. Երեխան իրեն է հարմարեցնում իրավիճակը:** Այս դեպքում երեխաները կոնֆլիկտային իրավիճակում ձգտում է հասնել իրենց շահերի բավարարմանը՝ ի վնաս դիմացինի հետաքրքրությունների:

Նրանք պայքարում են քողարկված ձևով և անմիջական կոնֆլիկտի մեջ չեն մտնում դիմացինի հետ: Այս երեխաները վստահ են, որ իրավացի են և հնարավոր չէ այլ տարբերակ, նույնիսկ իրենց սխալները չեն կարողանում ընդունել, նրանց համար կարևորը հաղթանակն է, հաճախ կիրառում են սուտը, խորամանկությունը, դիմացինին հրահրում են վատ արարքների և քայլերի, հրաժարվում է երկխոսությունից:

6. Երեխան պատրաստ է փոխզիջման: Երեխան պատրաստ է հարթել կոնֆլիկտը, եթե դիմացինը փոխզիջման կզնա, նա կհրաժարվի իր շահերից, եթե դիմացինն էլ պատրաստ լինի դրան: Նա շարժվում է «դու՝ ինձ, ես՝ քեզ» սկզբունքով:

7. Երեխան գնում է համագործակցության: Նման երեխաները խնդրահարույց իրավիճակներում փորձում են ընդհանուր եզրեր գտնել դիմացինի հետ, լսել նրա կարծիքը, սակայն պաշտպանում են նաև իրենց շահերը: Նրանք չեն խուսափում կոնֆլիկտներից, սակայն և չեն նախաձեռնում այն, ձգտում են հաշտվել զրույցի և ոչ թե ագրեսիայի միջոցով՝ խնդրի վերաբերյալ իրենց և դիմացինի կարծիքները քննարկելով: Այս դեպքում նրանք առանձնանում են ինքնապաշտպանական հմտությունների զարգացվածությամբ:

Սեռադերային վարքի առանձնահատկություններ: Հոգեբանական աջակցություն իրականացնելիս անհրաժեշտ է ուսումնասիրել նաև երեխայի սեռադերային վարքի դրսևորումները, կանացիության և առնականության ատրիբուտները: Երեխայի հոգեկան առողջությունը, միջավայրի հետ նրա փոխհարաբերությունները, հարմարման գործընթացը, ինքնաընկալումը մեծապես կախված են նրա մոտ ձևավորված սեռային նույնականությունից, սեռադերային վարքի առանձնահատկություններից: Սեռադերային վարքը ձևավորվում է սեռային դաստիարակության, սեռային սոցիալականացման ընթացքում և հաճախ սեռային սոցիալականացումը կարող է պատճառ դառնալ ոչ համարժեք սեռադերային վարքի ձևավորման համար: Տարբերակվում են սեռային սոցիալականացման հետևյալ վարկածները.

1. Ծնողները տարասեռ երեխաներին վերաբերում են այնպես, որ նրանց վարքը համապատասխանի ընդհանուր սպասումներին՝

տղաներին խրախուսում են եռանդունության, մրցողունակության համար, աղջիկներին՝ հոգատարության, խոնարհության: Հնարավոր է նաև այլ տարբերակ՝ օրինակ՝ եթե ծնողները երազել են աղջիկ ունենալ և ծնվել է տղա, նրանք ենթագիտակցորեն կարող են խրախուսել տղայի մոտ որոշ կանացի վարքագծերի դրսևորումը, ինչի հետևանքով տղան հետագայում կդրսևորի ոչ համարժեք սեռադերային վարք:

2. Բնածին սեռային տարբերությունների հետևանքով տղաներն ու աղջիկները իրենք են տարակերպ խթանում ծնողներին՝ դրանով իսկ իրենց հանդեպ ստանալով տարբեր վերաբերմունքներ: Այս պարագայում հնարավոր է տղան իր կանացիակերպ ֆիզիկական կառուցվածքի շնորհիվ միջավայրից ստանա համապատասխան սպասումներ ու վերաբերմունք և հետագայում ձևավորվի ոչ համարժեք սեռադերային վարք:
3. Երեխաները ծնողներին ընդօրինակելու շնորհիվ վերցնում են այս կամ այն ծնողի սեռադերային վարքի մոդելը: Այս դեպքում, եթե օրինակ՝ հայրը դրսևորում է կանացիակերպ վարքագիծ, տղան կարող է ընդօրինակել այդ վարքը՝ նույնպես դրսևորելով ոչ համարժեք սեռադերային վարք: Կամ, եթե չի ընդունում հոր գերառնականությունը, ատում է նրան, այս դեպքում նա սկսում է դրսևորել հոր վարքին հակառակ կանացի վարքագծեր:

Սեռադերային վարքի խախտումները որոշելու համար կարելի է հենվել մի քանի հատկանիշների վրա, որոնք դրսևորվում են վաղ հասակում.

1. **Խաղերի, խաղալիքների ընտրությունը:** Տեղեկատվական է այն, որ երեխան գերադասում է հակառեկ սեռի խաղալիքներ՝ մերժելով իր սեռինը: Կարևոր է նաև խաղի ժամանակ երեխայի ընտրած դերը:
2. **Հասակակիցների հետ փոխհարաբերությունները:** Մտածելու տեղիք է տալիս, երբ երեխան գերադասում է հակառակ սեռի ընկերներ, իրեն պահում նրանց նման՝ միաժամանակ չցանկանալով շփվել իր սեռի երեխաների հետ:
3. **Շփումը մեծահասակների հետ:** Այս դեպքում երեխան գերադասում

է հակառակ սեռի մեծահասակների միջավայր, երբեմն դիտվում է մանկական սիրահարվածություն սեփական սեռի ծնողի հանդեպ:

4. **Արտաքինը փոխելու ձգտումը:** Երեխաները ձգտում են հակառակ սեռի հազուստներ կրել, ամաչում են իրենց արտաքին տեսքից:
5. **Անբավարարվածություն իրենց սոցիալական դերով:** Այն արտահայտվում է հակառակ սեռի ապրելաոճի, սոցիալական կարգավիճակի հիացմունքով, անունը փոխելու ցանկությամբ:
6. **Երազներ, երազանքներ:** Այս երեխաները երազներում և երազանքներում հանդես են գալիս հակառակ սեռի դերում:
7. **Վարքային ոճ:** Երեխաները նախընտրում են հակառակ սեռի վարքաձևեր, խոսքում և շարժումներում նկատվում են հակառակ սեռին բնորոշ ատրիբուտներ:

Այս հատկություններն առանձին վերցրած, կամ մի քանիսի համադրությամբ դեռ չեն խոսում սեռադերային վարքի խախտումների մասին, դրա օգտին վկայում է թվարկած հատկությունների ինտենսիվ, համակցված և ավելի վաղ արտահայտումները:

Վարքային բացասական սովորությունները: Վարքային բացասական սովորույթները գործում են ի վնաս մարդու անձնային արդյունավետության, հաջողությունների, բարեկեցության և առողջության: Բացասական սովորույթներից են ծխելու, իր շուրջը թափփելու, ամեն ինչ վաղվան թողնելու սովորությունը, ուշանալու սովորությունը, խաղամոլությունը, շոպոգոլիզմը, շատակերությունը, համակարգչի առջև երկար ժամանակ անցկացնելը, առանց լվացվելու հաց ուտելը, հեռախոսով անդադար խոսելը, եղունգները, շրթունքները կրծելը, հայիոյանքներ կիրառելը, դեղամոլությունը և այլն:

Վերոնշյալ վարքային դրսևորումներն ու առանձնահատկությունները թույլ են տալիս ընդհանուր պատկերացում կազմել երեխայի վարքի մասին: Ընդգծելով վարքային խնդիրների հիմնական շրջանակը և բացահայտելով նրանց դրսևորման պատճառները՝ մասնագետը ցուցաբերում է համապատասխան հոգեբանական աջակցություն:

Այսպիսով հաշվի պետք է առնել, որ վարքային խնդիրները սերտորեն փոխկապակցված են հուզականային և հաղորդակցման խնդիրների հետ և նրանց աջակցությունը պահանջում է համապարփակ մո-

տեցում: Վարքային խնդիրների հետ աշխատելիս հոգեբանը պետք է կառուցի աշխատանքի սխեմա, որտեղ ընդգրկված կլինեն տվյալ վարքը առաջացնող բոլոր պատճառները, միայն մեկ պատճառի հետ աշխատանքը դժվար թե բերի ցանկալի արդյունքի:

Հոգեբանական աջակցության հնարներ և մոտեցումներ՝ ուղղված վարքային խնդիրների հաղթահարմանը

1. Վարքի ինքնակարգավորում, համբերատարության ձևավորում:

Մասնագետը, որսալով այնպիսի իրավիճակներ, որտեղ երեխան շատ հետաքրքրված է ինչ-որ իրով և շատ է ցանկանում այն, պետք է փորձի երկարաձգել այդ իրի ձեռք բերումը՝ երեխային տարբեր հրահանգներ տալով: Օրինակ, երբ երեխան շատ է ցանկանում բացել խաղերով լի տուփը, մասնագետը խնդրում է երեխային փակել դուռը, աթոռը մոտեցնել սեղանին, նստել և սպասել մինչև մասնագետն էլ կնստի աթոռին և միասին կբացեն տուփը: Կամ՝ նմանատիպ վարժություն կարելի է կիրառել՝ երեխային խնդրելով հետաքրքրության պահին հաշվել մինչև 20-ը, ապա՝ շարունակել աշխատանքը, մեկ այլ դեպքում՝ հնարավոր է նրան խնդրել ուղղակի լուռ նստել, մինչև կստանա իր ցանկալի իրը: Վարքի կարգավորման մեկ այլ վարժություն է «Շշուկից մինչև աղմուկ» խաղը, երբ 1 թիվը լսելիս, երեխաները պետք է խոսեն շշուկով, 2 թվի դեպքում՝ լռեն, 3-ի ժամանակ՝ բարձր բղավեն: Դա կարելի է իրականացնել նաև թվերի փոխարեն գույների կամ այլ պարագաների քարտերով: Նման վարժությունների թվին են դասվում «Թզուկներ-հսկաներ», «Կենդանիների վարքի նմանակում» խաղերը և այլն: Հետաքրքիր խաղ վարժություններից է տարբեր երևույթների և իրավիճակների նմանակումը՝ 1-ի դեպքում՝ երեխաները նմանակում են քամու շարժումները, 2-ի դեպքում՝ դառնում են քար, 3-ի դեպքում՝ թիթեռ են որսում, 4-ի դեպքում՝ ինքնաթիռի նման սավառնում են, ապա՝ վայրէջք կատարում, 5-ի ժամանակ՝ քայլում են ուղիղ գծով և այլն:

2. Դիմելու, ցանկությունը խոսքով արտահայտելու կարողության ձևավորում: Մեծ հետաքրքրության պահին, երբ երեխան ցանկա-

նում է առանց թույլատվության վերցնել առարկան, մասնագետը պայմանավորվում է երեխայի հետ, որ նա դիմի, խոսքով հայտնի իր ցանկությունը, որից հետո միայն ստանա խաղալիքը: Եթե երեխան դժվարանում է, մասնագետը պետք է հուշի նրան, թե ինչ պետք է ասել, իսկ ասելուց հետո անպայման խրախուսել՝ ասելով «այ տես դու ասեցիր՝ ինչ ես ուզում և ես տալիս եմ այն քեզ»:

3. Ոչ ցանկալի արարքի խոսքայնացում, գիտակցում: Երբ երեխան ոչ ցանկալի արարք է կատարում՝ վարագույրն է ձգում, հարվածում է ընկերոջը և այլն, մասնագետի խրատների, քննադատության, դաստիարակչական մոտեցման դեպքում այն կարող է ավելի արտահայտվել: Ուստի, ցանկալի է հարցերի միջոցով խթանել, որպեսզի երեխան ինքը վերլուծի իր արարքի հետևանքները: Օրինակ՝ մեծահասակը կարող է հարցնել. «Ինչ կլինի, եթե դու ձգես վարագույրը», երեխան կարող է առաջարկել տարբեր պատասխաններ. «կպատռվի, կպոկվի», այնուհետև հաջորդում է հարցը՝ «իսկ ինչ կարելի է անել, որպեսզի չպատռվի», երեխային հնարավորություն է ընձեռնվում ներկայացնել իր տարբերակները: Այս հնարի էությունն այն է, որ, երբ երեխան իր խոսքով բացատրում է սեփական արարքի հետևանքները և առաջարկում այդ վարքը դրսևորելու տարբերակներ, կարծես գիտակցում և ընդունում է իր սխալը և, քանի որ ինքն է որոշում կայացնում, չի հրաժարվում իր որոշումից:

4. Վարքի օրինակների քննարկում՝ առանց այլ երեխաների վարքի հետ համեմատության, տեսահոլովակների, մուլտֆիլմերի հերոսների վարքի մեկնաբանում: Ցանկալի է, որ մասնագետը, ծնողները կամ այլ ռեֆերենտային մեծահասակներ երեխայի հետ միասին քննարկեն իր կամ հասակակիցների դրական և բացասական վարքագծի օրինակները՝ առանց համեմատելու նրանց վարքը միմյանց հետ՝ «տես նա ավելի ճիշտ վարվեց, քան դու»: Նախընտրելի է, որ օրինակները վերլուծի ոչ թե մեծահասակը, այլ՝ երեխան, այս դեպքում մեծահասակը ուղղորդում է առավելապես իր հարցերով և ոչ թե խորհուրդներով: Եթե երեխան խիստ բացասական է վերաբերվում իր վարքի վերլուծություններին, կարելի է դա անել պրոյեկտիվ

մեթոդիկաների օգնությամբ: Երբ մեծահասակի քննադատությունն ուղղված է լինում երեխայի անձին, նա ավելի սուր է ընդունում այն և դժվարանում է տարանջատել վարքային դրսևորումները անձնային որակներից, ինչի հետևանքով տատանվում է նրա ինքնագնահատականը, իսկ, երբ քննարկվում է նրա կողմից դրսևորվող կոնկրետ վարքաձևը, երեխան չի անձնայնացնում այն և ավելի չեզոք ու հանգիստ է վերաբերվում վերջինիս քննարկումներին:

5. Դրական գծերի շեշտադրում և զարգացում, ցանկալի վարքագծի խրախուսում:

Ցանկալի է նկատել երեխայի դրական վարքաձևերը և զարգացնել դրանք՝ ի հակակշիռ ոչ ցանկալի վարքային դրսևորումների: Օրինակ՝ եթե երեխան հոգատարություն է դրսևորում, (իսկ մենք փորձում ենք հաղթահարել նրա անտարբերությունը), ցանկալի է այնպիսի իրավիճակներ ստեղծել, որտեղ նա այդ վարքը հաճախ կդրսևորի՝ խնամի քույրիկին, գնա խանութ, օգնի տեղափոխել աթոռները մի սենյակից մյուսը և այլն: Նախընտրելի է քննադատությամբ չամրապնդել ոչ ցանկալի վարքը և ընդհակառակը՝ խոսքային և կամ առարկայական խրախուսանքով ամրապնդել՝ ոչ ցանկալի վարքին հակակշիռ դրական վարքը: Խրախուսանքը ցանկալի է լինի իրական, համապատասխանի նրա կարողություններին, օրինակ, երբ երեխան հաճախ հարվածում է եղբորը և ինչ-որ մի իրավիճակում գրկում է նրան, պետք է որսալ այդ պահը և ցույց տալ նրան, թե նա որքան է սիրում իր եղբորը, քանի որ գրկում է և հոգ տանում նրա մասին:

6. Զբաղվածության տրամադրում:

Շատ հաճախ զբաղվածության տրամադրումը, ժամանակի հագեցվածությունը, հետաքրքրությունների շրջանակների լայնացումը դրական իմաստով փոխհատուցում է այն առատ էներգիան, որը կա երեխայի մեջ, կարծես նա ժամանակ չի ունենում անցանկալի արարքներ գործելու համար:

7. Վարքի վրա կենտրոնացման նվազեցում:

Հաճախ մեծահասակները կենտրոնանում են երեխայի խնդրի վրա՝ տրամադրելով այն ուշադրությունը, որը նա ցանկանում է՝ դրանով իսկ ամրապնդելով այն: Օրինակ, եթե երեխայի լացի կամ բղավոցների դեպքում

մեծահասակը հաճախ բավարարում է նրա ցանկությունը, հաջորդ անգամ երեխան կրկին կդիմի լացի օգնությանը: Այս դեպքում ցանկալի է շեղել երեխային այլ հետաքրքրություններով, խնդրել նրան խոսքայնացնել իր ցանկությունները կամ փորձել անտեսել լացն ու կամակորոությունները: Սովորաբար երեխան լաց է լինում, քանի որ դժվարանում է գտնել խոսքային և այլ արտահայտչամիջոցներ: Ուստի, հաճախակի դրսևորվող կամակորոությունների դեպքում ցանկալի է առօրյայում հաճախակի ստեղծել այնպիսի իրավիճակներ, որտեղ երեխան դիմի, խոսքով հանգիստ արտահայտի այն, ինչ ցանակնում է և խրախուսել այդ վարքը՝ «տես, երբ դու հանգիստ ասում ես, թե ինչ ես ցանկանում, դու ստանում ես այն»:

8. Վարքը պատիժներով, ծեծով ամրապնդելու գործողությունների նվազեցում: Պատիժներն ու ծեծը գրեթե միշտ նպաստում են ոչ ցանկալի վարքագծի ամրապնդմանը: Իհարկե որոշ դեպքերում երեխան կարող է դադարեցնել իր վարքը, սակայն հաճախ այն կարող է փոխարինվել մեկ այլ՝ ոչ ցանկալի վարքով, կամ՝ ապրումների տեսքով կուտակվել և դառնալ հուզական նոր խնդիրների առաջացման պատճառ:

9. Վարքի փոխարինում այլ նախընտրելի վարքով: Այս դեպքում մասնագետը պետք է գտնի տվյալ վարքագծի առաջացման պատճառը և փոխարինի այն այլընտրանքային նախընտրելի վարքով: Օրինակ, եթե բացահայտվում է, որ երեխան ագրեսիա է ցուցաբերում, երբ տեսնում է ինչ-որ մեկին, երեխայի հետ միասին պետք է փնտրել և իրականացնել այլ նախընտրելի վարքագծեր՝ չնկատել նրա ներկայությունը, ասել այդ մարդուն այն, ինչ նյարդայնացնում է իրեն, հաշտվել նրա հետ, մտածել այլ բաների մասին և այլն: Դա կարելի է անել նկարչության, ավազաթերապիայի, դրամաթերապիայի և այլնի օգնությամբ:

10. Ներգրավվածություն կենցաղի մեջ, պիտանելիության զգացումի բարձրացում: Երբ երեխային ներգրավվում ես կենցաղային գործերի մեջ, նա իրեն մեծ է զգում, նույնանում է մեծահասակի հետ, ուստի, սկսում է դրսևորել մեծին բնորոշ ոչ ագրեսիվ ու կոնֆլիկտային

վարք: Նա կարծես հասունանում է, ինչպես նաև իրեն օգտակար է զգում: Օրինակ, երբ աղջիկը օգնում է մայրիկին աղցան կամ խմորեղեն պատրաստելիս, նա նույնանում է մոր հետ և դրսևորում է մայրիկին բնորոշ վարքաձևեր: Առհասարակ ծնողների վարքը օրինակ է ծառայում երեխայի համար և հաճախ նա կրկնում է նրանց անցանկալի վարքագծերը (եղունգներ կրծելը, համակարգիչ դիտելը և այլն), ուստի, այստեղ կարևոր է նաև ծնողների հետ աշխատանքը՝ սեփական վարքագծի կարգավորման գործում:

11. Ռեֆերենտային անձի վարքի ընդօրինակում: Ցանկալի է, որ երեխան հաճախ շփվի իրենից մեծ, օրինակելի վարք ունեցող ռեֆերենտային անձի հետ, որը իր վարքով, արարքներով դրական օրինակ կծառայի նրան:

12. Որոշում կայացնելու ունակության ձևավորում, ընտրության հնարավորության տրամադրում, պրոբլեմային իրավիճակներում ելքերի քննարկում: Ինչպես նշվեց, հաճախ երեխայի ոչ ցանկալի վարքագծի և ագրեսիվության պատճառը արտահայտվելու անկարողությունն է, երբ երեխան չգիտի ինչպես արտահայտվել տվյալ իրավիճակում ցանկալի հանգուցալուծման համեմատ: Օրինակ, երբ նա դժվարանում է կողմնորոշվել՝ ինչպես խոսքով բացատրել դիմացինին իր ցանկությունը, հարվածում է, դիմում ֆիզիկական ուժի օգնությամբ: Այս տարբերակը չի պահանջում երկար մտածմունքներ, պրոբլեմային իրավիճակներից դուրս գալու ելքերի որոնումներ: Ուստի, շատ կարևոր է երեխայի մոտ զարգացնել պրոբլեմային իրավիճակից դուրս գալու կարողությունը, այլընտրանքներ փնտրելու և գտնելու ունակությունը: Երբեմն երեխան դժվարանում է որոշումներ կայացնել, չի կարողանում ընտրել, որովհետև իր փոխարեն դա արել են մեծահասակները՝ խոչընդոտելով նրա ինքնուրույնության ձևավորմանը, նպաստելով անպաշտպանության զգացումի առաջացմանը, հետևաբար՝ երեխան խնդրահարույց իրավիճակներում ապավինում է մեծահասակի օգնությանը, իսկ, երբ մեծահասակը իր կողքը չէ, խուճապի է մատնվում և ոչ ցանկալի վարք է դրսևորում: Ուստի, երեխայի մոտ ցանկալի է

զարգացնել կոնֆլիկտային իրավիճակներում ելքեր գտնելու կարողությունը, ինքնուրույնությունը, որոշում կայացնելու ունակությունը:

13. Համագործակցելու կարողության զարգացում: Հաճախ ոչ ցանկալի վարքի պատճառը համագործակցելու կարողության թույլ արտահայտվածությունն է, երբ երեխան չգիտի՝ ինչպես խաղալ, ինչպես ընկերանալ, ինչպես գրուցել դիմացինի հետ և այլն: Այս դեպքում էլ հարկ է զարգացնել նրա համագործակցելու կարողությունը, շփման հմտությունները:

14. Դերային խաղերի իրականացումը նպաստում է վարքային դրսևորումների փոփոխմանը: Երեխաները, խաղարկելով անցանկալի վարքագծերը, առաջարկում ու խաղարկում են ստեղծված իրավիճակի դրական լուծման մի քանի տարբերակներ:

15. Վարքի պատճառահետևանքային կապերի բացահայտում և շտկում, պատճառների մեկուսացում:

Ագրեսիվ և հակադրվող վարքագծի դեպքում նախ պետք է գնահատել այն իրավիճակը, որտեղ երեխան դրսևորում է այդ վարքը. պարզել, որ դեպքում է ցուցաբերում ագրեսիվություն, երբ, ում ներկայությամբ, ինչպիսի իրավիճակ է նախորդում դրան, ինչպես են ծնողներն ու շրջապատի մարդիկ արձագանքում այդ վարքագծին: Օրինակ՝ երեխան հակադրվող վարք է ցուցաբերում, իսկ ծնողները նախատում են՝ ներքուստ մտահոգվելով և ակնկալելով, որ նա կդրսևորի առավել անցանկալի վարք: Այս դեպքում ցանկալի է խնդրել ծնողին դրսևորել հուզական կայունություն, փորձել չքննադատել երեխային՝ բացատրելով, որ երեխան հայտնվել է դժվարին իրավիճակում և պետք է օգնել նրան հաղթահարել այդ խնդիրները: Սովորաբար այս դեպքերում ծնողներն ունենում են ամոթի զգացում երեխայի վարքագծի պատճառով, նույնանում են երեխայի հետ և նրանց թվում է, որ իրենց երեխան չի կարող նման վարք դրսևորել, որ դա անթույլատրելի է, սակայն, երբ մասնագետը նշում է, որ նման վարքագծի համար չի քննադատում ծնողին և ոչ էլ երեխային համարում է «անդաստիարակ», ծնողների լարվածությունը նվազում է և նրանք իրենց հավելյալ միջամտություններով չեն խոչընդոտում

աշխատանքին:

16. Խոսքի և վարքագծի հաստատունություն: Ազդեսիվ վարք ցուցաբերող երեխաների հետ աշխատելիս ցանկալի է խոսել հստակ, հաստատուն, առանց երկմտանքի և վստահ, հակառակ դեպքում՝ նա զգում է դիմացինի անկարողությունը և փորձում շահարկել այն: Օրինակ, երբ երեխան փախչում է դասասենյակից, իսկ ուսուցիչներն ու մասնագետները բղավելով հետևում են նրան, երեխան կարող է առավել անցանկալի վարք դրսևորել՝ ընկնել հատակին, իսկ, երբ մեծահասակները հավելյալ բացասական մեկնաբանություններ են հնչեցնում նրա վարքի վերաբերյալ, երեխան ավելի է զայրանում և անկանխատեսելի արարքներ գործում: Տվյալ պարագայում ցանկալի է նախ բացասական արձագանքներ չտալ երեխայի վարքագծին, առավել ևս՝ անձին, ապա որևէ մեկը փորձի գնալ նրա հետևից՝ հրահանգներ չտալով նրան այդ զայրույթի պահին: Երեխան չպետք է զգա, որ ինչ-որ մեկը ցանկանում է նրան սաստել կամ ցույց տալ իր հեղինակությունը: Օրինակ, երբ երեխան ներս մտնելով սենյակ, առանց թույլատվության վերցնում է առարկաները, բացում սառնարանի դուռը ուշադրություն գրավելու կամ մեծահասակին զայրացնելու համար, կարելի է մոտենալ և միասին զննել առարկաները, վերցնել և խոսել այդ առարկաների մասին, միասին բացել սառնարանի դուռը, տեսնել՝ ինչ կա այնտեղ և այլն: Իսկ, երբ նա փոքր-ինչ հանդարտվում է, գտնել նրա հետաքրքրությունը և առաջարկել զբաղվել դրանով:

17. Ազդեսիայի պարպում: Ազդեսիայի բարձր մակարդակի դեպքում հոգեբանական աշխատանքներ իրականացնելիս մասնագետը նախ պետք է թույլ տա երեխային պարպել այդ ազդեսիվ էներգիան՝ իր նախընտրելի միջոցներով: Կարելի է դա անել սպիտակ թուղթը ամբողջությամբ խզեցնելով, մկրատով այն մանր կտրատելով, թուղթը այրելով, պլաստիլինը սեղմելով, մասնատելով, բարձին հարվածելով, կամ երեխայի համար նախընտրելի այլ տարբերակով, որը կարելի է որոշել երեխայի հետ միասին:

18. Վարքագծի փոխարինում մեկ այլ կառուցողական վարքագծով:

Ագրեսիվ վարքագծի դեպքում պետք է հասկանալ՝ ինչ պահանջմունք է երեխան ցանկանում բավարարել և փոխարինել այն այնպիսի վարքով, որը ագրեսիայի տարրեր չի պարունակում՝ միևնույն ժամանակ թույլ տալով բավարարել այդ պահանջմունքը: Օրինակ՝ երեխան թռչում է տեղից, ինչ-որ իր վերցնում սենյակից և սկսում ծամել կամ պատռել: Այս դեպքում պետք է նախ սենյակում չտեղադրել այնպիսի իրեր, որոնք կարող են վնասակար լինել երեխայի առողջության համար, ապա՝ տալ երեխային զբաղվածություն, վերանայել սեփական արձագանքները, և իհարկե՝ հասկանալ՝ արդյոք երեխային դուր է գալիս ծամելու պրոցեսը, թե՛ առարկայի համը: Նման դեպքում ծամելու պահանջմունքը բավարարելու համար կաելի է տալ մաստակ, իսկ պատռելու ցանկությունը նվազեցնելու համար միասին թղթեր կտրատել:

19. Համագործակցություն այլ մասնագետների հետ: Երբեմն լինում են դեպքեր, երբ վարքային խնդիրները այնպիսին են, որ անհրաժեշտ է դեղորայքային միջամտություն և բնականաբար՝ պետք է համագործակցել նյարդաբանի և հոգեբույժի հետ:

Վերջաբան

Ամփոփելով հոգեկան զարգացման խանգարումներ և հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաներին տրվող աջակցության հիմնական սկզբունքներն ու առանձնահատկությունները՝ հարկ է նշել, որ սույն ձեռնարկը եզակի ուղեցույց է մասնագետների համար ինչպես զարգացման խանգարումների, այնպես էլ հուզավարքային և հաղորդակցման խնդիրների հետ աշխատելիս:

21-րդ դարում, պայմանավորված գիտատեխնիկական զարգացումներով, տեղեկատվության մեծ հոսքով, փոխհարաբերություններում կենդանի շփման նվազեցման և գործունեության ավտոմատիզացման միտումով և այլ գործոններով, դժվարանում են բնականոն զարգացման և զարգացման խանգարումների սահմանագծումը, երեխաների հետ իրականացվող հոգեբանական աշխատանքների հստակ նպատակադրումը և քայլերի հաջորդականության որոշումը:

Ուստի, աշխատանքները կազմակերպելիս ցանկալի է հիմնվել ոչ թե երեխայի հիվանդության ախտորոշման, այլ նրա առանձնահատկությունների և ներուժի վրա: Երբ առաջնահերթություն է դառնում երեխայի հարմարումը սոցիալական միջավայրում և հասարակության լայն շերտերում, ակամայից ասես անէանում են խնդրով կամ խանգարումներով պայմանավորված երեխայի թույլ կողմերը և շեշտադրվում է նրա ուժեղ կողմերի զարգացումը:

Այս ձեռնարկը գրվել է հանուն այն երեխաների, ովքեր ունեն աշխարհին «ընկալելու» և դրան հարմարվելու դժվարություններ, հանուն այն ծնողների և մասնագետների, ովքեր ջանում են աշխարհին այդ երեխաներին ավելի հասանելի և մոտ դարձնել:

Հուսով ենք՝ հեղինակների կողմից սիրով և նվիրումով գրված այս գիրքը համարժեք արձագանք կստանա ընթերցողների սրտերում:

Գրականություն

1. Անտոնյան Ս. Ա. Համակարգչային համախտանիշի դրսևորումը հոգեխոսքային զարգացման հապաղման դեպքում, «Դար-21» գիտական հանդես, Երևան, 2017:
2. Անտոնյան Ս. Ա. Մոմի լույսը ուշադրության կենտրոնացմանը նպաստող գործոն, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդես, Երևան, 2016:
3. Անտոնյան Ս. Ա. Սեռադերային վարքի կայացման դինամիկան, Երևան, 2004
4. Ասրյան Լ. և ուրիշներ, Մանկավարժահոգեբանական աջակցության ձեռնարկ, (1) Երևան, 2018:
5. Ասրյան Լ. և ուրիշներ, Մանկավարժահոգեբանական աջակցության ձեռնարկ, (2) Երևան, 2018:
6. Агаш Ф., Введение в психологическую теорию аутизма. М., 2006.
7. Алявина Е.А., Морозова С.С., Морозова Т.И. Аутизм: практические рекомендации для родителей. М., 2012.
8. Аникеева Н.П., Обучение школьников способам общения. Психологический климат в коллективе. М., 1989
9. Афолина А.В., Груздева Н.В. «Пойми меня и действуй правильно!». Иваново, 2005
10. Баенская Е.Р., Помощь в воспитании детей с особым эмоциональным развитием. М., 2007
11. Божович Л. И., Проблемы формирования личности. М., 2001
12. Бурменская Г.А., Карабанова О.А., Лидерс А.Г. Возрастно-психологическое консультирование: Проблемы психологического развития детей. М., 1990.
13. Возрастные особенности психического развития детей /Под ред. И.В.Дубровиной, М.И.Лисиной/. М., 1982.
14. Выготский Л.С., Вопросы детской психологии. Санкт-Петербург, 1997.
15. Выготский Л. С., Психология развития человека. М., 2005.
16. Годовикова Д. Б., Влияние общения со взрослыми на общение детей со сверстниками . Исследования по проблемам возрастной и педагогической психологии. М., 1980.
17. Годовикова Д. Б., Соотношение активности детей в общении со взрослым и в исследовании новых предметов. Общение и его влияние на развитие психики дошкольника . М., 1974.
18. Диагностика и коррекция психического развития дошкольников. / Под

- ред. Я.Л. Коломинского/. М., 1973.
19. Додонов Б.И., Эмоция как ценность. М., 1978 .
 20. Изард К.Э., Психология эмоций. СПб., 1999.
 21. Ильин Е. П., Эмоции и чувства. СПб., 2011.
 22. Карвасарская И. Б., В стороне. Из опыта работы с аутичными детьми. М., 2003.
 23. Кулагина И.Ю., Возрастная психология: развитие ребенка от рождения до 17 лет. М., 1999.
 24. Лебединский В.В., Нарушения психического развития в детском возрасте. М., 2004.
 25. Лейтес Н. С., Принцип развития в психологии. М., 1978.
 26. Леонтьев А. Н., Деятельность. сознание. личность. М., 1975.
 27. Мещерякова С. Ю., Поведение ребенка в незнакомой обстановке в присутствии близкого взрослого. Общение и его влияние на развитие психики дошкольника . М., 1974.
 28. Монтессори М., Помоги мне это сделать самому. М., 2000.
 29. Пиаже. Ж., Речь и мышление ребенка. М., 1994.
 30. Рубинштейн С. Л., Избранные философско-психологические труды. М., 1997.
 31. Симонов П. В., Эмоциональный мозг. Физиология. Нейроанатомия. Психология эмоций. М., 1981.
 32. Чебыкин А. Я., Мельничук И.В., Генезис эмоциональных особенностей у детей разного возраста и пола. Одесса, 2004.
 33. Шадриков В. Д., Введение в общую психологию: эмоции и чувства. М., 2002
 34. <http://psyznaiyka.net/view-rech.html?id=razvitie-rechi>
 35. <https://nsportal.ru/nachalnaya-shkola/obshchepedagogicheskie-tehnologii/2011/11/09/psikhologicheskie-osobennosti-detey>
 36. <http://puzyaka.ru/advice/raznoye/razvitie-rebenka-ot-0-do-3-let/t35941>
 37. <http://www.logoakademia.ru/0-3/>
 38. <http://psihomed.com/deti-s-zpr/>
 39. <https://www.kp.ru/guide/zpr.html>

